ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան 2014

Հեղինակային խումբ

Արթուր Պողոսյան, ղեկավար, գլխավոր խմբագիր (ՀՀ վարչական դատարանի դատավոր, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի ավագ դասախոս, ի.գ.թ., դոցենտ)

Արայիկ Ղազարյան (Արդարադատության ակադեմիայի դասախոս, իրավապաշտպան, մարդու իրավունքների հարցերով փորձագետ)

Համազասպուհի Գրիգորյան (ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, փորձագետ)

Լուսինե Սարգսյան (փորձագետ)

Հետազոտությունը և գրքի հրապարակումն իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Հետազոտությունում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են հեղինակային խմբին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետներին:

/Ա.Պողոսյան, Ա.Ղազարյան, Հ.Գրիգորյան, Լ.Սարգսյան
Իրավունքների և ժողովրդավարության տուն ՀԿ:.-Երևան.: «Ասողիկ», 2014.- 144 էջ:

Հետազոտությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կարգավիճակին, կազմավորմանը, իրավազորություններին, գործունեության կարգին և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն վերաբերող արդի հիմնախնդիրներն ընթացիկ սահմանադրաիրավական բարեփոխումների ու Հայաստանի Հանրապետության գործող դատական օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո, ինչպես նաև դրանց լուծման հայեցակարգային ուղիները և օրենսդրության կատարելագործման կոնկրետ առաջարկները: Սույն հետազոտության շրջանակներում ներկայացվում է նաև օրարերկրյա փորձը:

Հետազոտությունը կարող է օգտակար լինել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, դատավորների, փաստաբանների, դասախոսների, ինչպես նաև միջազգային կառույցների համար:

ISBN 978-92-9235-100-7

© Հեղինակային խումբ, 2014
© OSCE, 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն.....5

Գ Լ Ո Ւ Խ 1......9

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում Արդարադատության խորհրդին վերաբերող իրավանորմերի կատարելագործումը.....9

§1. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով հռչակված տեսլականը և զարգացման հիմնական ուղղությունները.....9

Գ Լ Ո Ւ Խ 2.....19

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված բարեփոխումներն ու զարգացման ուղիները՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու բնագավառում:.....19

§1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմնախնդիրները.....19

§2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը.....32

§3. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքը և դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը.....56

§4. Արդարադատության խորհրդի վերջնական որոշումների հետ կապված հիմնահարցերը.....68

Գ Լ Ո Ւ Խ 3.....61

Արդարադատության խորհրդի որպես դատարան գործելու գործառույթին և նրա որոշումների վերջնական, բողոքարկման ենթակա չլինելուն վերաբերող հիմնահարցերը 82

§1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման վերլուծություն.....82

§2. Օտարերկրյա պետությունների փորձի համեմատական ուսումնասիրությունը:.....97

Ա. Արդարադատության խորհուրդները և դրանց տարբեր մոդելներն եվրոպական երկրներում՝ ըստ լիազորությունների շրջանակի:.....97

Բ. Դատավորներին կարգապահական պատասխանատվության հիմքերի վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերը.....104

Գ. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացակարգերի վերաբերյալ միջազգային նորմերը.....111

Դ. Արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման իրավունքի մասին միջազգային նորմերը.....117

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ.....121

ՀԱՎԵԼՎԱԾ 1.....134

ՀԱՎԵԼՎԱԾ 2.....135

ՀԱՎԵԼՎԱԾ 3.....136

ՀԱՎԵԼՎԱԾ 4.....137

ՀԱՎԵԼՎԱԾ 5.....138

ՀԱՎԵԼՎԱԾ 6.....139

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները սկիզբ հանդիսացան Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համար: Պահպանելով 1995 թվականի Սահմանադրությամբ նախատեսված դատական իշխանության հայեցակարգը՝ սահմանադրական բարեփոխումներն ուղղվեցին արդեն ստեղծված համակարգի կատարելագործմանը:

Իրավական և դատական բարեփոխումների առաջնահերթ խնդիրն արդար և արդյունավետ դատական իշխանության կայացումն էր:

Սահմանադրական բարեփոխումներից հետո իշխանությունների բաժանման և դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ էր արդիականացնել դատարանների գործունեությունը և դատավորների կարգավիճակի հիմնարար հարցերը կանոնակարգող օրենսդրությունը, ապահովել Արդարադատության խորհրդի անկախությունը գործադիր իշխանությունից այն հաշվով, որպեսզի վերջինս ի զորու լինի երաշխավորել դատական իշխանության ինքնուրույնությունը:

2007 թվականի փետրվարի 21-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը: Այս կոդիֆիկացված ակտի ընդունմամբ լուծվեցին մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես, առաջին անգամ համակարգային ձևով կարգավորվեցին դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները, որոնք նախկինում կարգավորվում էին առանձին օրենքներով («Արդարադատության խորհրդի մասին», «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ), ամրագրվեցին դատավորների անկախության լրացուցիչ երաշխիքներ, էապես փոխվեց վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը, ըստ որի՝ վճռաբեկ դատարանի հիմնական գործառույթներից մեկը դարձավ օրենքի միատեսակ կիրառման ապահովումը, ստեղծվեց գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու կոչված մասնագիտացված դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, կազմավորվեց վարչական վերաքննիչ դատարանը, ձևավորվեցին դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը և Դատարանների նախագահների խորհուրդը, ստեղծվեց դատավորների թեկնածուների պատրաստման դպրոց (Դատական դպրոց), որի նպատակը դատավորների շրջանակը որակյալ մասնագետներով համալրելն է:

Դատաիրավական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով 2009 թվականի ապրիլի 21-ին ստորագրվեց «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողութ-

յունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությունը, որի առաջնային նպատակներ սահմանվեցին՝ անկախ, հանրության առջև հաշվետու, թափանցիկ և մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության և ռազմավարության բարելավումը:

Չանտեսելով կատարված բարեփոխումների արդյունքում գրանցված առաջընթացը և արդյունքները՝ դրանք չեն կարող բավարար և ամբողջական համարվել, քանի որ դեռևս լուծում չեն ստացել բազմաթիվ խնդիրներ:

Այսպես, թեև սահմանադրական փոփոխություններից հետո ընդունվեցին մի շարք նոր օրենսդրական ակտեր, այդուհանդերձ, դատաիրավական բարեփոխումներն ընդհանրապես և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը՝ մասնավորապես, ամբողջությամբ չլուծեցին առկա խնդիրներից ամենակարևորը՝ արդար և արդյունավետ դատական իշխանության ապահովումը: Այդ խնդրի որոշ դրսևորումներ դեռևս առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակներում: Ընդ որում, անկախության սահմանափակումները թե՛ արտաքին, թե՛ ներքին ներգործության հետևանք են, իսկ դրանց պատճառներն ունեն թե՛ գործառութային, թե՛ կառուցակարգային բնույթ:

Բացի այդ, դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներ չեն կենսագործվել, որի հիմնական պատճառը համապատասխան ֆինանսական միջոցների անբավարարությունն էր: Մասնավորապես, դրանք են՝ դատական և դատախազական արխիվների վարման արդիականացմանը, դատախազությունում վարվող վիճակագրության և փորձաքննությունների որակի բարելավմանը, հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության համար շենքային պայմանների ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանություն ապահովող դատական համակարգի ու օրենսդրության առկայությունը և դրանցով պայմանավորված՝ իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և արդյունավետ արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակած ամեն մի պետություն:

Նշված համատեքստում Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումներն անհրաժեշտ է կատարել նախապես հստակ սահմանված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան: Արդյուն-

քում, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատվեց **Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը** (այսուհետ նաև՝ Ծրագիր)՝ համաձայն 1-ին հավելվածի, և Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկը՝ համաձայն 2-րդ հավելվածի: Նույն կարգադրությամբ ստեղծվեց նաև Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի աշխատանքային խումբ:

Այնուհետև, այդ Ծրագրին հաջորդիվ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն հրամանագրով ձևավորվեց **սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով**՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից:

Նույն հրամանագրի 4-րդ կետով Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին հանձնարարվեց՝

1) մինչև 2014 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը.

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տրվելուց հետո՝ տասն ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված սահմանադրական բարեփոխումների նախագիծը:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակվեց և 2014 թվականի մարտ ամսին հանրության դատին ներկայացվեց **Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը**[1]: Այնուհետև, 2014 թվականի հոկտեմբերի 14-ին նույն մասնագիտական հանձնաժողովի նիստում հաստատվեց **Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը**[2] **(այսուհետ նաև՝ Հայեցակարգ),** որն ներկայացվեց Հանրապետության Նախագահին:

1. Հիմք՝ http://www.justice.am/storage/uploads/A_00.pdf:
2. Հիմք՝ http://www.justice.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner.14.10_.pdf:

Վերը նշվածի համատեքստում սույն աշխատության արդիականությունը և նշանակությունն իրավունքի զարգացման ներկայիս գործընթացում կասկածից վեր է, քանի որ ՀՀ արդարադատության խորհրդի ձևավորման ու իրավազորություններին վերաբերող սահմանադրաիրավական և օրենսդրական հիմնախնդիրները, միջազգային իրավական չափանիշներին համապատասխան դատական իշխանության ինքնակառավարման երաշխիք հանդիսացող և նոր սկզբունքներով կազմավորվող արդարադատության խորհրդի անհրաժեշտությունն առ այսօր շարունակում են մնալ իրավական հանրության ուշադրության կիզակետում: Ըստ որում, սույն աշխատության շրջանակներում հիմնականում վերլուծության կենթարկվեն Արդարադատության խորհրդի այն գործառույթները, որոնք առնչվում են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ:

Գ Լ Ո Ւ Խ 1.

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում Արդարադատության խորհրդին վերաբերող իրավանորմերի կատարելագործումը

§1. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով հռչակված տեսլականը և զարգացման հիմնական ուղղությունները

Սահմանադրության գործող 94.1-ին հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը: Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

Իր հերթին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի 2.6.2-րդ կետը նախատեսում է, որ Սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ հայեցակարգային խնդիրներից մեկն անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական իշխանության կայացումն է: Այս առումով բարեփոխումների արդյունավետությունը կապվում է ոչ թե նոր ինստիտուտների ստեղծման, այլ արդեն կայացած կառույցների կատարելագործման հետ: Այս համատեքստում կարևորվում է արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը: Սահմանադրական այս մարմինն առաջին հերթին պետք է ունենա կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից: Բացի դրանից, արդարադատության խորհրդին հարկ է օժտել սահմանադրական այնպիսի գործառույթներով, որոնցով այն ի զորու կլինի գործուն դեր կատարել դատական իշխանության անկախության ու ինքնուրույնության ապահովման հարցերում: Այս առումով, ի թիվս այլնի, նոր իրավակարգավորման կարիք ունեն արդարադատության խորհրդի ձևավորմանը, իշխանության այլ ինստիտուտների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության) հետ դրա փոխհարաբերություններին, ինչպես նաև այս մարմնի կազմին և լիազորություններին շրջանակին վերաբերող հարցերը:

Նույն Հայեցակարգի 2.9-րդ կետում ամրագրվել է նաև, որ հայեցակարգային առումով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կառուցվածքի ձևավորման հիմքում դնել կառուցակարգային մոտեցման սկզբունքը, իսկ կոնկրետ կառուցվածքի ընտրության խնդիրը

լուծել բարեփոխումների փաթեթի մշակման առաջին փուլում: Դա վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակների հստակեցմանը: Ընդ որում, կառուցակարգային մոտեցման պարագայում բացահայտվում է տվյալ ինստիտուտի սահմանադրական գործառույթի բնույթը, սահմանվում է դրա կազմավորման կարգը՝ եթե այն վերապահված է Սահմանադրությանը, հստակեցվում է լիազորությունների դաշտը կամ այն վերապահվում է նաև օրենքին: Անկախ վերոնշյալ ինստիտուտների կազմավորման հարցում տարբեր մարմինների ունեցած գործառութային դերից, նպատակահարմար է դրանք դիտարկել որպես ինքնուրույն ու բնորոշ սահմանադրաիրավական գործառույթներ ունեցող առանձին սահմանադրական ինստիտուտներ:

Հայեցակարգի հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացվել նաև Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) 2014 թվականի հոկտեմբերի 13-ի եզրակացությունը[3], որի «**Արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը**» վերտառությամբ բաժնի 66-69-րդ կետերում մասնավորապես նշված է հետևյալը.

«66. Ինչ վերաբերում է Արդարադատության խորհրդին, ապա նախագծում նշված է, որ «սահմանադրական այս մարմինն առաջին հերթին պետք է ունենա կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից»: «Արդարադատության խորհրդին հարկ է օժտել սահմանադրական այնպիսի գործառույթներով, որոնցով այն ի զորու կլինի գործուն դեր կատարել դատական իշխանության անկախության ու ինքնուրույնության ապահովման հարցերում: Այս առումով, ի թիվս այլնի, նոր իրավակարգավորման կարիք ունեն արդարադատության խորհրդի ձևավորմանը, իշխանության այլ ինստիտուտների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության) հետ դրա փոխհարաբերություններին, ինչպես նաև այս մարմնի կազմին և լիազորությունների շրջանակին վերաբերող հարցերը»:

67. Սակայն նախագիծը չի նշում այն կոնկրետ փոփոխությունները, որոնք նախատեսված են Սահմանադրության մեջ:

68. Դատավորների նշանակման վերաբերյալ իր զեկույցում[4] Վենետիկի

3.Հիմք՝http://www.venice.coe.int,
http://www.justice.am/storage/uploads/Targmanutyun_voch_pashtonakan.pdf:
4. CDL-AD (2007) 028 Զեկույց դատավորների նշանակման մասին, §48:

հանձնաժողովը նշում է. «դատական անկախությունը երաշխավորելու համար պատշաճ մեթոդ է արդարադատության խորհրդի ստեղծումը, որը պետք է օժտված լինի իր կազմի, լիազորությունների և ինքնավարության համար սահմանադրական երաշխիքներով»:

69. Այն նաև խորհուրդ է տալիս, որ ապահովվի «դատավորների հավասարակշռված ներկայացուցչություն տարբեր մակարդակներից և դատարաններից», և որ այդ սկզբունքը պետք է հստակորեն ամրագրվի Սահմանադրությունում[5]»:

Ելնելով վերոգրյալից՝ նախ և առաջ գտնում ենք, որ գործող իրավակարգավորմամբ Արդարադատության խորհուրդն անկախ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված կարգով (ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդված): Ի դեպ, Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը, այսինքն՝ Սահմանադրությամբ արդարադատության խորհուրդը չի հիշակվել որպես անկախ մարմին և դրան վերաբերող իրավադրույթներն ընդգրկվել են Սահմանադրության «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխում: Մեր կարծիքով, ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված իրավական նորմը, միաժամանակ հակասելով Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ըստ էության կրում է հռչակագրային (դեկլարատիվ) բնույթ, քանի որ արդարադատության խորհրդի 13 անդամներից 9-ը հանդիսանում են գործող դատավորներ, նիստերը հրավիրում և վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը, Արդարադատության խորհրդի աշխատակազմը հանդիսանում է ՀՀ դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը: Ուստի, կարելի է եզրահանգել, որ գործող Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով և փաստացի Արդարադատության խորհուրդը ներկայումս չի հանդիսանում անկախ պետական մարմին և ներկայացնում է առավելապես դատական իշխանությունը (թվով չորս իրավաբան-գիտնականները կազմում են փոքրամասնություն):

Տվյալ հիմնահարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ին «Քաղաքացիներ Սամվել Մնացականյանի և Գևորգ Գյոզալյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգր-

5. CDL-AD (2011) 010 Եզրակացություն Չեռնոգորիայի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ, ինչպես նաև Չեռնոգորիայի դատարանների մասին օրենքի փոփոխությունների նախագծի, Պետական դատախազության մասին օրենքի, Արդարադատության խորհրդի մասին օրենքի վերաբերյալ, կետ 21 (...) Ընդ որում, նոր կետ կարող է ընդգրկվել Սահմանադրության 127-րդ հոդվածում, սահմանելով, որ Արդարադատության խորհրդի կազմը պետք է ապահովի բոլոր դատարանների դատավորների հավասարակշռված ներկայացուցչություն: Տես նաև CDL-AD (2012) 024 եզրակացությունը Չեռնոգորիայի դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական դրույթների փոփոխությունների նախագծերի երկու փաթեթի առնչությամբ, ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 93-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 14-15 դեկտեմբերի 2012 թ.), կ. 20 և 23:

քի 111-րդ հոդվածի 6-րդ մասի, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 158-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրած թիվ ՍԴՈ-1063 որոշման 6-րդ կետում ամրագրել է այն իրավական դիրքորոշումը, որ «Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:»:**

Հետևապես, Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը նպատակահարմար է հստակեցնել ու այն հոչակել որպես ***անկախ պետական մարմին, նրան վերաբերող սահմանադրաիրավական նորմերը հանել «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխից. որպես անկախ պետական մարմիններ՝ ՀՀ արդարադատության խորհրդին, ՀՀ ազգային անվտանգության խորհրդին, ՀՀ դատախազությանը, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ վերահսկիչ պալատին, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև նորաստեղծ ՀՀ քննչական կոմիտեին վերաբերող սահմանադրաիրավական նորմերն անհրաժեշտ է առանձնացնել, հանել Սահմանադրության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանություններին վերաբերող համապատասխան գլուխներից և ընդգրկել առանձին գլխում****:* *Դրանով իսկ Արդարադատության խորհուրդը զերծ կմնա դատական կամ այլ իշխանության ներկայացուցիչների հնարավոր ուղղակի կամ անուղղակի ազդեցությունից, համենայն դեպս, դրա համար կստեղծվեն իրական երաշխիքներ:* ***Բացի այդ, որպես անկախ պետական մարմին՝ Արդարադատության խորհուրդն այդուհանդերձ կարող է արդեն մշակել ու ձևավորել դատական իշխանության համապարփակ ու ամբողջական զարգացման քաղաքականությունը՝ այդ մասով բևեռնաթափելով, օրինակ, դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ հանդիսացող ՀՀ դատավորների ընդհանուր ժողովին ու դատարանների նախագահների խորհրդին, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարությանը:*** *Վերջինիս մասով ակնհայտ է, որ գործադիր իշխանությունը՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության չպետք է մշակի ու ձևավորի դատական իշխանության զարգացման քաղաքականությունը՝ տարբեր ծրագրեր կամ միջոցառումներ կյանքի կոչելու կամ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու եղանակով, ինչը տեղի է ունենում առ այսօր (դրանով իսկ գործադիր իշխանությունը հնարավորություն է ստացել ուղղակի և անուղղակի լծակներ գործադրել դատական իշխանության նկատմամբ, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է դատական իշխանության անկախության համատեքստում): Իհարկե, վերը նշված բոլոր մարմինների հետ Արդարադատության խորհրդի սերտ համագործակցությունը պետք է անպայման պահպանել ու խորացնել նաև ապագայում:*

Երկրորդ՝ ***վերոնշյալ համատեքստում, մեր կարծիքով, օբյեկտիվ անհրաժեշտություն է մշակել և ընդունել «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ նոր օրենք, որի ուժով համապարփակ իրավակարգավորման կենթարկվեն այս պետական մարմնի հետ կապված բոլոր իրավահարաբերությունները****:*

Երրորդ՝ ***որպես դատական իշխանության զարգացման համալիր քաղաքականություն ձևավորող մարմին՝ Արդարադատության խորհրդին անհրաժեշտ է օժտել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու սահմանադրաիրավական իրավազորությամբ,*** *քանի որ առ այսօր դատական իշխանությունը չունի նման նախաձեռնության իրավունք, ինչը գործնականում հանգեցնում է այն անընդունելի իրավիճակի, երբ վերջինս իր անմիջական գործունեության հետ կապված օրենսդրական հիմնախնդիրները լուծելու համար ստիպված է մեծամասամբ դիմել գործադիր իշխանությանը՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, որն էլ իր հերթին որոշում է կայացնում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու անհրաժեշտության ու ձևաչափի վերաբերյալ: Արդյունքում, ստացվում է, որ գործող օրենսդրության բարեփոխման միջոցով դատական քաղաքականության ոչ միջնորդավորված մշակումն ու կյանքի կոչելը դուրս է նույն դատական իշխանության իրավազորություններից շրջանակից: Ավելին, այստեղ խաթարված է նաև իշխանության երեք թևերի հավասարակշռման ու փոխզսպման սահմանադրական հիմնարար սկզբունքը, քանի որ օրենսդիր ու գործադիր իշխանություններն օժտված են օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավազորությամբ, իսկ դատականը՝ ոչ:*

Չորրորդ՝ նախորդ առաջարկության համատեքստում ՀՀ գործադիր ու օրենսդիր իշխանությունների պարբերական ներկայացուցիչների ՀՀ դատական իշխանությանը վերապահված գործառույթներին անհարկի ու կամայական օրենսդրական միջամտությունը բացառելու նպատակով նպատակահարմար ենք գտնում նաև **ՀՀ կառավարության կամ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացվող օրենքների նախագծերը, որոնք առնչվում են ՀՀ դատական իշխանության կողմից իրականացվող գործառույթներին ու դատավորներին, մինչև ՀՀ Ազգային ժողովի քննարկման ներկայացնելը, պարտադիր կերպով նախապես տրամադրել ՀՀ Արդարադատության խորհրդին՝ դրանց վերաբերյալ վերջինիս եզրակացությունը ստանալու ակնկալիքով:** *Ընդ որում, գտնում ենք, որ այդ օրինագծերը ՀՀ կառավարության կամ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության սահմանադրական իրավունքի իրացման շրջանակներում կարող են հետագա շրջանառության մեջ դրվել բացառապես ՀՀ Արդարադատության խորհրդի դրական կամ պայմանական եզրակացության առակայության դեպքում /պայմանական եզրակացության պարագայում ՀՀ Արդարադատության խորհրդի պայմանները կամ առաջարկներն ընդունվելու դեպքում/: Ինչ վերաբերում է մնացած նորմատիվ իրավական ակտերի նախագծերին, ապա վերոշարադրյալ իրավակարգավորումը կարելի է տարածել նաև դրանց նկատմամբ:*

Հինգերորդ՝ որպես անկախ պետական մարմին՝ Արդարադատության խորհուրդը պետք է ունենա իր <u>ծառայության աշխատակազմը՝ որպես առանձին պետական կառավարչական հիմնարկ</u>՝ ներկայումս ընդամենը երկու դատական ծառայողներից բաղկացած Արդարադատության խորհրդի գործող աշխատակազմի փոխարեն, որը միևնույն ժամանակ հանդիսանում է ՀՀ դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը. մասնավորապես՝ ՀՀ գործող դատական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Արդարադատության խորհրդի աշխատակազմի գործառույթներն իրականացնում է Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը: Արդարադատության խորհրդի նոր աշխատակազմը պետք է նախապատրաստի խորհրդի նիստերը, օրենքով նախատեսված ժամկետներում խորհրդի անդամներին, գործին մասնակցող այլ անձանց, արդարադատության նախարարին ուղարկի Արդարադատության խորհրդում քննվող հարցերի վերաբերյալ նյութերը, արձանագրի խորհրդի նիստերը, առաքի և հրապարակի խորհրդի ընդունած ակտերը, ինչպես նաև կատարի այլ գործառույթներ՝ ուղղված խորհրդի ու նրա անդամների բնականոն գործունեության ապահովմանն ու օժանդակությանը:

***Վեցերորդ՝ <u>Արդարադատության խորհրդի ֆինանսավորումը նպատակահարմար է նախատեսել ՀՀ պետական բյուջեով</u>**, այլ ոչ թե ներկայումս գործող Դատական դեպարտամենտի համապատասխան առանձնացված ստորաբաժանմանը հատկացված բյուջեով (ՀՀ դատական օրենսգրքի 113-րդ հոդված):*

***Յոթերորդ՝ վճռաբեկ դատարանի նախագահը՝ թեկուզև առանց քվեարկության իրավունքի, չպետք է հրավիրի ու վարի Արդարադատության խորհրդի նիստերը[6] և ապագայում չպետք է հանդիսանա նաև Արդարադատության խորհրդի ի պաշտոնե անդամ կամ նախագահող**, քանի որ տվյալ պարագայում վերջինս իրավասու է տեսակետ կամ դիրքորոշում հայտնել, հարցեր տալ[7], հրապարակել որոշումներ, մասնակցել բոլոր գործընթացներին և կատարել ցանկացած այլ դատավարական գործողություն (նույնիսկ ներկա գտնվել քվեարկությանը), ինչ իրավասու է կատարել խորհրդի յուրաքանչյուր անդամ՝ բացառությամբ բուն քվեարկության: Արդյունքում վճռաբեկ դատարանի նախագահի տեսակետը կամ դիրքորոշումը կարող է կողմնորոշիչ և ուղղորդող ազդեցիկ նշանակություն ունենալ առնվազն խորհրդի մյուս անդամ դատավորների համար, ինչն խորհրդի լիարժեք անկախության ապահովման տեսանկյունից անընդունելի է:*

---

6. Գործող իրավակարգավորմամբ Արդարադատության խորհրդի նիստերը <u>հրավիրում և վարում է վճռաբեկ դատարանի նախագահը</u> /ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասեր, Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 2-րդ մաս/:
7. Գործող իրավակարգավորմամբ Արդարադատության խորհրդի <u>նիստերի ժամանակ նիստը վարողը իրավունք չունի կարգապահական վարույթին ըստ էության վերաբերող հարցեր տալու զեկուցողներին</u> /ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի 4.1-րդ մաս/:

Ութերորդ՝ Արդարադատության խորհրդի բոլոր որոշումները, եզրակացությունները կամ առաջարկները պետք է ստորագրեն միմիայն նիստին մասնակցած և կողմ քվեարկած բոլոր անդամները[8], իսկ եթե խորհրդի անդամը որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման մեջ, և հատուկ կարծիքը կցվում է որոշմանը. Արդարադատության խորհրդի որոշ որոշումներ չպետք է ստորագրի նիստը վարողը: Ի դեպ, հատուկ կարծիքն էլ տեղին է ներկայացնել բացառապես վերջնական որոշման, առաջարկի կամ եզրակացության, այլ ոչ թե միջանկյալ կամ աշխատակարգային որոշման վերաբերյալ: *Այս համատեքստում անհրաժեշտ է նոր խմբագրությամբ շարադրել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասը.* «5. Արդարադատության խորհրդի վերջնական բոլոր եզրակացությունները, որոշումներն ու առաջարկները կայացվում են խորհրդակցական սենյակում և ստորագրվում դրանց կայացմանը մասնակցած ու կողմ քվեարկած բոլոր անդամների կողմից: Արդարադատության խորհրդի միջանկյալ կամ աշխատակարգային որոշումները կայացվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ու ստորագրվում նիստը վարողի կողմից: Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Արդարադատության խորհրդում ընդունված վերջնական որոշման, առաջարկի կամ եզրակացության վերաբերյալ: Եթե Արդարադատության խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման, եզրակացության կամ առաջարկի մեջ, և հատուկ կարծիքը կցվում է դրան:»:

Իններորդ՝ Արդարադատության խորհրդի անդամներն իրենց կազմից փակ գաղտնի քվեարկությամբ մեկ տարի ժամկետով ընտրում են նախագահ, յուրաքանչյուր անդամի անուն, ազգանուն ընդգրկվում է քվեաթերթիկում, բացառությամբ ինքնաբացարկ հայտնողների. *մեկ տարի պաշտոնավարման նվազագույն ժամկետի սահմանումը պայմանավորված է այն հանգամանքով, որպեսզի առավելագույնը բացառվի նախագահի կողմից խորհրդի մյուս անդամների նկատմամբ ազդեցության լծակներ ձևավորելու ու կիրառելու հնարավորությունը:* ***Նախագահ ընտրված է համարվում քվեարկողների ձայների պարզ մեծամասնությունը հավաքած անձը, իսկ ձայների հավասարության դեպքում անցկացվում է ռեյտինգային քվեարկություն, որի հավասարության դեպքում նոր նախապատվությունը տրվում է դատավոր անդամին կամ դատավորի պաշտոնում առավել երկար աշ-***

8. Գործող իրավակարգավորմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորին կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու վերաբերյալ, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելու հետ կապված Արդարադատության խորհրդի որոշումները կայացվում են խորհրդակցական սենյակում և ստորագրվում որոշման կայացմանը մասնակցած բոլոր անդամների կողմից: Արդարադատության խորհրդի այլ որոշումները ստորագրում է նիստը վարողը /ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մաս/:

հատած անձին: Միևնույն անձը չի կարող պաշտոնավարել որպես նախագահի երկու անընդմեջ ժամկետ: Գործող նախագահը մշտապես քվեարկում է վերջինը:

Տասներորդ՝ *Արդարադատության խորհրդի յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման ժամկետը նպատակահարմար է կրճատել հինգ տարուց մինչև* ***երեք տարին, ինչպես նաև սահմանափակել երկու անընդմեջ ժամկետով[9].*** *ժամկետների կրճատումն ու սահմանափակումը կբացառի խորհրդում, այսպես կոչված, «հնաբնակվելուց» (խորհրդի որոշ անդամներ պաշտոնավարել են տաս տարի և ավել): Առաջին խորհրդի անդամները պետք է պաշտոնավարեն համապատասխանաբար* ***հինգ, չորս և երեք տարի ժամկետով****, որպեսզի հետագայում խորհրդի կազմը միանգամից չփոփոխվի:*

Տասնմեկերորդ՝ *օրենքով անհրաժեշտ է նախատեսել* ***խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման սպառիչ դեպքեր****. օրինակ, առողջության ոչ բավարար, մեկ տարվա ընթացքում խորհրդի նիստերին երեք և ավելի անգամ անհարգելի բացակայության, հրաժարականի, վճարովի այլ աշխատանք կատարելու (բացառությամբ գիտական, ստեղծագործական ու մանկավարժական) և այլ դեպքերը:*

Տասներկուերորդ՝ Արդարադատության խորհրդի անդամը պետք է ընդգրկվի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կազմում, զբաղվի փաստաբանությամբ որպես հիմնական մասնագիտություն, դրա դիմաց ստանա պատշաճ վարձատրություն և չպետք է կատարի այլ վճարովի աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանքի: Գործող դատավոր անդամների պարագայում վերջիններիս լիազորությունները նպատակահարմար է համարել կասեցված մինչև պաշտոնավարման ժամկետի լրանալը՝ գործող դատավորի աշխատավարձի, հավելավճարների ու օրենքով նախատեսված այլ արտոնությունների պահպանմամբ: Պաշտոնավարման ժամկետը լրացած ու կենսաթոշակի անցած նախկին դատավորի ստացած արտոնյալ կենսաթոշակը ևս անհրաժեշտ է պահպանել: Արդարադատության խորհրդի անդամը պետք է պահպանի նաև քաղաքական չեզոքություն և յուրաքանչյուր տարի հայտարարագրի իր ունեցվածքը*:* Ի դեպ, ՀՀ գործող դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-3-րդ մասերի համաձայն՝ <u>արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամի պաշտոնը պետական պաշտոն է</u>: Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամ կարող է նշանակվել այն անձը, որն ունի գիտատեսական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ: Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահման-

9 Գործող իրավակարգավորմամբ <u>նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կամ նշանակվել Արդարադատության խորհրդի անդամ</u> /ՀՀ դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1.1-րդ մաս/:

ված համապատասխան միջոցների հաշվին Դատական դեպարտամենտը վճարում է ամսական հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկի չափով:

Տասներեքերորդ՝ *Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից պարբերաբար պետք է իրագործվեն ու կազմակերպվեն* ***մրցույթներ***՝ *Արդարադատության խորհրդի անդամի թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով:* ***Մրցութային հանձնաժողովների ձևավորման, գործունեության, մրցույթների անցկացման, հաղթող ճանաչելու իրավակարգավորումները պետք է հստակ ամրագրվեն «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ նոր օրենքով*** *(մեր համար ընդունելի է, օրինակ, Եվրոպական դատարանի դատավորի համար 2014 թվականին մրցույթի անցկացման կարգը՝ իհարկե, հաշվի առնելով բոլոր առանձնահատկությունները):*

Տասնչորսերորդ՝ օրենքով սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձին կամ անձանց խորհրդի անդամ նշանակելու իրավազորությունն անհրաժեշտ է վերապահել բացառապես Հանրապետության Նախագահին՝ *որպես պետության գլուխ, Սահմանադրության պահպանմանը հետևող, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը ապահովող:*

Տասնհինգերորդ՝ *Արդարադատության խորհրդի անդամի գործող դատավոր թեկնածուն պետք է ունենա դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ և գործունեության գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական,* *որպեսզի հնարավորություն ունենա մասնակցել մրցույթին:*

Տասնվեցերորդ՝ *Արդարադատության խորհրդի դատավոր անդամների առնվազն կեսը պետք է կազմեն պաշտոնավարման առավելագույն տարիքը լրացած ու կենսաթոշակի անցած նախկին դատավորները, որոնց դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժն առնվազն տաս տարի է և վերջին տասը տարվա ընթացքում չեն ենթարկվել որևէ կարգապահական պատասխանատվության:*

Տասնյոթերորդ՝ *Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկված գործող դատավորները հավասարաչափ պետք է ներկայացնեն ՀՀ բոլոր դատական ատյանները, այսինքն՝ յուրաքանչյուր դատական ատյան պետք է ներկայացված լինի խորհրդում:*

Տասնութերորդ՝ *Արդարադատության խորհրդի դատավոր անդամների, այդ թվում՝ պաշտոնավարման տարիքը լրացած նախկին դատավորների, ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցի խորհրդի հիսուն տոկոսը՝ խուսափելով նույն խորհրդում դատավորների մեծամասնությունից և զուտ դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ ցանկացած որոշում ընդունելուց, ինչը տեղի է ունենում այսօր, քանի որ խորհրդի տասներեք անդամներից ինը գործող դատավորներ են:* *Դրանով իսկ կերաշխավորվի Արդարադատության խորհրդի գործունեության անկախութ-*

յունը և որևէ իրավական կամ մասնագիտական համայնքի շահերը չսպասարկելը: Իհարկե, այն դեպքում, երբ Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը նախընտրելի է թողնել որպես դատական իշխանության առանձնահատուկ լիազորություններով օժտված անկախ մարմին կամ ենթահամակարգ, ապա լիովին արդարացված է այն մոտեցումը, որ Արդարադատության խորհրդի անդամների մեծամասնությունը պետք է կազմեն հենց դատավորները. այս դեպքում ևս գտնում ենք, որ մեծամասնություն կազմող դատավոր անդամների առնվազն կեսը կարող են լինել պաշտոնավարման տարիքը լրացած, կենսաթոշակի անցած նախկին դատավորները: Սակայն իրավիճակն էականորեն փոփոխվում է, երբ Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը վերածվում է անկախ պետական մարմնի, որն այլևս չի կարող հանդիսանալ դատական իշխանության առանձնահատուկ լիազորություններով օժտված մարմին կամ ենթահամակարգ:

Տասիններորդ՝ Արդարադատության խորհրդի անդամների մյուս հիմնական պրոկուր պետք է համապրեն այն իրավաբան-գիտնականները, որոնք զբաղվում են բացառապես գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքով, որևէ այլ վարչական աշխատանքով չեն զբաղվում ու չեն զբաղեցնում որևէ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում *(ներկայումս որոշ իրավաբան-գիտնական անդամները միաժամանակ զբաղեցնում են համապատասխան պաշտոններ պետական մարմիններում, ինչը, մեր կարծիքով, նույնպես անընդունելի է, քանի որ վերջիններս ողղակի ստիպված են ներկայացնել իրենց հիմնական աշխատավայրի շահերը): Առնվազն հինգ տարվա գիտական-մանկավարժական աշխատանքային ստաժ ունեցող իրավաբան-գիտնական անդամների թեկնածությունները, մեր կարծիքով, պետք է երաշխավորեն ՀՀ-ում հավատարմագրված համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից հրապարակված մրցույթին մասնակցելու նպատակով:*

Քսաներորդ՝ Արդարադատության խորհրդի որոշումներն ընդունված են համարվում, եթե նիստին մասնակցում է անդամների կեսից ավելին և ներկա գտնվող անդամների պարզ մեծամասնությունը քվեարկել է կողմ: Խորհրդի անդամները պետք է հնարավորություն ունենան քվեարկեն նաև դեմ *(ձեռնպահ մնալու իրավունքը նպատակահարմար է բացառել, քանի որ խորհրդի անդամը մշտապես պետք է ունենա հստակ ձևավորված տեսակետ),* ***ինչպես նաև առանձին հարցերով, օրինակ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով, խորհրդին ներկայացնեն հրապարակման ենթակա հատուկ կարծիք: Գործող նախագահը մշտապես քվեարկում է վերջինը: Քվեարկողների ձայների հավասար բաշխման դեպքում որոշում չի կայացվում և անհրաժեշտության դեպքում անցկացվում է կրկնակի քննարկում, սակայն դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական պատասխանատվության վարույթն այս դեպքում համարվում է կարճված:***

Գ Լ Ո Ի Խ 2.

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված բարեփոխումներն ու զարգացման ուղիները՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու բնագավառում:

§1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի առնչությամբ հատկապես կարևոր է կանգ առնել նաև Հանրապետության Նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի վրա, քանի որ Հայեցակարգին նախորդել է հենց այդ Ծրագիրը, որը ներկայումս գտնվում է կենսագործման փուլում:

Եվ այսպես, Ծրագիրը նախատեսում է, որ արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

3.4.1. Տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին.

3.5. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը.

3.5.1. Մշակել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության ընթացակարգային կանոնները.

3.5.2. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունը դատավորների համար.

3.5.3. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի իրավասության շրջանակներում նախատեսել խորհրդատվական գործունեության միջոցով դատավորների վարքագծի կանոնների խախտումը կանխարգելող լիազորություններ.

3.5.4. Վերապատրաստել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներին դատավորի վարքագծի կանոնների պահպանումն ապահովելու և խախտումները գնահատելու կարողությունները զարգացնելու նպատակով:

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն առանցքային դերակատարում պետք է ունենա դատավորի վարքագծի կանոնների պահպանման մշակույթի տարածման և պահպանումն ապահովելու հարցերում: Հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը և կանխատեսելիությունն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է մշակել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության ընթացակարգային կանոններ, ձեռնարկել այլ դատավորների համար էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունն ապահովող միջոցառումներ, նախատեսել այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն ունակ կլինի դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել դատավորներին:

Դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգիրքն ենթարկվել է որոշակի փոփոխությունների ու լրացումների: Մասնավորապես՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովներին, դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելու մասին հաղորդումը Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում քննարկելուն, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելուն վերաբերող ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան իրավադրույթները փոփոխվել ու լրացվել են 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքներով, որոնք, մեր կարծիքով, լիարժեքորեն կյանքի չեն կոչել Ծրագրի վերը նշված հիմնադրույթները:

1/ Ասյպես՝ ՀՀ գործող դատական օրենսգրքի 74-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է էթիկայի և կարգապահական հարցերի, ուսումնական հարցերի, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովները:

2. Հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենսգրքով իրենց վերապահված լիազորությունները:

3. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է 7 անդամ, որոնցից երկուսը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներից, երկուսը՝ Հայաստանի Հանրապետության մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներից, իսկ երեքը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից: Դատարանների

նախագահները և Արդարադատության խորհրդի անդամները չեն կարող ընդգրկվել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում:

… 4.4. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ ընդգրկվել Դատավորների ընդհանուր ժողովի մեկ այլ հանձնաժողովի կազմում:

5. Դատավորների ընդհանուր ժողովի անդամը կարող է առաջադրվել որպես հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ Դատավորների ընդհանուր ժողովի որևէ այլ անդամի կողմից առաջադրվելու եղանակով: ...

6. Հանձնաժողովների անդամներն ընտրվում են Դատավորների ընդհանուր ժողովի անդամների կողմից՝ գաղտնի քվեարկությամբ՝ 4 տարի ժամկետով:

7. Քվեարկությունն անցկացվում է առանձին քվեաթերթիկներով՝ ըստ սույն հոդվածի 3-րդ, 4-րդ և 4.1-ին մասերով նախատեսված՝ դատարանների (գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև ըստ նախկին դատավորների և իրավաբան գիտնականների) բաժանման: Քվեաթերթիկում ներառվում են համապատասխան դատարանի (դատարանների) բոլոր այն դատավորների (գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև նախկին դատավորների և իրավաբան գիտնականների) անունները, որոնք առաջադրվել են սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով: Քվեաթերթիկում յուրաքանչյուր թեկնածուի անուն-ազգանունից հետո գրվում են «կողմ եմ» բառերը՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում: Քվեարկելիս դատավորն ունի մեկ ձայնի իրավունք: Ընտրված են համարվում առավել շատ ձայներ ստացած թեկնածուները: Ձայների հավասարության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ունի դատավորի պաշտոնում պաշտոնավարման ավելի երկար ստաժ, իսկ ստաժի հավասարության դեպքում՝ այն թեկնածուն, որն ունի ավելի երկար մասնագիտական աշխատանքային ստաժ: Մեկ թեկնածու առաջադրվելու դեպքում նա համարվում է ընտրված ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

8. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամների թեկնածուներին գրանցելու, ինչպես նաև քվեարկությունը կազմակերպելու, քվեարկողների ձայները հաշվելու և քվեարկությունների արդյունքներն ամփոփելու նպատակով Դատավորների ընդհանուր ժողովը կազմավորում է հաշվիչ հանձնաժողով՝ կազմված 5 անդամից, որոնց ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը՝ բաց քվեարկությամբ: Դատավորները կարող են առաջադրվել որպես հաշվիչ հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ Դատավորների ընդհանուր ժողովի որևէ այլ մասնակցի կողմից առաջադրվելու եղանակով: Հաշվիչ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Դատավորների ընդհանուր ժողովի կանոնակարգով:

9. Յուրաքանչյուր հանձնաժողով իր կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընտրում է հանձնաժողովի նախագահ, որը ղեկավարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը:»:

Ուսումնասիրելով ու վերլուծելով ՀՀ գործող դատական օրենսգրքի 74-րդ հոդվածը՝ կարելի է եզրահանգել, որ նախկինում գործող Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հարցերով և Արդարադատության խորհրդի կարգապահական թվով երկու հանձնաժողովների փոխարեն ներկայումս գործում է միայն մեկ հանձնաժողով՝ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, որը ձևավորվում է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից և կազմված է յոթ դատավոր անդամներից: Այստեղ հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի դատավորները, դատարանների նախագահները և Արդարադատության խորհրդի անդամներն իրավացիորեն չեն կարող ընդգրկվել այդ հանձնաժողովի կազմում, Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամը նույնպես չի կարող միաժամանակ ընդգրկվել Դատավորների ընդհանուր ժողովի մեկ այլ հանձնաժողովի կազմում:

*Գտնում ենք, որ **Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում պարտադիր կերպով պետք է ներկայացված լինի նաև ՀՀ վարչական դատարանը, քանի որ վերջինս հանդիսանում է միակ մասնագիտացված առաջին ատյանի դատարան: Դեռ ավելին, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորների մասով անհրաժեշտ է պահպանել նույն դատարանների դատավորների ներքին մասնագիտացման սկզբունքը՝ դատավոր անդամների քաղաքացիական ու քրեական մասնագիտացումները, ինչը կապահովի առաջին ատյանի դատարանների քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացումներ ունեցող դատավորների հավասար ներգրավվածությունը տվյալ հանձնաժողովի աշխատանքներին:***

*Բացի այդ, **Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամների թեկնածուներին օրենքով որևէ պահանջներ կամ սահմանափակումներ ներկայացված չեն, ինչը հնարավորություն է ընձեռում ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների յուրաքանչյուր դատավորին ինքնաառաջադրվել կամ առաջադրվել Դատավորների ընդհանուր ժողովի որևէ այլ անդամի կողմից: Այնինչ այն դատավորները, որոնք, օրինակ, վերջին երեք տարվա ընթացքում ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, Դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովի կողմից նրանց ի պաշտոնե գործունեությունը վերջին անգամ գնահատվել է ցածր կամ միջին, պարբերաբար թույլ են տալիս դատավորների վարքագծի կանոնների խախտում, զբաղեցնում են դատավորի պաշտոն երեք տարուց պակաս, չեն կարող ընտրվել տվյալ հանձնաժողովի անդամ:***

Սույն աշխատության շրջանակներում ուշագրավ է նաև այն հիմնահարցը, որ քվեաթերթիկում յուրաքանչյուր թեկնածուի անուն-ազգանունից հետո գրվում են միայն «կողմ եմ» բառերը՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում: Այս կապակցությամբ գտնում ենք, որ դրանով

իսկ խաթարվում է գաղտնի քվեարկության բուն գործընթացը, քանի որ ընտրող դատավորը հնարավորություն չունի քվեարկել ոչ դեմ, ոչ էլ ձեռնպահ. վերջինս կարող է քվեարկել միայն կողմ: Այսինքն՝ քվեարկողը հնարավորություն չունի ողջամտորեն արտահայտել իր բացասական կամ չեզոք դիրքորոշումը հանձնաժողովի անդամի թեկնածուի նկատմամբ:

2/ ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի հանդիպելով՝ իր իրավասության շրջանակում որևէ այլ հարց քննելիս կազմակերպում է քննարկում՝ մասնակից դարձնելով դատավորին: Եթե քննարկման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ: Հակառակ դեպքում հանձնաժողովը հարուցում է կարգապահական վարույթ սույն օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, ստանալով սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը, եթե գտնում է, որ տեղեկությունները ամբողջական չեն կամ կասկածելի են, ապա կարող է սեփական նախաձեռնությամբ կազմակերպել հարցի քննարկում՝ մասնակից դարձնելով դատավորին: Քննարկման հետևանքները որոշվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:»:

Իրենց հերթին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին համապատասխան հաղորդում ներկայացնելու պարտականություն կրում են, մասնավորապես, արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանն օրենքով չնախատեսված միջամտության մասին <u>դատավորը</u> (ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մաս), <u>ընդհանուր իրավասության դատարանի նախագահը</u>, որը հետևում է դատավորների կողմից գործի քննության ժամկետների պահպանմանը և գործի քննության ժամկետների խախտման վերաբերյալ, ինչպես նաև դատավորի կողմից վարքագծի կանոնագրքի պահանջների խախտում հայտնաբերելիս իր եզրակացությունը ներկայացնում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով (նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ կետեր), <u>Դատարանների նախագահների խորհրդի նախագահը</u>, որն ի պաշտոնե վճռաբեկ դատարանի նախագահն է, դատավորի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտում հայտնաբերելիս (նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ):

*Այս կապակցությամբ ուշագրավ է այն հանգամանքը, որ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի հանդիպելով, իր իրավասության շրջանակում որևէ այլ հարց քննելիս, **պարտավոր է կազմակերպել քննարկում՝ պարտադիր կերպով մասնակից դարձնելով դատավորին: Եթե քննարկման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ:***

Ելնելով վերոնշյալից՝ գտնում ենք, որ դատավորին քննարկմանը մասնակից դարձնելը տվյալ դեպքում անհրաժեշտ է նախատեսել ոչ թե որպես պարտադիր, այլև հայեցողական, քանի որ բոլոր այն դեպքերում, երբ հանձնաժողովը, ստանալով պատշաճ կերպով չհիմնավորված հաղորդում և իր ներքին քննարկման արդյունքում հանգելով այն համոզման, որ դատավորի կողմից չի կատարվել որևէ խախտում, կարող է իր քննարկմանն ընդհանրապես մասնակից չդարձնել դատավորին՝ վերջինիս անհարկի քաշքշուկից խուսափելու նպատակով: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հանձնաժողովն իր նախնական քննարկման ժամանակ գտնում է, որ անհրաժեշտ է լսել նաև կոնկրետ դատավորի դիրքորոշումն ու բացատրությունները, կարող է արդեն իր հիմնական քննարկմանը մասնակից դարձնել դատավորին: Այս առումով օրենքով նպատակահարմար է սահմանազատել հանձնաժողովի նախնական ու հիմնական քննարկումները (այստեղ տեղին կլինի օգտագործել «նիստ» եզրույթը), ինչպես նաև նախատեսել դատավորի քննարկմանը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր եղանակով մասնակցելու հնարավորությունը. մասնավորապես, գրավոր մասնակցությունն ենթադրում է գրավոր առարկությունների ներկայացում: Ի դեպ, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից 05.09.2014 թվականին հաստատված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնակարգի 2.7-րդ կետում սահմանված է, որ զեկուցողն իրեն հանձնարարված դիմումի, հաղորդման, միջնորդության կամ այլ նյութի ուսումնասիրության ընթացքում կարող է պահանջել լրացուցիչ նյութեր, ինչպես նաև առաջարկել համապատասխան դատավորին տալ գրավոր պարզաբանում:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև նախատեսել հանձնաժողովի հայեցողական իրավունքն իր իսկ քննարկմանը (նիստին) հաղորդում ներկայացնող սուբյեկտին կամ նրա ներկայացուցչին հրավիրելու և լսելու վերաբերյալ, երբ նպատակահարմար է լսել վերջինիս մեկնաբանությունները:

Քննարկվող 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չէ նաև հանձնաժողովի հարցի քննարկմամբ սահմանափակվելու հնարավորությունը բոլոր այն դեպքերում, երբ հաղորդման մեջ մատնանշված ենթադրյալ խախտումն ընդհանրապես բացակայում է, ինչն անընդունելի է. *նախատեսված է միայն, որ եթե քննարկման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ:*

Նույն հոդվածով նախատեսված չէ նաև հանձնաժողովի հաղորդման քննարկման արդյունքում, օրինակ, մեկամսյա ժամկետում պատճառաբանված համապատասխան որոշում կայացնելու պարտականությունը՝ հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու կամ հարուցումը մերժելու մասին, ինչպես նաև կայացված որոշումը շահագրգիռ անձանց եռօրյա ժամկետում պատշաճ կերպով ուղարկելու պարտականությունը:

Այսրեղ հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1063 որոշմամբ կատարվել է եզրահանգում առ այն, որ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:

Իր հերթին, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից 05.09.2014 թվականին հաստատված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնակարգի 3.1-րդ, 3.2-րդ և 3.6-րդ կետերում սահմանված է, որ Հանձնաժողովն իր իրավասության շրջանակում որևէ հարցի քննարկման արդյունքում ընդունում է որոշում՝ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու, հարցի քննարկմամբ բավարարվելու, կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթը կարճելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Արդարադատության խորհրդին դիմելու մասին:

Հանձնաժողովի որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Կարգապահական վարույթի հարուցումը մերժելու դեպքում՝ դիմումատուներին ուղարկվում են Հանձնաժողովի որոշումների հաստատված լուսապատճենները:

Վերը նշված կանոնակարգի 3.1-րդ կետի կապակցությամբ կարծում ենք, որ հանձնաժողովը տեսականորեն ու պրակտիկորեն չի կարող ընդունել հարցի քննարկմամբ բավարարվելու, կամ կարգապահական վարույթը կարճելու, կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Արդարադատության խորհրդին դիմելու մասին որոշումներ, քանի որ հարցի քննարկմամբ բավարարվելու դեպքում պետք է կայացվի կարգապահական վարույթի հարուցումը մերժելու մասին համապատասխան որոշում, իսկ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց անմիջապես հետո հանձնաժողովը պարտավոր է դիմել Արդարադատության խորհրդին՝ հարցն ըստ էության քննության առնելու ու համապատասխան որոշում կայացնելու միջնորդությամբ: Իր հերթին էլ հենց Արդարադատության խորհուրդն օրեն-

քով սահմանված կարգով իրավազոր է կարճել հարուցված կարգապահական վարույթը: Ըստ որում, կանոնակարգով կամ օրենքով ապահիչ կերպով սահմանված չեն այն դեպքերը կամ հիմքերը, երբ հանձնաժողովն իրավասու է կայացնել որոշումներից որևէ մեկը:

Քննարկվող հարցի շրջանակներում գտնում ենք նաև, որ այն բոլոր դեպքերում, երբ հանձնաժողովը կայացրել է կարգապահական վարույթի հարուցումը մերժելու կամ հարուցելու մասին պատճառաբանված որոշում, ապա այն, որպես միջանկյալ վարչական ակտ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում շահագրգիռ անձանց, այդ թվում՝ դատավորի կողմից կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատարանում՝ ապահովելով դիմող սուբյեկտի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը: Տվյալ դեպքում կարգապահական վարույթին վերաբերող հետագա բոլոր վարչական գործողությունների կատարումը կասեցվում է մինչև վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

*Ինչ վերաբերում է այն հարցին, թե վերոնշյալ կանոնակարգի 3.6-րդ կետի ուժով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական վարույթը կարճելու մասին որոշումների հաստատված լռասպատճենները պահվում են այն դատավորի անձնական գործում, որի վերաբերյալ կայացվել է այդ որոշումը, ապա գտնում ենք, որ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը վերջնական չէ և դրան պետք է հաջորդի Արդարադատության խորհրդի համապատասխան որոշումը: Իսկ կարգապահական վարույթը կարճելու մասին որոշման դեպքում հանձնաժողովը հանգում է խախտման բացակայության կամ խախտման ոչ ակնհայտ ու կոպիտ լինելու վերաբերյալ հետևության: Ուստի, **տվյալ որոշումները դատավորի անձնական գործում ընդգրկելը ոչ նպատակահարմար է**:*

3/ ՀՀ գործող դատական օրենսգրքի 155-րդ հոդվածը նախատեսում է, որ «1. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

1) <u>արդարադատության նախարարը</u>.

2) <u>Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը</u>:

2. Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

1) վճռաբեկ դատարանի նախագահը՝ էթիկայի և կարգապահական կանոնների խախտման հիմքերով.

2) Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ միայն էթիկայի կանոնների խախտման հիմքով:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական

վարույթ հարուցելու իրավունք ունի Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը:

4. Եթե Արդարադատության նախարարը կամ վճռաբեկ դատարանի նախագահը հարուցել է կարգապահական վարույթ, ապա այդ մասին, նշելով ենթադրյալ խախտումը, տեղեկացնում են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորի կամ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպքում Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, նշելով ենթադրյալ խախտումը, այդ մասին տեղեկացնում է արդարադատության նախարարին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ վճռաբեկ դատարանի պալատի դատավորի կամ պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպքում՝ վճռաբեկ դատարանի նախագահին: Նույն խախտման կապակցությամբ անձի նկատմամբ միաժամանակ երկու վարույթ չի հարուցվում:

5. Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) ***(կետն ուժը կորցրել է 21.06.14 ՀՕ-86-Ն)***

2) անձի դիմումը.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը.

4) ***(կետն ուժը կորցրել է 10.06.14 ՀՕ-47-Ն)***

5) դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը.

6) վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

7) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը, որով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունը, որ չի պարունակում դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի կատարման մասին առերևույթ հիմքեր, առանց քննության վերադարձվում է դրանք ներկայացնող անձին:

7. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դիմումի, հաղորդման կամ միջնորդության հիման վրա վարույթ չհարուցե-

լու դեպքում վարույթ հարուցողը պարտավոր չէ իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները։»։

Վերլուծության ենթարկելով ՀՀ գործող դատական օրենսգրքի 155-րդ հոդվածը՝ կարելի է եզրահանգել, որ օրենսդրական մակարդակով իրավացիորեն տարանջատվել են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, Վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին։ Մինչդեռ, նախկինում Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն գործում էր Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը, այսինքն՝ մի մարմին, որը կազմավորված էր նույն Արդարադատության խորհրդի անդամներից. տվյալ պայմաններում օրենսդրական մակարդակով համընկնում էին դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները։

ՀՀ գործող դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որպես առաջին ատյանի, վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու սուբյեկտ, նախատեսում է նաև արդարադատության նախարարին։ Այս կապակցությամբ գտնում ենք, որ ***Արդարադատության խորհրդի գործող սահմանադրաիրավական կարգավիճակի իմաստով հաթթարված են դատական իշխանության ինքնակառավարվելու, գործադիր ու օրենսդիր իշխանության մարմիններից լիովին անկախ լինելու հիմնարար սկզբունքները։ Մինչդեռ, գործադիր իշխանության ներկայացուցիչ հանդիսացող արդարադատության նախարարին օրենքով կարգապահական վարույթ հարուցելու իրավազորությամբ օժտելը, մեր կարծիքով, հակասում է Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման հիմնարար սահմանադրական սկզբունքին, քանի որ ներկայումս Արդարադատության խորհուրդը փաստացի ընդգրկված է դատական իշխանության թևի մեջ և կազմված մեծամասամբ գործող ինը դատավորներից, որի նիստերը վարում է հենց Վճռաբեկ դատարանի նախագահը։***

Ըստ որում, ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, որպես կարգապահական վարույթ հարուցելու ատիթ, նախատեսված է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշ-

պոնատար անձի հաղորդումը: Այսինքն՝ մի դեպքում արդարադատության նախարարը հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտ, իսկ մյուս բոլոր պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, այդ թվում՝ Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի նախագահը և վարչապետը՝ միայն հաղորդում ներկայացնող սուբյեկտներ, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է: Ուստի, գործող իրավակարգավորումների լույսի ներքո առաջարկվում է ՀՀ արդարադատության նախարարին հանել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտների կազմից:

*Սակայն այստեղ առանձնահատուկ կարևոր է կանգ առնել այն հիմնահարցի վրա, թե, արդյոք, Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի փոփոխության հետևանքով արդարադատության նախարարը պե՞տք է շարունակի մնալ որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտ, թե ոչ: Մեր կարծիքով, եթե Սահմանադրության նոր խմբագրությամբ կամրագրվի Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը՝ որպես անկախ պետական մարմին, ապա իրավական այս նոր հարաբերություններում **միանգամայն նպատակահարմար է արդարադատության նախարարին օժտել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավազորությամբ**՝ դրանով իսկ այլընտրանք հանդիսանալով և հակակշիռ ստեղծելով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի համար, որը ներկայումս բաղկացած է բացառապես գործող դատավորներից, քանի որ առկա է որոշակի կոնկրետ դեպքերում վերջինիս կողմից ուղղակի վարույթ չհարուցելու և հարցն Արդարադատության խորհրդի քննարկմանն ընդհանրապես չհասցնելու իրական հավանականությունը:*

*Դեռ ավելին, վերոհիշյալ համատեքստում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավազորությամբ նպատակահարմար է օժտել նաև **Մարդու իրավունքների պաշտպանին (օմբուդսմենին)**, քանի որ վերջինս ևս հանդիսանում է անկախ մարմին:* Մասնավորապես՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով Մարդու իրավունքների պաշտպանն անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով:

Ի դեպ, նախկինում 155-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ, նախատեսված էր վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս գործը կամ հարցն ըստ էության լուծելիս կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս

դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, որը, մեր կարծիքով, <u>իրավացիորեն հանվել է</u>, քանի որ նույն դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն, իսկ 153.2-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

*ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված իրավադրույթի ուժով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտը, նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունը, որը չի պարունակում դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի կատարման մասին առերևույթ հիմքեր, առանց քննության վերադարձնում է դրանք ներկայացնող անձին: Մինչդեռ, **առաջարկվում է դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունն առանց քննության թողնելու և այն ներկայացնողին վերադարձնելու մասին կայացվի պատճառաբանված որոշում, որը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում շահագրգիռ անձանց կողմից նույնպես կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատարանում ապահովելով դիմող սուբյեկտի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը**: Ի դեպ, նույն 155-րդ հոդվածի 6-րդ մասից օրենսդիրը «մոռացել է» հանել նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը՝ այն ուժը կորցրած ճանաչված լինելու պատճառով:*

*Ինչ վերաբերում է նույն 155-րդ հոդվածի 7-րդ մասին, ապա գտնում ենք, որ նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա վարույթ չհարուցելու դեպքում վարույթ հարուցողը **պարտավոր է կայացնել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու մասին պատճառաբանված որոշում և այն եռօրյա ժամկետում պատշաճ կերպով ուղարկել շահագրգիռ անձանց**, այլ ոչ թե իր պատասխանում չհիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները (վերջին կարգավորումը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին): Ի դեպ, նույն 155-րդ հոդվածի 7-րդ մասից օրենսդիրը նույնպես «մոռացել է» հանել նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը՝ դրանք ուժը կորցրած ճանաչված լինելու պատճառով:*

Այսպիսով, Ծրագրի 3.5-րդ, 3.5.2-րդ, 3.5.3-րդ և 3.5.4-րդ կետերով նախատեսված այն հիմնադրույթները, ըստ որոնց արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

- ✓ *ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը,*
- ✓ *ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունը դատավորների համար,*
- ✓ *Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի իրավասության շրջանակներում նախատեսել խորհրդատվական գործունեության միջոցով դատավորների վարքագծի կանոնների խախտումը կանխարգելող լիազորություններ,*
- ✓ *վերապատրաստել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներին դատավորի վարքագծի կանոնների պահպանումն ապահովելու և խախտումները գնահատելու կարողությունները զարգացնելու նպատակով, լիարժեք կերպով կամ ընդհանրապես իրացված չեն գործող օրենսդրությունում, այդ թվում ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող, ՀՀ Ազգային ժողովի կողմից 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքների ուժով[10]:*

10. Ի դեպ, մեզ համար անընդունելի ու անհասկանալի է ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններն ու լրացումները երկու առանձին օրենքների շրջանակներում կատարելն այն դեպքում, երբ, մեր կարծիքով, լիովին բավարար կլիներ միայն մեկը:

§2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը

Հանրապետության Նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը նախատեսում է, որ արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

3.4. Բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ.

3.4.4. Հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը.

… Միաժամանակ անհրաժեշտ է բացառել վճռաբեկ դատարանի գերակա դերը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում: Վերադաս դատարանի որոշումը չպետք է հանդիսանա դատավորի կարգապահական վարույթը կանխորոշող հանգամանք: Օրենքի ակնհայտ և կոպիտ խախտման հանգամանքը պետք է բացահայտվի միայն կարգապահական վարույթի ընթացքում, այլ ոչ թե հաստատված լինի վերադաս դատարանի որոշմամբ, ինչը կանխորոշում է կարգապահական վարույթի ընթացքը և դրա արդյունքում Արդարադատության խորհրդի որոշումը՝ հանգեցնելով վերջինիս սահմանադրական լիազորությունների խաթարմանը: Վճռաբեկ դատարանը չպետք է օժտված լինի կարգապահական վարույթի ընթացքի վրա ներգործելու որևէ լիազորությամբ, քանի որ դա անհամատեղելի է վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ:

Անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհրդի նիստերը դռնբաց անցկացնելու վերաբերյալ՝ ըստ դրա արդյունքների կատարելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք է արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի, այդ թվում՝ Սահմանադրության նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Այդուհանդերձ, Դատական օրենսգրքում չի բացահայտվում «ակնհայտ և կոպիտ» խախտման բովանդակությունը, ինչը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս հանգեցնում է տարատեսակ մեկնաբանությունների: Դատավորներին օրենքների ակնհայտ

և կոպիտ խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկայի միասնականությունն ապահովելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում հնարավորինս հստակեցնել Հայաստանի Հանրապետության ակնհայտ և կոպիտ խախտումը գնահատելու չափանիշները:

Օրենքի մեկնաբանությունը, փաստերի գնահատումը և գործի լուծումը չի կարող առաջ բերել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը թույլ է տվել դիտավորություն կամ կոպիտ անփութություն: Դատավորները պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության, եթե իրենց պարտականությունները չեն կատարում պատշաճ կերպով և վտանգում են դատական իշխանության հեղինակությունը: Դատավորի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցը պետք է լինի համաչափ թույլ տրված խախտմանը:

Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով անհրաժեշտ է կարգավորել նյութական օրենքի խախտման հիմքով դատավորի կարգապահական պատասխանատվության հարցերն այն դեպքերում, երբ դատական ակտը չի բողոքարկվել վերադաս դատարան կամ այդ հիմքով չի բեկանվել վերադաս դատարանի կողմից:

Դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների շրջանակներում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերին, կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետներին, չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ նյութական և դատավարական նորմն ակնհայտ և կոպիտ խախտելուն վերաբերող ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան իրավադրույթները նույնպես փոփոխվել ու լրացվել են 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքներով, որոնք, մեր կարծիքով, լիարժեքորեն կյանքի չեն կոչել Ծրագրի վերը նշված հիմնադրույթները:

1/ Այսպես, ՀՀ գործող դատական օրենսգրքի 153-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Արդարադատության խորհուրդը:

2. Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝

1) արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

2) արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

3) դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը.

4) դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը.

5) սույն օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը:

3. Դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն:

4. Դատավորին քրեական, վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը և հակառակը:

5. Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետները հաշվարկվում են տվյալ դատական ակտը կայացնելու պահից:»:

Նախ՝ իրավակիրառական պրակտիկան ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասում ձևակերպած դրույթներին հաղորդել է այնպիսի իմաստ, ըստ որի խնդրո առարկա դրույթները հնարավորություն են տալիս դատական ակտերի բողոքարկման վարույթից դուրս և դատավարության կողմ չհանդիսացող անձի պահանջով քննության առարկա դարձնել օրինական ուժի մեջ մտած կամ չմտած դատական ակտի իրավաչափությունը, հանգել դատական ակտը կայացրած դատավորի համար իրավական բացասական հետևանքներ առաջացնող եզրահանգումների: Այն դեպքում, երբ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140.1-րդ հոդված), իսկ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող են բերել միայն դատավարության մասնակիցները՝ կողմերը, երրորդ անձինք, իսկ գործով մասնակից չհանդիսացող անձինք՝ եթե դատական ակտն առնչվում է նրանց շահերին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.1-րդ հոդված): Այսինքն, խնդրո առարկա դրույթները լիազորում են կար-

գործահական հանձնաժողովին և Արդարադատության խորհրդին քննարկման առարկա դարձնել դատական ակտերի իրավաչափությունը, ընդհուպ դատական ակտը գնահատել որպես դատավարական օրենքների որևէ դրույթին հակասող և որպես հետևանք դատավորի կողմից վարքագծի կանոնները խախտող (պատշաճ մասնագիտական պատրաստվածություն ապահովելու պարտականության չկատարում):

Վերը նշված պնդումը, որ խնդրո առարկա հոդվածի կիրառման շրջանակներում ձևավորվել է իրավակիրառ պրակտիկա, համաձայն որի վերջնական դատական ակտերի արդեն գնահատված բովանդակային մասը (փաստերը, ապացուցները և այլն) վերագնահատվում է բողոքարկման ընթացակարգից դուրս կարգապահական մարմինների կողմից, հապարտվում է Արդարադատության խորհրդի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությամբ:

Այսպես, 2012 թվականի ընթացքում, համաձայն ՀՀ պաշտոնական տեղեկագրում և http://www.court.am կայքում հրապարակված Արդարադատության խորհրդի որոշումների, կարգապահական վարույթ է իրականացվել թվով 20 դատավորի նկատմամբ, որոնք կարգապահական պատասխանատվության են ենթարկվել Արդարադատության խորհրդի 16 որոշումներով: Երկու դեպքում նույն որոշմամբ վարույթ է իրականացվել և պատասխանատվության են ենթարկվել վերաքննիչ դատարանի դատական ողջ կազմը, մնացած 14 դեպքերում վարույթ է իրականացվել և պատասխանատվության են ենթարկվել առաջին ատյանի դատավորները.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Տիգրան Պետրոսյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-2),
2. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վահե Խալաթյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-3),
3. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Լևոն Ավետիսյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-4),
4. ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-5),
5. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերգեյ Աղաբեկյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-6),
6. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Լեոնիկ Աթանյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-7),
7. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորներ Մանուշակ Պետրոսյան, Միհեր Արղամանյան և Գրիշա Մելիք-Սարգսյան (16.03.2012թ. ԱԽ 3-Ո-8),
8. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատա-

վոր Վլադիմիր Գրիգորյան (29.06.2012թ. ԱԽ 11-Ո-14),

9. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վարդան Գրիգորյան (29.06.2012թ. ԱԽ 11-Ո-15),
10. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռուբեն Ափինյան (24.08.2012թ. ԱԽ-15-Ո-20),
11. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ամրահի Պետրոսյան, Արմեն Թումանյան և Կարեն Չիլինգարյան (24.08.2012թ. ԱԽ-15-Ո-21),
12. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Աիդա Դավթյան (07.09.2012թ. ԱԽ 16-Ո-22),
13. ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գագիկ Հեբոյան (26.10.2012թ. ԱԽ-21-Ո-25),
14. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մանվել Սիմոնյան (26.10.2012թ. ԱԽ-21-Ո-26),
15. Երևան քաղաքի արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արմեն Խաչատրյան (23.11.2012թ. ԱԽ 23-Ո-28),
16. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Սուրեն Բաղդասարյան (23.11.2012թ. ԱԽ 23-Ո-29):

2012 թվականի ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկված 20 դատավորներից 15-ի պարագայում վարույթ հարուցելու առիթը հանդիսացել է վճռաբեկ դատարանի նախագահի դիմումը: 2012 թվականին դատավորների կարգապահական վարույթների հիմքում համապատասխանաբար ընկած են ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի հետևյալ գրությունները.

1. 27.12.2011թ. № Ե-7628,
2. 27.12.2011թ. № Ե-7630,
3. 27.12.2011թ. № Ե-7626; Ե-7632,
4. 08.12.2011թ. № Ե-7098,
5. 27.12.2011թ. № Ե-7627,
6. 27.12.2011թ. № Ե-7629,
7. 27.12.2011թ. № Ե-7626,
8. 04.07.2012թ. № Ե-4431,
9. 26.07.2012թ. № Ե-4976,
10. 20.09.2012թ. № Ե-6145,
11. 22.08.2012թ. № Ե-5592:

Մյուս 5 դեպքերից մեկի առիթը գործով կողմ հանդիսացող անձի դիմումն է եղել, իսկ մյուս դեպքերում՝ վարույթ հարուցելու լիազորություն ունեցող անձի սեփական նախաձեռնությունը:

Արդարադատության խորհրդի 16 որոշումների հիմքում ընկած գործերից հինգի պարագայում դատական ակտը, որտեղ դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, վերադասության կարգով բողոքարկված չի եղել և մնրած է եղել օրինական ուժի մեջ: Մյուս դեպքերում դատական ակտում թույլ տրված խախտումը շտկվել է վերադաս դատարանի կողմից կայացված դատական ակտով: Գործերից մեկով վճռաբեկ դատարանը վարույթ չի ընդունել վերաքննիչ դատարանի ակտի դեմ բերված բողոքը:

2012 թվականի առաջին կիսամյակում կայացված բոլոր 9 որոշումներով արձանագրվել են դատավորի կողմից Համաներման ակտի կիրառման խախտումներ:

Արդարադատության խորհուրդը բոլոր 16 գործերով քննարկման առարկա է դարձրել դատական ակտի և դատարանի կողմից օրենքի մեկնաբանման ու կիրառման իրավաչափությունը:

Կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորներից 5-ն Արդարադատության խորհրդի նիստում ընդունել են իրենց «մեղքը», որոնցից 4-ն Արդարադատության խորհրդից ներողամտություն են խնդրել:

- ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վահե Խալաթյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-3),
- ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերգեյ Աղաբեկյան (10.02.2012թ. ԱԽ-1-Ո-6),
- ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գագիկ Հեբոյան (26.10.2012թ. ԱԽ-21-Ո-25),
- ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մանվել Սիմոնյան (26.10.2012թ. ԱԽ-21-Ո-26):

Թիվ ԵԿԴ/0389/02/11 քաղաքացիական գործով[11] կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի դատական կազմի բոլոր դատավորները: Մասնավորապես՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.07.2011 թվականի վճռով (նախագահող դատավոր՝ Ռ.Ափինյան) վարույ-

11. Երևան քաղաքի Ամիրյան 3 շենքի թիվ 1 և թիվ 6 բնակարանների սեփականատերեր Իզաբելլա Թամանովանի և Հեղինե Սիմոնյանի հայցն ընդդեմ նույն շենքի թիվ 7 և 8 բնակարանների սեփականատեր Արա Հովհաննիսյանի՝ տանիքի դռան փոփոխված փականի բանալին անհապաղ տրամադրելու և դրանից հետո առանց հայցվորների համաձայնության տանիքի հատվածում որևէ փոփոխում (աշխատանքներ) չկատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

թը կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Իսկ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (դատավորներ Ա.Պետրոսյան, Ա.Թումանյան, Կ.Չիլինգարյան) 01.12.2011 թվականի որոշմամբ Իզաբելլա Թամանովայի և Հեղինե Սիմոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.07.2011 թվականի վճիռը թողնվել օրինական ուժի մեջ:

*Դատավորներն օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ **նույն խախտման համար** պատասխանատվության են ենթարկվել Արդարադատության խորհրդի երկու[12] որոշումներով: Առաջին ատյանի դատարանի դատավորին և ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական կազմի երկու դատավորին (Ա.Պետրոսյանին և Ա.Թումանյանին) Արդարադատության խորհուրդը հայտարարել է նախազգուշացում, իսկ երրորդին (Կ.Չիլինգարյանին)՝ նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:*

Արդարադատության խորհրդի նիստում 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով զուգորդված նկատողություն ստացած դատավորն իր բացատրություններում նշել է հետևյալը. «Կարգապահական հանձնաժողովը հավատարիմ կմնա դատավոր Ա.Պետրոսյանի բացատրության տեքստում հիշատակված՝ Արդարադատության խորհրդի մի շարք որոշումներում (12.10.2007թ. Ախ-7-Ո-18 և ԱԽ-7-Ո-19, 14.10.2011թ. ԱԽ-20-Ո-27 որոշումներում. բացատրությունը մերն է) և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներում (Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ Եվրոպական խորհրդի Նախարարների Կոմիտեի № CM/REC(2010) 12 հանձնարարական. բացատրությունը մերն է) ամրագրված այն սկզբունքներին, որոնց համաձայն՝ վարույթ իրականացնող դատարանի կողմից արված մեկնաբանություններն ամեն դեպքում չեն կարող դիտարկվել արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական օրենքի կոպիտ խախտում, այլապես դրանով կարող է կասկածի տակ դրվել դատական իշխանության հեղինակությունն ու դատական անկախությունը: Դատավորները պետք է անսահմանափակ հնարավորություն ունենան գործերը լուծելու անկողմնակալ ձևով՝ օրենքի և փաստերի իրենց մեկնաբանությանը համապատասխան»:

Արդարադատության խորհրդի որոշման մեջ վերաքննիչ դատարանի դատավորին նույն արարքը կատարած մյուս երեք դատավորների պատասխանատվությունից տարբերակված՝ ավելի խիստ պատժի ենթարկելու պատճառաբանություն շարադրված չէ:

Այսպիսով, վերը ներկայացված ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ դատավորների կարգապահական վարույթների շրջա-

12. Տես 24.08.2012թ. ԱԽ-15-Ո-20 և ԱԽ-15-Ո-21 որոշումներ:

*նակներում քննարկման առարկա են դառնում **դատական ակտի և դատարանի կողմից օրենքի մեկնաբանման ու կիրառման իրավաչափությունը:** Նման պրակտիկան հակասում է միջազգային իրավունքի մի շարք նորմերին, որոնք ներկայացված են ստորև:*

Այսպես, ՄԱԿ-ի կողմից հռչակված Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքների 18-րդ կետում ամրագրվել է, որ «18. Судьи подлежат приостановлению полномочий или освобождению от должности лишь по причине неработоспособности или не за поведение, несовместимое с судейским званием.»: Իսկ նույն սկզբունքների 19-րդ կետը հռչակում է, որ «19. Все процедуры, связанные с дисциплинарной ответственностью, приостановлением полномочий и освобождением от должности, должны строиться в соответствии с установленными нормами поведения судей.»:

*Ի կատարում Հայաստանի Հանրապետության Նախագահի 30.06.2012 թվականի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարության ծրագրի 3.4.4 կետի՝ ՀՀ գործող դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է կարգապահական պատասխանատվության հիմքերին, որի 1-2-րդ կետերում սահմանված է արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը: Տվյալ իրավադրույթով առաջարկվող **հստակեցումները** լրացուցիչ ուսումնասիրության կարիք են զգում, այդ իսկ պատճառով նպատակահարմար է անդրադառնալ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով, որպես կարգապահական պատասխանատվության հիմք, սահմանված <**<u>արդարադատություն իրականացնելիս</u>** նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում> կարգավորման բովանդակությանը:*

Նախ՝ ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը հռչակում է, որ դատավորին չի կարելի կալանավորել, նրան որպես մեղադրյալ ներգրավել, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկել՝ առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության: *Այս կապակցությամբ գտնում ենք, որ դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր դատական գործունեության՝ դատական ակտերի կայացման կապակցությամբ, այլև **կարգապահական պատասխանատվությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատավորի արդարադատարարանական (ոչ դատական ակտերի կայացման հետ կապված), ինչպես նաև դատարանում կան դատական նիստի ժամանակ դրսևորած առերևույթ ոչ իրավաչափ վարքագծով: Նույնիսկ «կարգապահական պատասխանատվություն» եզրույթը վերաբերում է դատավորի կարգապահությանը (վարքագծին), այլ ոչ թե նրա կողմից կայացված դատական ակտերի հիմնավորվածությանը:*** Ի հավաստում մեր եզրահանգման՝ նույն

օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն:

Տվյալ եզրահանգումը համահունչ է նաև Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին Ստրասբուրգում ընդունված «Դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների մասին, մասնավորապես՝ էթիկայի նորմեր, պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ և անաչառություն» եզրակացության 60-րդ կետին[13]:

Բացի այդ, դատավորների կողմից արդարադատություն իրականացնելը դրսևորվում է համապատասխան դատական գործեր քննելով և լուծելով, ինչն արտացոլվում է դատական ակտերի բովանդակության մեջ:

*Նշվածից ուղղակիորեն հետևում է, որ **դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր կայացրած որոշման բովանդակության, անգամ դատական սխալների համար, քանի որ վերջինս հակասում է դատավորի անկախության սկզբունքին: Դատական ակտերը կարող են վերանայվել ու բեկանվել բացառապես վերադասության կարգով և ոչ մի այլ մարմին կամ անձ իրավասու չէ իրավական գնահատական տալ դատական ակտերին՝ հատկապես այն դեպքում, երբ դրանք օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր են: Դատական ակտը, մտնելով օրինական ուժի մեջ, դառնում է պետական իշխանության մարմնի իրավակիրառ ակտ, որը գործում է օրենքի նորմերի հիման վրա: Վճռի օրինական ուժի իրավական հետևանքներն են դրա անհերքելիությունը (անփոփոխելիությունը), բացառիկությունը, պարտադիրությունը, նախադատելիությունն ու կատարելիությունը:***

Եվրոպական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, գտել է, որ այն իրավունքի գերակայության բաղադրատարրերից է, որն իր հերթին ենթադրում է res judicata սկզբունքի հարգում: Այս սկզբունքը նշանակում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական և կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու և վեճը նորից լուծելու նպատակով (դատական ակտերի վերջնականության սկզբունք):

Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները և արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական և կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական և անհետաձգելի հանգա-

13. Հայտնի է նաև որպես Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի թիվ 3 Կարծիք: Վկայակոչված պարբերությունն ամբողջությամբ ներկայացված է սույն աշխատության «Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացակարգերի վերաբերյալ միջազգային նորմերը» վերտառությամբ բաժնում:

մանքների դեպքում (տես, Եվրոպական դատարանի 24.07.2003 թվականի վճիռը, Ռյաբիխն v. Ռուսաստանի Դաշնության գործով):

Իրավական որոշակիության սկզբունքի գործածումն ենթադրում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունություն: Միևնույն ժամանակ նախատեսված է նաև նշված սկզբունքից **շեղվելու իրավական հնարավորություն,** որպիսիք են միայն էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքների դեպքերը՝ դատական սխալի ուղղման նպատակով: Դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի վերանայումն իր էությամբ և առաքելությամբ հանդիսանում է որոշումների արդարացիության ապահովման միջոցներից մեկը:

Իր հերթին, «Օրենքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը» (Վենետիկի հանձնաժողով), իրավական փորձաքննության ենթարկելով «Ընդհանուր իրավասության դատավորների կարգապահական պատասխանատվության և կարգապահական հետապնդման մասին» Վրաստանի Հանրապետության օրենքը, իր CDL-AD/2007/009 no. 408/2006 եզրակացությունում անդրադառնալով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերին, դատավորների անկախության տեսանկյունից իրավական վերլուծության է ենթարկել նշված օրենքի 2-րդ հոդվածը, որի համաձայն դատավորը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել «գործի քննության ընթացքում օրենքի ակնհայտ և կրկնվող խախտման» դեպքում: Մասնավորապես՝ հարցը, որ բարձրացվել է հանձնաժողովի առջև, վերաբերել է այն խնդրին, թե ինչպես բացահայտել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի և նրանց անկախության հավասարակշռությունն այն հաշվով, որ անկախության սկզբունքը չոտնահարվի:

Հիշատակված խնդրի լուծման համար Վենետիկի հանձնաժողովը, վերը նշված եզրակացության 3-րդ կետում, մասնավորապես շարադրել է.

«… Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և որոշում ընդունող կարգապահական մարմնի վերաբերյալ օրենսդրությունը պետք է հստակ կերպով սահմանվի: Պետությունները հաճախ գտնվում են հակադիր դժվարությունների մեջ, որովհետև կարգապահական տույժի պատճառները բավարար չափով չեն մանրամասնված: Այդ կանոնների հստակ սահմանման բացթողումը վտանգ է ստեղծում դատավորների նկատմամբ անհիմն կարգապահական խախտման հետապնդում հարուցել: Դա է պատճառը, որ Եվրոպական խորհրդի եվրոպական դատավորների խորհրդակցական խորհուրդը (CCJE) դատական իշխանության անկախության վերաբերյալ իր 2001 թվականի համար 1 եզրակացության մեջ առաջարկել է մշակել կանոններ, որոնք սահմանեն ոչ միայն դատավորին հետ կանչելու վերաբերյալ կանոնակարգ, այլև վարքագծերի ամբողջություն, որը հնարավոր կդարձնի իրականացնել կարգապահական տույժեր կամ կարգավիճակի փոփոխություն»:

Ընդհանրապես իրավական պատասխանատվության (և հատկապես դատավորի կարգապահական պատասխանատվության) իրավական հիմքերի բացահայտման հատակությունը, որոշակիությունն ու կանխատեսելիությունը, բազմիցս քննարկման առարկա են դարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, և այդ կապակցությամբ Եվրոպական դատարանը ձևավորել է միասնական պրակտիկա: Այդ կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովն իր վերը նշված եզրակացության 15-րդ կետում, անդրադառնալով դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության հիմքերին, նշել է.

«(…) Ինչ վերաբերում է կանխատեսելիությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարիների ընթացքում մշակել է չափորոշիչներ, որպեսզի որոշվեն, արդյոք իրավունքի վերաբերյալ վեճը նախատեսված է օրենքով և եզրակացրել է, որ բավական չէ միայն իրավանորմի գոյությունը, անհրաժեշտ է նաև, որ այն լինի ճշգրտված և, որ դրա հետևանքները համապատասխան անձանց համար լինեն կանխատեսելի: Այդ պայմանները կիրառելի են նաև կարգապահական վարույթների համար, քանի որ այստեղ ևս անհրաժեշտ է պարզորոշ կերպով իմանալ՝ որ գործողություններն են ներառված կարգապահական պատասխանատվության ներքո»:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ դատավորի կողմից իրեն հանձնված գործի լուծման ընթացքում կատարած դատական սխալներն ինքնին չեն կարող առաջ բերել կարգապահական պատասխանատվություն: Այդ առումով Վենետիկի հանձնաժողովն իր վերը նշված եզրակացության 23-րդ կետում ընդգծում է, որ «դատավորի կողմից դատավարության ընթացքում ընդունված սխալ որոշման հետևանքները վերացնելու միակ եղանակը, թերևս բողոքարկման ընթացակարգն է: Օրենքի ոչ ճիշտ մեկնաբանությունը չի կարող ուղղվել այլ կերպ, քան վերաքննության ընթացակարգով»:

Վենետիկի հանձնաժողովը, շարունակելով զարգացնել իր դատողությունները, կարգապահական պատասխանատվության իրավական հիմքերի և դատավորի անկախության սկզբունքի հավասարակշռության ապահովման վերաբերյալ նույն իր եզրակացության 19-րդ կետում նշում է՝ … Կարգապահական խախտումները, որոնք ամրագրված են օրենքի 2.2 կետում, անհամատեղելի են եվրոպական և միջազգային նորմերին՝ երկու պատճառով.

1. դրանք բավարար չափով մանրամասնված չեն,

2. դրանք թույլ են տալիս անհիմն կերպով միջամտել դատավորի աշխատանքին, որոնք պետք է պաշտպանված լինեն արդարադատության անկախության սկզբունքով: Այդ դրույթները, ուստի, անհրաժեշտ է դուրս հանել քննարկվող օրենքից:

«Կարգապահական պատասխանատվություն» եզրույթը վերաբերում է դատավորի կարգապահությանը՝ ինչպես նշված է Կիևյան հանձնարարա-

կանների 25-րդ կետում ***<u>ոչ մասնագիտական վարքագծին</u>****, այլ ոչ թե նրա կողմից նյութական և դատավարական նորմերի կիրառմանը:*

«Ամերիա» ՓԲԸ և Human Dynamics-public sector consulting կողմից 2010 թվականի մայիսին ներկայացված «Ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների մատուցում Արդարադատության խորհրդին և Դատական դեպարտամենտին» զեկույցում <u>առաջարկվել է նյութական և դատավարական օրենքի խախտումը, որպես կարգապահական պատասխանատվության հիմք, վերացնել:</u>

Մասնավորապես՝ տվյալ զեկույցում նշված է հետևյալը. <<Առկա համակարգի <u>առավել քննադատվող տարրերից մեկը</u> Հայաստանում նյութական և/կամ դատավարական օրենքի խախտման դեպքում դատավորների կարգապահական պատասխանատվությունն է (Դատական օրենսգրքի հոդված 153, պարբերություն 2, ենթապարբերություն 1 և 2):

Այս մոտեցումը հակասում է ազատ ներքին համոզմունքների հիմնարար սկզբունքներին ու դատավորի կողմից փաստերի անկախ գնահատմանն ու օրենքի մեկնաբանմանը, ուստի և համարվում է դատական անկախության խախտում:

Նյութական և դատավարական օրենքի խախտումները կարող են բողոքարկման կամ դատական ակտի վերանայման և ոչ թե դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ: Այլապես, եթե որոշում է կայացվում, որ դատավորը նյութական կամ դատավարական օրենքի «ակնհայտ և կոպիտ խախտում» է թույլ տվել, ապա Արդարադատության խորհուրդը փոխարինում է փաստերի գնահատման և մասնավոր դեպքում օրենքի կիրառման վերաբերյալ դատավորի կարծիքն իր սեփական կարծիքով: Ավելին, եթե այս ամենի հիման վրա Արդարադատության նախարարը կարգապահական վարույթ է նախաձեռնում, ապա վերջինս պետք է ամբողջությամբ գնահատի դատական ակտերի օրինականությունը: Այնուամենայնիվ, ո՛չ նախարարը և ո՛չ էլ Արդարադատության խորհուրդը դատական համակարգի վերանայող մարմինները չեն, որոնք ապահովում են օրենքի միանման կիրառումը: Այս գործառույթն իրականացնելու միակ իրավասու մարմինը Վճռաբեկ դատարանն է (Դատական օրենսգիրք, հոդված 50, պարբերություն 1)»:

Ի տարբերություն վերը նշված խնդրո առարկա դրույթների՝ հարկ է նշել, որ Կիևյան հանձնարարականի պահանջները, ըստ էության, ապահովված են ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի ***մեկ այլ կարգավորումներով****, որոնցով ուղղակիորեն նախատեսված են դատավորի մասնագիտական վարքագծի հետ կապված կարգապահական պատասխանատվության հիմքերը:*

Ի կատարում Ծրագրով նախատեսված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը հստակեցնելու պահանջի՝ <u>ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ</u>

<u>կետերն ու դրանց հետ համակարգային կապ ունեցող նույն օրենսգրքի 153.2-րդ հոդվածն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել</u>՝ հիմքում ունենալով ոչ միայն վերը նշված փաստաթղթերը, այլև «Ամերիա» ՓԲԸ և Human Dynamics-public sector consulting կողմից 2010 թվականի մայիսին ներկայացված «Ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների մատուցում Արդարադատության խորհրդին և Դատական դեպարտամենտին» զեկույցը:

*Այս առնչությամբ վերոնշյալ տեսակետի ընդդիմախոսները կարող են բարձրացնել այն հիմնահարցը, թե ինչպես, այսպես ասած, «պատժել իրավախախտ» դատավորներին, որոնց մոտ նման գործունեությունը կրում է սիստեմատիկ կամ պարբերական բնույթ, եթե ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը և 153.2-րդ հոդվածը ճանաչվում են ուժը կորցրած: Այս առնչությամբ գտնում ենք, որ էական դերակատարում կարող է ունենալ **դատավորների գործունեության գնահատումը**, որն իրականացվելու է չորս տարին մեկ անգամ և այդ գործունեությունը դասակարգվելու է չորս տեսակների. դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա, ըստ յուրաքանչյուր չափանիշի և ըստ գնահատումների հանրագումարի, **դատավորների գործունեությունը գնահատելու է բարձր, լավ, միջին կամ ցածր**: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 96.4-րդ հոդվածը (12.1-ին գլուխը 21.06.14թ. ՀՕ-86-Ն օրենքի լրացմամբ ուժի մեջ կմտնի 01.01.15 թվականից) սահմանում է դատավորների գործունեության գնահատման հետևանքները, մասնավորապես՝* «1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր գնահատելու դեպքում գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

Գնահատման հանձնաժողովի որոշումները տրամադրվում են ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ վերապատրաստման ուղղությունները որոշելու նպատակով:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը միջին գնահատվելու դեպքում գնահատման հանձնաժողովը դատավորին առաջարկում է անցնել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ, եթե գնահատմամբ բացահայտվում է որոշակի չափանիշով նրա հմտությունները կատարելագործելու անհրաժեշտություն: Դատավորի՝ վերապատրաստում անցնելու համաձայնության դեպքում գնահատման հանձնաժողովի որոշումը տրամադրվում է ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ վերապատրաստման ուղղությունները որոշելու նպատակով:

3. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր գնահատվելու դեպքում դատավորը չի կարող դիմել ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու կամ դատարանի նա-

խագահի թափուր պաշտոնը համալրելու համար՝ մինչև գնահատման արդյունքների հաջորդ ամփոփումը:

4. Այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է բարձր, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար դիմելիս ունեն ցուցակում ընդգրկվելու նախապատվության իրավունք:

5. Այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է համապատասխանաբար բարձր և լավ, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար դիմելիս սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձանցից հետո ունեն ցուցակում ընդգրկվելու նախապատվության իրավունք՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, իսկ նրանցից հետո նախապատվության իրավունք ունեն այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է լավ:

6. Եթե ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու նպատակով դիմել է ցուցակի համապատասխան բաժինը լրացնելու համար նախապատվության իրավունք ունեցող անհրաժեշտ քանակից ավելի թեկնածու, ապա Արդարադատության խորհուրդը նրանց վերաբերյալ անցկացնում է քվեարկություն՝ սույն օրենսգրքի 137-րդ և 138-րդ հոդվածներով նախատեսված կարգով, հաշվի առնելով՝

1) ինքնագնահատման թերթիկը.

2) գնահատման հանձնաժողովի որոշումը.

3) գնահատման հանձնաժողովի որոշման վերաբերյալ դատավորի առարկությունը (առկայության դեպքում):»:

Ելնելով վերոգրյալից՝ որպես կառուցակարգ, կարելի է ամրագրել, օրինակ, այն մոտեցումը, ըստ որի եթե դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա, ըստ յուրաքանչյուր չափանիշի և ըստ գնահատումների հանրագումարի, կոնկրետ դատավորի գործունեությունը ***գնահատում է ցածր, ապա այս պարագայում Արդարադատության խորհրդում պարտադիր կերպով քննարկման առարկա է դառնում վերջինիս պաշտոնավարման նպատակահարմարությունն ընդհանուր իրավասության առաջին ատյանի տվյալ դատարանում՝ նույն ատյանի մարզի դատարան տեղափոխելու հանձնաժողովում (մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ դատավորի աշխատելու դեպքում՝ նույն ատյանի մարզի մեկ այլ դատարան, իսկ ՀՀ վարչական դատարանի դեպքում՝ մարզային նստավայր տեղափոխելու հանձնաժողովում): Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատավորի դեպքում պարտադիր քննարկման առարկա է դառնում վերջինիս ստորադաս կամ առաջին ատյանի դատարան տեղափոխելու հարցը***:

Հավելյալ կարելի է նաև ամրագրել դատավորին օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված որոշակի հավելավճարներից, արտոնություններից զրկելու կամ սահմանափակելու հնարավորությունը: Խոսքը, իհարկե, չի վերաբերում է օրենքով սահմանված ու դատավորի կողմից արդեն ստացվող աշխատավարձը, հավելավճարները կամ կենսաթոշակը սահմանափակելուն կամ կրճատելուն, ինչը կարող է հանգեցնել կոռուպցիոն բնույթի բացասական հետևանքների, սակայն այդ սահմանափակումները կարող են վերաբերվել, օրինակ, նախատեսվող պարգևատրումներին և ամենամյա հավելավճարներին, գործուղումներին, ծառայողական մեքենայից կամ բնակարանից օգտվելուն, ապահովագրությանը, սոցիալական փաթեթներին և այլ արտոնություններին:

2/ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը նախատեսում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝ դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը:

Իր հերթին, նույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պարտավոր է վարույթ հարուցած անձին ներկայացնել գրավոր բացատրություններ:

Համաձայն նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասի՝ արդարադատության խորհրդում վարույթ հարուցած անձի զեկուցումից հետո խորհուրդը լսում է այն դատավորի բացատրությունները, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Դատավորը Արդարադատության խորհրդում բացատրություն է տալիս կարգապահական խախտման մասին եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ: Նա կարող է ժխտել իր կողմից կարգապահական խախտում համարվող արարքի կատարման փաստը, վիճարկել արարքի որակումը՝ որպես կարգապահական խախտում, կամ վերոհիշյալ երկուսը միաժամանակ: Եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնվում է տվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Արդարադատության խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը:

Վերլուծելով վերոշարադրյալ իրավական նորմերը՝ կարելի է եզրահանգել, որ մեր համար անընդունելի է, որպես դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք, նախատեսել դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, վարույթ հարուցած անձին գրավոր բացատրություններ ներկայացնելու պարտականության չկատա-

*րումը, քանի որ այդ անգործությունն առավելագույնը կարող է մեկնաբանվել ի վնաս դատավորի: Ավելին, վարույթ հարուցած անձին գրավոր բացատրություններ ներկայացնելու դատավորի պարտականությունը միևնույն ժամանակ կարելի է գնահատել նաև որպես իրավունք, որից չօգտվելը որևէ կերպ չի կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության՝ այն էլ այն դեպքում, երբ նույն դատավորի նկատմամբ այլ հիմքով արդեն իսկ հարուցված է կարգապահական վարույթ: Ստացվում է, որ **կարգապահական պատասխանատվության արդեն իսկ առկա մեկ հիմքին գումարվում է մեկ այլ հիմք և դատավորն արդյունքում ենթարկվում է կարգապահական պատասխանատվության միաժամանակ երկու հիմքերի առկայության պայմաններում**, ինչը, մեր կարծիքով, ոչ իրավաչափ է:*

*Ինչ վերաբերում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու այն հիմքին, որ դատավորն Արդարադատության խորհրդում բացատրություն է տալիս կարգապահական հախիսման մասին եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ, ապա գտնում ենք, որ այդպիսի հիմք նախատեսելը ևս անընդունելի է, քանի որ **դատավորի կողմից Արդարադատության խորհրդի նիստի ընթացքում բացատրություն չտալն անհրաժեշտ է համարել որպես դատավորի իրավունք, որը չիրացնելը նույնպես կարող է մեկնաբանվել ի վնաս նույն դատավորի**: Ավելին, գործող իրավակարգավորմամբ՝ եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնվում է տվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Արդարադատության խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը:*

*Ի վերջո՝ գործող օրենսգրքում, որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը նախատեսելը, մեր կարծիքով, ևս նպատակահարմար չէ, քանի որ **դատավորի կողմից տվյալ պարտականության չկատարելը, որպես իրավական հետևանք, կարող է հանգեցնել առավելագույնը լրացուցիչ վերապատրաստում կամ փորձաշրջան անցնելուն այնքան ժամանակ, երբ լրանա պարտադիր վերապատրաստման համապատասխան ժամաքանակը կամ փորձաշրջանը համարվի անցած**: Բացի այդ, վերը նշված պարտականությունների չկատարումը կարող է բացասական ազդեցություն ունենալ դատավորի գործունեության հետագա գնահատման ցուցանիշների վրա՝ արդյունքում զրկելով դատավորին առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու և դատարանի նախագահ նշանակվելու հնարավորությունից:*

Այսպիսով, առաջարկում ենք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ուժը կորցրած ճանաչել «156-րդ հոդվածի 3-րդ

մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով», «ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը» բառերը:

3/ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետները հաշվարկվում են տվյալ դատական ակտը կայացնելու պահից:

Այս իրավադրույթի կապակցությամբ գտնում ենք, որ, նախ, ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը չեն նախատեսում որևէ ժամկետներ (դրանք սահմանված են մեկ այլ՝ 153.1-րդ հոդվածով):

Երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը, որով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի ուժով հանդիսանում է ոչ թե դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք, այլև <u>կարգապահական վարույթ հարուցելու առիթ</u>:

*Հետևաբար, **ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ մասի վերը հիշատակված իրավադրույթը «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը» վերտառությամբ նույն հոդվածում նախատեսելը նպատակահարմար չէ և այն ևս անհրաժեշտ է ճանաչել ուժը կորցրած:***

4/ ՀՀ գործող դատական օրենսգրքի 153.2-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Սույն գլխի իմաստով ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ <u>ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով</u>:

2. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը <u>հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ</u>:

3. Կոպիտ է նաև պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը:

4. Սույն գլխի իմաստով նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է չարամտությամբ, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

5. Սույն գլխի իմաստով նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է կոպիտ անփութությամբ, եթե դատավորը չի կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

6. Արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:»:

Այսպես, օրենսգրքի 153.2-րդ հոդվածով նախատեսված են նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումների կոնկրետ դեպքերի շրջանակը: Նշված ձևակերպումից հետևում է, որ հեղինակների կողմից գնահատողական հասկացությունը («ակնհայտ») փորձ է արվել սահմանել մեկ այլ գնահատողական հասկացությամբ («ողջամիտ իրավական ենթադրություն»), ինչն անընդունելի է իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից: Ավելին՝ առաջ է քաշվել «ակնհայտ» գնահատողական հասկացության բացարձականացված սահմանում «չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով»: Հարկ է առանձնահատուկ կերպով ընդգծել, որ խոսքը գնում է նյութական և դատավարական նորմերի մասին, իսկ դրանցից յուրաքանչյուրի բովանդակության վերաբերյալ իրավագիտությունում առկա են տարբեր մոտեցումներ, մեկնաբանություններ: Այլ կերպ ասած, իրավագիտությունում առկա բազմակարծության (պլյուրալիզմի) պայմաններում անհնար է պատկերացնել իրավական նորմի այնպիսի կիրառում, որը հնարավոր չլինի կասկածի տակ դնել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Անժխտելի է, որ այն ինչ ակնհայտ չէ մեկ դատավորի համար, կարող է ակնհայտ լինել մյուսների համար, հատկապես, եթե նրանք համաձայն չեն դատավորի որոշման հետ: Իրավունքի կամ փաստի հարցի այն լուծումը, որը դատավորը կարող է ճիշտ համարել, նրա գործողությունները «վերագնահատողները» կարող են ակնհայտ սխալ համարել: Ի վերջո, պարզ է նաև, որ դատավորը որոշում կայացնելիս հազվադեպ է ընտրություն կատարում ակնհայտ ճիշտ և ակնհայտ սխալ երկու տարբերակների միջև: Սովորաբար այդ ընտրությունը կատարվում է երկու մրցակցող դիրքորոշումների միջև, որոնցից երկուսն էլ գոյության իրավունք ունեն: Հանգելով եզրակացության, որ նման դիրքորոշումներից մեկն ավելի ճիշտ կամ հավանական է, քան մյուսը՝ դատավորը որոշում է կայացնում հօգուտ մեկի

*կամ մյուսի: Ուստի, **ակնհայտ** չափանիշը ներկայացված բնորոշմամբ ոչ մի որոշակիություն չի տալիս դատավորին կողմնորոշվելու համար, թե ինչպիսին պիտի լինի իր ընտրությունը (որոշումը), որպիսի չառաջացնի կարգապահական պատասխանատվություն:*

Վերոգրյալից հետևում է, որ առաջարկվող սահմանման տառացի մեկնաբանման և կիրառման արդյունքում քննարկվող հիմքը կկրի զուտ հոչակագրային (դեկլարատիվ) բնույթ և չի կարող որևէ դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ խախտումը որպես կարգապահական պատասխանատվության հիմք գնահատելու համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն՝ այն պետք է լինի ակնհայտ և կոպիտ:

Անդրադառնալով խախտումը, որպես կոպիտ գնահատելու համար մասնավորից ընդհանուր (ինդուկտիվ) մեթոդով առաջարկվող դեպքերի ոչ սպառիչ թվարկմանը՝ հարկ է նշել հետևյալը.

Գործող իրավակարգավորմամբ կոպիտ է համարվում դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ: Եթե տվյալ իրավանորմի հեղինակներն ի նկատի են ունեցել, օրինակ, այն դեպքերը, երբ դատավորը դատական նիստի ժամանակ թույլ է տալիս սահմանված վարքագծի կանոնների խախտում, ապա դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումն արդեն նախատեսված է որպես դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք (153-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ): Ըստ որում, որևէ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված չեն «արդարադատության հեղինակազրկում» և «դատավորի բարձր կոչման հետ անհամատեղելիություն» եզրույթների բովանդակությունը և այն դեպքերի սպառիչ ցանկը, որոնց կատարումն անխուսափելիորեն հանգեցնում է արդարադատության հեղինակազրկման կամ դատավորի բարձր կոչման հետ անհամատեղելիության: Նույն դիրքորոշումը վերաբերում է նաև ՀՀ գործող դատական օրենսգրքի 153.2-րդ հոդվածի 3-րդ մասի իրավադրույթին այն տարբերությամբ, որ մի քանի միևնույն դեպքի առկայությունը չի կարող գնահատվել որպես նույն մեկ դեպքից տարբերվող:

Դեռ ավելին, գործնականում դժվար ապացուցելի է դատավորի կողմից նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը չարամտությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարելու փաստը:

Մասնավորապես՝ նյութական կամ դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքի և այդ հիմքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ժամկետների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն Արդարադատության խորհուրդն արտահայտել է 2011 թվականի հունիսի 24-ի թիվ ԱԽ-13-Ո-17 որոշմամբ, որով մասնավո-

բավես արձանագրել է. «ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում որպես կարգապահական պատասխանատվության հիմք սահմանված է «արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը»: Իսկ «արդարադատության իրականացում» արտահայտությունը լայն հասկացություն է և ընդգրկում է դատարանի կողմից իրականացվող ողջ դատավարական գործունեությունը՝ թե՛ գործն ըստ էության լուծող որոշումների կայացումը, թե՛ գործն ըստ էության չլուծող որոշումների կայացումը և թե՛ դրանց նախորդող ու հաջորդող դատական ընթացակարգերը: «Արդարադատության իրականացում» ձևակերպման նեղ մեկնաբանության և դրա ներքո միայն գործն ըստ էության լուծող որոշումների կայացումը դիտելու պարագայում դրա շրջանակից դուրս կմնան բազմաթիվ դատական ակտեր և ընթացակարգեր, որոնցում կարող են թույլ տրվել դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ այնպիսի խախտումներ, որոնք իրենց ծանրությամբ կարող են չզիջել գործն ըստ էության լուծող դատական ակտով թույլ տրված հնարավոր խախտումներին:

Այդպիսի դատական ակտեր են, օրինակ՝ անձի սահմանադրական իրավունքների սահմանափակում նախատեսող ակտերը (խափանման միջոց կալանքը ընտրելու, բնակարանի խուզարկությունը թույլատրելու մասին որոշումները և այլն), համաներման ակտը կիրառելու, գործով վարույթը կասեցնելու մասին դատական ակտերը և այլն:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքը վերաբերում է թե՛ գործն ըստ էության լուծող, թե՛ չլուծող դատական ակտերին, ինչպես նաև դրանց նախորդող ու հաջորդող դատական ընթացակարգերին:

Ինչ վերաբերում է կարգապահական վարույթ հարուցելու ժամկետին, ապա Խորհուրդն արձանագրում է հետևյալը. ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ 2-մասի 2-րդ կետը հստակ չի կարգավորում գործն ըստ էության չլուծող դատական ակտերում դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու դեպքում վարույթ հարուցելու ժամկետը: Խորհուրդը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերով ենթադրյալ կարգապահական խախտում թույլ տալու պարագայում վարույթ հարուցելու ժամկետ պետք է դիտել այդ հոդվածում նշված մեկ տարին՝ հաշված տվյալ որոշման կայացման պահից, որպեսզի կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետի մասով անիրավաչափ տարբերություն չդրվի գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտեր կայացնելու միջև»:

«...ներքին համոզումը հիմնված է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և անմիջական հետազոտման վրա և ոչ մի դեպքում չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից կամայականության դրսևորում:

Ապացույցների հետազոտման բազմակողմանիությունը նշանակում է, որ ապացույցներ հետազոտելիս և գնահատելիս դատարանը, հանդես գալով անկախ արբիտրի դիրքերից, պետք է հավասարապես հաշվի առնի և հետազոտի և՛ հայցվորի, և՛ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցները:

Ապացույցների հետազոտման օբյեկտիվությունը նշանակում է, որ ապացույցների գնահատման գործընթացում դատարանը պետք է զերծ մնա շահագրգիռ, կողմնակալ և կանխակալ մոտեցում ցուցաբերելուց:

Ապացույցների լրիվ հետազոտումը ենթադրում է, նախ՝ գործով վեճի լուծման համար բավարար ապացույցների առկայություն, երկրորդ՝ դատարանի կողմից գործում առկա բոլոր ապացույցների վերլուծություն...» *(տե՛ս Արդարադատության խորհրդի 21.01.2011 թվականի թիվ ԱԽ-1-Ո-4 որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ա. Խառատյանին, Ն. Տավարացյանին և Դ. Խաչատրյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին):*

Ապացույցների լրիվ հետազոտումը ենթադրում է, նախ՝ գործով վեճի լուծման համար բավարար ապացույցների առկայություն, երկրորդ՝ դատարանի կողմից գործում առկա բոլոր ապացույցների վերլուծություն...>> *(տե՛ս Արդարադատության* խորհրդի 21.01.2011 *թվականի թիվ ԱԽ-1-Ո-4 որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ա.Խառատյանին, Ն.Տավարացյանին և Դ.Խաչատրյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին):*

Իր հերթին, նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հասկացության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն Արդարադատության խորհուրդն արտահայտել է նախկինում կայացված որոշումներում: Այսպես՝ 2007 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ԱԽ-7-Ո-18 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է. «Օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտումներ են արդարադատության իրականացման ընթացքում ՀՀ Սահմանադրության, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը»:

Արդարադատության խորհրդի մեկ այլ՝ 2014 թվականի ապրիլի 4-ի թիվ ԱԽ-7-Ո-3 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ «Խորհուրդը մեկ անգամ ևս վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն արձանագրում է, որ դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ՀՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել

անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար, այն չի կարող նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ»:

*Այսպիսով, **արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ, վերագրվում է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս դրանք ընկալելու ունակությանը, որի արդյունքում օրենսդրական ոչ հստակ ու ապառիչ գործող իրավակարգավորումների պայմաններում կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտները և Արդարադատության խորհուրդը սրիպված են իրենց իրավագիտակցության ու աշխարհընկալման շրջանակներում համապատասխան <u>սուբյեկտիվ գնահատական տալ խախտման առկայության կամ բացակայության փաստին</u>: Արդյունքում, խախտվում է իրավական որոշակիության հիմնարար սկզբունքը, և դատավորը զրկվում է ողջամտորեն ու հստակորեն կանխատեսել ու կանխարգելել իր դատավարական գործողությունների իրավական հետևանքները՝ նյութական և/կամ դատավարական իրավունքների հնարավոր խախտում թույլ տալու առումով: Ըստ որում, գործող դատավորները չեն կարող <u>ողջամտորեն, հստակորեն կանխատեսել ու կանխարգելել իրենց դատավարական գործողությունների իրավական հետևանքները</u>՝ հիմք ընդունելով նաև Արդարադատության խորհրդի որոշումներում ամրագրված այն իրավական դիրքորոշումը, որն <u>ընդհանրական</u> կներկայացներ նույն խորհրդի պատկերացումը նյութական կամ դատավարական իրավունքի խախտման ակնհայտ ու կոպիտ լինելու շրջանակի կամ այդպիսին որակելու տեսական չափորոշիչների վերաբերյալ՝ <u>վերանալով կոնկրետ դեպքերից</u> (այստեղ մեզ համար անընդունելի է նաև Արդարադատության խորհրդի կողմից, այսպես կոչված, «վերադաս դատական ատյանի» գործառույթի փաստացի սրանձնումը՝ հատկապես կոնկրետ գործով փաստական հանգամանքներն ուսումնասիրելու, վկայակոչելու ու ՀՀ օրենսդրությունը մեկնաբանելու, կիրառելու առումով):*

Մինչդեռ, Արդարադատության խորհրդի վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, մեր կարծիքով, ամրագրում են չափազանց մուտավոր ու ընդհանրական մուտեցումներ խնդրո առարկա կարևորագույն հիմնահարցի կապակցությամբ և այստեղ վաղուց ի վեր անհրաժեշտ է օրենսդրական բավարար իրավակարգավորումների բացակայության պայմաններում Արդարադատության խորհրդի որոշմամբ սահմանել դատավորի կողմից թույլ տրված նյութական և/կամ դատավարական իրավունքի խախտումներն ակնհայտ ու կոպիտ որակելու <u>հստակ ու ապառիկ չափորոշիչները</u>: Ընդ որում, եթե վարույթ հարուցելու փուլում կամ Արդարադատության խորհրդում հարցի քննարկման ընթացքում առաջանում է վեճ խախտումն ակնհայտ ու կոպիտ որակելու կապակցությամբ, ապա այս դեպքում ար-

դեն իսկ խոսք չի կարող լինել կարգապահական պատասխանատվության մասին, քանի որ ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և/կամ օրենքների նորմերի խախտման ակնհայտ ու կոպիտ լինելն ենթադրում է <u>անվիճելիություն, անհերքելիություն, ինչպես նաև էական նշանակություն ունենալը</u>, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը (ի դեպ, նույն դիրքորոշումն ամրագրված է նաև Արդարադատության խորհրդի 2014 թվականի ապրիլի 4-ի թիվ ԱԽ-7-Ո-3 որոշմամբ):

Ընդ որում, խախտման ու դրա իրավական հետևանքների մասով Արդարադատության խորհրդի դիրքորոշումները ***հակասական են****: Այսպես, 2007 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ԱԽ-7-Ո-18 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ* «… էական խախտումները … հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը», *իսկ Արդարադատության խորհրդի մեկ այլ՝ 2014 թվականի ապրիլի 4-ի թիվ ԱԽ-7-Ո-3 որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ* «… էական, անվիճելի և անհերքելի խախտումներ … հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը»: *Ավելին, առաջին որոշման մեջ խոսք է գնում միայն էական խախտման մասին, իսկ երկրորդ որոշման մեջ՝ արդեն էական, անվիճելի և անհերքելի խախտման մասին: Այսպիսի իրավական դիրքորոշման անհստակությունը ևս խոչընդոտում է դատավորներին՝ ողջամտորեն, հստակորեն կանխատեսել ու կանխարգելել նյութական և/կամ դատավարական իրավունքի բնագավառում իրենց գործողությունների իրավական հնարավոր հետևանքները:*

Ուստի, Ծրագրի 3.4-րդ և 3.4.4-րդ կետերով նախատեսված այն հիմնադրույթները, ըստ որոնց արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

- ✓ *բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ,*
- ✓ *հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութա-*

կան և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը,

լիարժեք կերպով իրացված չեն գործող օրենսդրությունում, այդ թվում ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող, ՀՀ Ազգային ժողովի կողմից 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքների ուժով:

§3. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքը և դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

Հանրապետության Նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը նախատեսում է, որ արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

3.4. Բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ.

3.4.2. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը.

3.4.3. Ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ.

3.4.5. Ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելու հարցում միջազգային փորձը և սահմանել անհրաժեշտ կարգավորումներ:

… Անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհրդի նիստերը դռնբաց անցկացնելու վերաբերյալ՝ ըստ դրա արդյունքների կատարելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ: …

Անհրաժեշտ է ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշման հիման վրա համապատասխան դատական ակտը վերանայելու վերաբերյալ միջազգային փորձը և նախատեսել համապատասխան կարգավորումներ:

Դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների շրջանակներում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքին, Արդարադատության խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքին, Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերա-

բերյալ գործը կարճելու հիմքերին վերաբերող ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան իրավադրույթները փոփոխվել ու լրացվել են 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքներով, որոնք, մեր կարծիքով, լիարժեքորեն կյանքի չեն կոչել Ծրագրի վերը նշված հիմնադրույթները:

1/ Այսպես, համաձայն ՀՀ գործող դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի՝ «1. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատավորի բացակայության դեպքերի: Կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել դատավորի բացակայության ժամանակահատվածով:

2. Կարգապահական վարույթի շրջանակներում վարույթ հարուցող անձն իրավունք ունի՝

1) դատարանից պահանջելու և ուսումնասիրելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութեր.

2) դատարանում ծանոթանալու քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութերի, որոնց վերաբերյալ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ.

3) դատավորից պահանջելու գրավոր բացատրություններ.

4) կանչելու և լսելու վկաների.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու նյութեր.

6) դիմելու կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացած դիմում ներկայացրած անձին՝ լրացուցիչ պարզաբանումներ տալու առաջարկությամբ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք պարտավոր են տալ պարզաբանումներ:

3. Դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պարտավոր է վարույթ հարուցած անձին ներկայացնել գրավոր բացատրություններ:

4. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում վարույթ հարուցող անձը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական վարույթը կարճելու մասին.

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Արդարադատության խորհրդին դիմելու մասին:

5. Եթե արդարադատության նախարարը կամ վճռաբեկ դատարանի նախագահը կարճել են կարգապահական վարույթը, ապա այդ մասին տեղեկացնում են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորի կամ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթը կարճելու դեպքում Դատավորների ընդհանուր ժողովի

էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը այդ մասին տեղեկացնում է արդարադատության նախարարին, իսկ վճռաբեկ դատարանի պալատի դատավորի կամ պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթը կարճելու դեպքում՝ վճռաբեկ դատարանի նախագահին: Վարույթ հարուցողը իր կողմից կարգապահական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո չի կարող նույն հիմքով կրկին վարույթ հարուցել:

6. Եթե վարույթ հարուցող անձը որոշում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ դիմել Արդարադատության խորհրդին, ապա նա պետք է կազմի կարգապահական խախտման մասին եզրակացություն, որը պետք է նկարագրի դատավորի կողմից կատարված կարգապահական խախտում հանդիսացող յուրաքանչյուր արարք, ներկայացնի այդ արարքի կատարված լինելը հիմնավորող ապացույցներ, արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները, այդ թվում՝ կատարված արարքում դատավորի մեղքի առկայությունը և դրա տեսակը:

7. Մինչև կարգապահական վարույթի նյութերն Արդարադատության խորհուրդ ուղարկելը դրանց հետ իրավունք ունի ծանոթանալու այն դատավորը, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Դատավորին նյութերը հանձնվում են ոչ ուշ, քան սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վերջնաժամկետից երկու շաբաթ առաջ: Նյութերը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում դատավորն իրավունք ունի ներկայացնելու լրացուցիչ բացատրություններ կամ միջնորդություն հարուցելու լրացուցիչ ստուգումներ կատարելու մասին: Վարույթ հարուցած անձը դատավորի լրացուցիչ բացատրությունների կամ լրացուցիչ ստուգումների հիման վրա իրավունք ունի փոխելու իր եզրակացությունը, եթե դա չի վատթարացնում դատավորի վիճակը:

8. Վարույթ հարուցած անձը կարգապահական վարույթի նյութերն ուղարկում է Արդարադատության խորհրդին և այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել՝ հանձնման մասին ծանուցմամբ: Կարգապահական վարույթի նյութերն Արդարադատության խորհրդին ուղարկելու պահից վարույթ հարուցած անձը չի կարող հետ կանչել վարույթի նյութերը, և դրանք ենթակա են Արդարադատության խորհրդում ըստ էության քննության:

9. Կարգապահական վարույթի նյութերը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում դատավորն իրավունք ունի Արդարադատության խորհրդին ուղարկելու պատասխան: Դատավորի կողմից պատասխան չուղարկելը չի խոչընդոտում Արդարադատության խորհրդում նրա նկատմամբ կարգապահական գործի քննությանը: Դատավորի միջնորդությամբ խորհուրդը կարող է երկարաձգել դատավորին տրամադրված ժամկետը:

10. Վարույթ հարուցող անձը, վարույթին մասնակցած վկաները և այլ անձինք պարտավոր են պահպանել կարգապահական վարույթի գաղտնիությունը: Կարգապահական վարույթի շրջանակներում առաքվող բոլոր փաստաթղթերը պետք է առաքվեն փակ ծրարներով՝ «գաղտնի» դրոշմագրով:»:

Ուսումնասիրելով վերը հիշատակված իրավական նորմերը՝ գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասում դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, վարույթ հարուցած անձին գրավոր բացատրություն ներկայացնելու պարտականությունն անհրաժեշտ է ամրագրել որպես ***իրավունք՝ այն էլ, երբ կարգապահական վարույթ հարուցող անձի կողմից նախապես լիարժեքորեն ապահովվել է նույն դատավորի կարգապահական վարույթի բոլոր նյութերին ծանոթանալու իրավունքը*** *(ընդ որում, նույն հոդվածի 9-րդ մասի ուժով կարգապահական վարույթի նյութերը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում դատավորն <u>իրավունք ունի</u> Արդարադատության խորհրդին ուղարկելու պատասխան): Հակառակ դեպքում, ինչպես դատավորը կարող է պաշտպանվել ու ներկայացնել գրավոր բացատրություն վարույթ հարուցող սուբյեկտին, եթե չի կարողացել ծանոթանալ նյութերին (ի դեպ, ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով դատավորը, որի նկատմամբ վարույթ է հարուցվել, իրավունք ունի ծանոթանալու կարգապահական վարույթի նյութերին միայն մինչև դրանք Արդարադատության խորհուրդ ուղարկելը):*

2/ ՀՀ գործող դատական օրենսգրքի 158-րդ հոդվածը նախատեսում է, որ «1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է <u>որպես դատարան</u>: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին[14]:

2. Արդարադատության խորհրդի անդամը չի կարող ինքնաբացարկ հայտնել:

3. <u>Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության ապացուցման պարտականությունը կրում է վարույթը հարուցած անձը: Արդարադատության խորհրդի նիստում դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփաստված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին</u>:

14. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհրդի, որպես դատարան, գործելու հիմնախնդրին կանդրադառնանք ստորև՝ ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի թիվ ՍԴՈ-1063 որոշման լույսի ներքո:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը Արդարադատության խորհուրդը քննում է ողջամիտ ժամկետում:

5. Արդարադատության խորհրդի կողմից ուսումնասիրված փաստաթղթերը կցվում են քննված նյութերին՝ բնօրինակով կամ պատշաճ կերպով հաստատված պատճենով:»:

*ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ նպատակահարմար ենք գտնում սահմանել Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննելու **կոնկրետ՝ 30-օրյա ժամկետ**, որի արդյունքում դատավորը հնարավորություն կունենա ողջամտորեն ակնկալելու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ավարտը և արդյունավետ իրականացնել իր հիմնական սահմանադրական գործառույթը՝ արդարադատությունը:* Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ: *Իհարկե, կարելի է նախատեսել Արդարադատության խորհրդի իրավունքը որոշակի բարդ դեպքերում գործը քննելու ավելի երկար ժամկետ, որը չպետք է գերազանցի ընդհանուր 45 օրը (մոտ ամիս ու կես): Այս կապակցությամբ ուշագրավ է այն հանգամանքը, որ նույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտի ուսումնասիրության ընդհանուր տևողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, այսինքն՝ այս դեպքում օրենսդիրն իրավացիորեն սահմանել է հստակ ժամկետ:*

3/ ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արդարադատության խորհրդում հարցի քննությունը սկսվում է հարցի էության և կարգապահական խախտման մասին եզրակացության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է արդարադատության նախարարը, ապա վերջինս պարտավոր է ներկա գտնվել Արդարադատության խորհրդի նիստին և իրավունք ունի հանդես գալու անձամբ կամ նախարարության պետական ծառայողի միջոցով: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է վճռաբեկ դատարանի նախագահը, ապա հարցը զեկուցում է անձամբ: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից,

ապա Արդարադատության խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին եզրակացության վերաբերյալ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հանձնարարությամբ զեկուցում է դրա անդամներից մեկը:

2. Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի նյութերը Արդարադատության խորհրդին ուղարկելուց հետո կարգապահական վարույթ հարուցած անձին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք մեղմացնում են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած անձը պարտավոր է դրա մասին հայտնել Արդարադատության խորհրդին:

3. Արդարադատության խորհրդում վարույթ հարուցած անձի զեկուցումից հետո խորհուրդը լսում է այն դատավորի բացատրությունները, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Դատավորը Արդարադատության խորհրդում բացատրություն է տալիս կարգապահական խախտման մասին եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ: Նա կարող է ժխտել իր կողմից կարգապահական խախտում համարվող արարքի կատարման փաստը, վիճարկել արարքի որակումը՝ որպես կարգապահական խախտում, կամ վերոհիշյալ երկուսը միաժամանակ: Եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնվում է տվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Արդարադատության խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը:

4. Եթե դատավորը վիճարկում է իր կողմից կարգապահական խախտում կատարելու փաստը, ապա նրա բացատրությունները լսելուց հետո Արդարադատության խորհուրդն անցնում է վարույթի նյութերի և ապացույցների հետազոտմանը:

5. Արդարադատության խորհուրդն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ նիստին հրավիրելու ու հարցաքննելու վկաների: Վկաների չներկայանալու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի վկային բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու:

6. Արդարադատության խորհուրդը գործով հրավիրված վկաներին նախազգուշացնում է վկայություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ վկայություն տալու, իսկ փորձագետին՝ եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

7. Գործի նյութերի ուսումնասիրությունից հետո Արդարադատության խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց եզրափակիչ ելույթները, որից հետո անցնում է խորհրդակցական սենյակ՝ որոշում կայացնելու համար:

8. Խորհրդակցական սենյակում նախ քվեարկության է դրվում արարքի կատարման մեջ դատավորի մեղավորության հարցը, ապա կարգապահական տույժի տեսակի վերաբերյալ հարցը:»:

*ՀՀ դատական օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունը սահմանում է, որ եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնվում է փվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Արդարադատության խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը: Տվյալ պարագայում խոսք կարող է գնալ վարույթ հարուցող անձի եզրակացության **դատավորի կողմից ոչ իրավաչափ ընդունելու հնարավորության մասին**, որպիսի պարագայում եզրակացության ոչ իրավաչափ ընդունումը, օրինակ, առերևույթ հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին և/կամ առերևույթ խախտում որևէ մեկի իրավունքներն ու ազատությունները: **Այդպիսի դեպքերում Արդարադատության խորհուրդն ուղղակի պարտավոր է, նախ, ըստ էության քննության առնել վարույթ հարուցող անձի եզրակացությունը դատավորի կողմից ընդունելու իրավաչափության հարցը, որոշման մեջ շարադրել համապատասխան հիմնավորումները, նոր միայն անցնել դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը**:*

*Նույն հոդվածի 8-րդ մասը նախատեսում է խորհրդակցական սենյակում երկու հարցի առանձին քվեարկություն: Ստացվում է, որ խորհրդակցական սենյակում ընդհանրապես չի քվեարկվում այն հիմնարար հարցը, թե, արդյոք, դատավորի կողմից թույլ է տրվել ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված համապատասխան կարգապահական խախտում, թե ոչ. քվեարկության են դրվում միայն արարքի կատարման մեջ դատավորի մեղավորության և կարգապահական տույժի տեսակի վերաբերյալ հարցերը: Մեր կարծիքով, խորհրդակցական սենյակում քվեարկության կարող է դրվել միայն մեկ հիմնական հարց՝ **<u>Արդարադատության խորհրդի կոնկրետ որոշում ընդունելու հարցը</u>**, որն իր մեջ կներառի մյուս բոլոր կարևոր հարցերի պատասխանները:*

*Դեռ ավելին, ՀՀ դատական օրենսգիրքը չի պարունակում առանձին հոդված(ներ), որը կվերաբերի Արդարադատության խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում **<u>թույլատրելի ու վերաբերելի ապացույցների տեսակներին</u>**: Մասնավորապես՝ կարգապահական վարույթում Արդարադատության խորհրդի կողմից որպես ապացույց պետք է հետազոտվեն ու գնահատվեն վկաների կամ փորձագետների ցուցմունքները (վարույթի մասնակիցը ևս կարող է որպես վկա ցուցմունք տալ), գործում առկա փորձագիտական եզրակացությունները, ձայնագրություններն ու տեսագրությունները, գրավոր և իրեղեն ապացույցները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար: Արդարադատության խորհուրդն իրավունք պետք է ունենա նաև պահանջել ներկայացնելու գրավոր ապացույցների բնօրինակներ կամ դրանց նոտարական կամ այլ կարգով վավերացված պատճեններ:*

*Նույն օրենսգիրքը, որպես վարչական վարույթի մասնակից, բացի դատավորից չի նախատեսում նաև **երրորդ անձին**, որի իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք որոշմամբ:*

*Անհրաժեշտ է նաև նախատեսել առանձին իրավադրույթներ **վարույթային (պրոցեսուալ) ներկայացուցչության ինստիտուտի** վերաբերյալ՝ սահմանելով այն անձանց շրջանակը, ովքեր իրավասու են հանդես գալ որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ (այստեղ առավել հակված ենք փաստաբանական մենաշնորհի ներմուծմանը), այն անձանց սպառիչ շրջանակը, ովքեր չեն կարող մասնացել վարույթին որպես ներկայացուցիչ, ներկայացուցիչների ընդհանուր ու հատուկ լիազորությունների շրջանակը և այլ հարցեր:*

*Նույն օրենսգիրքը չի նախատեսում նաև համապատասխան հոդված, որը կնախատեսի վարույթի մասնակիցների վարույթային իրավունքը՝ **գրավոր բացարկ հայտնելու վարչական վարույթ հարուցող կամ իրականացնող պաշտոնատար անձին կամ կոլեգիալ կազմի ցանկացած անդամին:** Մասնավորապես՝ կարգապահական վարույթի մասնակիցները պետք է իրավասու լինեն գրավոր բացարկ հայտնել ինչպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտին (Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դեպքում՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամին), այնպես էլ կարգապահական վարույթն իրականացնող Արդարադատության խորհրդի ցանկացած անդամին, եթե վարույթ հարուցող կամ իրականացնող սուբյեկտը կամ կոլեգիալ կազմի անդամը՝*

ա) վարույթի մասնակից է.

բ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է.

գ) աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ.

դ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցչի ազգականն է՝ զավակը, ծնողը, հարազատ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քույրը կամ նրանց զավակը, հորեղբայրը կամ հորաքույրը կամ նրանց զավակը, մորեղբայրը կամ մորաքույրը կամ նրանց զավակը, ամուսինը (ընդ որում, ամուսնալուծության փաստը սույն կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ), փեսան, հարսը, ամուսնու ծնողները կամ նրանց զավակը կամ եղբայրը կամ քույրն է.

ե) նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:.

զ) մինչև գործի քննարկման ավարտը, տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ, մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին.

է) տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի.

ը) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնապար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ:

Ըստ որում, բացարկը կարող է հայտնվել մինչև վարույթն ավարտվելը՝ վարույթի այն փուլում, երբ բացարկ հայտնողին հայտնի է դառնում օրենքով սահմանված որևէ հիմքի առկայությունը: Նույն պաշտոնապար անձին կրկին հայտնված բացարկը կարող է քննարկվել, եթե դրանում մատնանշված են նոր հիմքեր կամ նոր փաստեր:

Բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան բացարկ հայտնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Բացարկի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է միանձնյա հանդես եկող պաշտոնապար անձը, ում նկատմամբ բացարկ է հայտնվել, իսկ կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացվելու դեպքում՝ համապատասխան հանձնաժողովը կամ Արդարադատության խորհուրդը՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ դեպքում քվեարկությանը չի մասնակցում հանձնաժողովի կամ խորհրդի այն անդամը, ում դեմ բացարկ է հայտնվել: Հայտնված բացարկի վերաբերյալ որոշումը պետք է լինի պատճառաբանված ու հրապարակվի դռնբաց նիստում:

*Այս համատեքստում անհրաժեշտ է նաև նախատեսել, որ բացարկ հայտնելու վերը հիշատակված որևէ հիմքի առկայության դեպքում կարգապահական վարույթ հարուցող կամ իրականացնող սուբյեկտը (եթե վարույթն իրականացնում է կոլեգիալ մարմինը, ապա կոլեգիալ մարմնի անդամը) պարտավոր է անհապաղ **ինքնաբացարկ հայտնել**: Եթե ինքնաբացարկ հայտնել կամ բացարկը բավարարել է կարգապահական վարույթ հարուցող միանձնյա սուբյեկտը, ապա այս դեպքում հարուցված վարույթը համարվում է կարճված: Եթե ինքնաբացարկ է հայտնել կոլեգիալ մարմնի անդամը, ապա այդ մարմինը վարույթն իրականացնում է կոլեգիալ կազմի մնացած անդամների մասնակցությամբ: Եթե ինքնաբացարկ հայտնելու հիմքը հայտնի է դարձել գործի վարույթն սկսվելուց հետո, ապա նրանք պետք է ինքնաբացարկ հայտնեն վարույթի այն փուլում, երբ ի հայտ է եկել համապատասխան հիմքը: Ինքնաբացարկը նույնպես հայտնվում է գրավոր, որը պետք է լինի պատճառաբանված: Ինքնաբացարկի պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն:*

*Կարծում ենք նաև, որ անհրաժեշտ է նախատեսել **վարույթի կասեցման ինստիտուտի** վերաբերյալ առանձին հոդված: Այսպես, Արդարադատության խորհուրդը <u>պարտավոր է</u> կասեցնել կարգապահական վարույթը, եթե՝*

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող որոշման ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով վեճն ըստ էության լուծող, օրինական ուժի մեջ մտած, վերջնական դատական ակտ կայացնելը,

բ) առկա է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է տվյալ գործով հետագա վարույթի իրականացմանը:

Արդարադատության խորհուրդը <u>կարող է</u> կասեցնել կարգապահական վարույթը, եթե՝

ա) նշանակվել է փորձաքննություն,

բ) վարույթի մասնակից դատավորը կամ երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական անձը հետախուզման մեջ է կամ անհայտ է նրա գտնվելու վայրը:

Խորհուրդը կարգապահական վարույթը կասեցնելու մասին կայացնում է որոշում՝ այն եռօրյա ժամկետում ուղարկելով մասնակիցներին: Վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում: Վերը նշված դեպքերում վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո:

*Ի վերջո՝ նպատակահարմար է նախատեսել համապատասխան իրավական դրույթներ, որոնք կվերաբերեն **վարույթի իրականացման հիմնարար սկզբունքներին, լեզվին, մասնակիցների միջև գործով էական նշանակություն ունեցող և ապացուցման ենթակա փաստերի ապացուցման բեռը բաշխելուն, նիստը հետաձգելուն, վարույթի մասնակիցների ու ներկաների նկատմամբ կարգապահական սանկցիաներ կիրառելուն, վարույթի գործը կազմելուն ու հաշվառելուն** և այլ վարույթային (պրոցեսուալ)[15] հարցերին: Ի դեպ, Արդարադատության խորհրդի նիստերի ծանուցմանը և արձանագրմանը վերաբերող իրավահարաբերությունները որոշակի կարգավորված են ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասով և 108-րդ հոդվածով: Ընդհանրապես, **դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթն ենթակա է մանրամասն իրավակարգավորման՝ ներառելով նույն վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերը**:*

4/ ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածը վերաբերում է դատավորի իրավունքներին և պարտականություններին՝ Արդարադատության խորհրդում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս, ըստ որի «1. Դատավորն իրավունք ունի՝

1) ծանոթանալու Արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները.

2) հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու.

3) ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը.

15. Այստեղ տեղին չէ օգտագործել «դատավարական» եզրը, քանի որ վերջինս վերաբերում է բացառապես Սահմանադրությամբ նախատեսված դատարանի և դատավարության մասնակիցների միջև համապատասխան վարույթի շրջանակներում ծագող դատավարական իրավահարաբերություններին:

4) մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով:

2. Դատավորի փաստաբանը բոլոր դեպքերում իրավունք ունի մասնակցելու Արդարադատության խորհրդում տվյալ դատավորի վերաբերյալ հարցի քննարկմանը և օգտվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներից:

3. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում Արդարադատության խորհրդին բացատրություններ տալը նրա պարտականությունն է:

4. Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից:

5. Արդարադատության խորհրդի կանչին դատավորի անհարգելի չներկայանալու դեպքում Արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցն իրավունք ունի քննելու դատավորի բացակայությամբ:»:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առնչությամբ գտնում ենք, որ դատավորին վերապահված չէ, օրինակ, գործի նյութերից լուսանկարներ, լուսապատճեններ անելու, նիստի արձանագրությունը սրանալու վարույթային (պրոցեսուալ) իրավունքը, ինչը ժամանակակից տեխնիկական միջոցների արագ զարգացման պայմաններում դժվարեցնում է գործի նյութերն ուսումնասիրելը և արագ օգտագործելը:

Ընդհանրապես նախատեսված չէ դատավորի Արդարադատության խորհրդի անդամին բացարկ հայտնելու (միջնորդություն ներկայացնելու) իրավունքը, ինչպես նաև այն ներկայացնելու ձևաչափը, հիմքերը, քննության կարգը և որոշում ընդունելը[16]. սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում միայն սահմանված է դատավորի միջնորդություն ներկայացնելու իրավունքը, սակայն տվյալ և այլ իրավադրույթներում մասնավորեցված չեն դրանց շրջանակը:

Գտնում ենք նաև, որ օբյեկտիվ անհրաժեշտություն է սահմանել նաև Արդարադատության խորհրդի որոշումներն օրենքով նախատեսված դեպքերում ՀՀ վարչական դատարան բողոքարկելու իրավունքը[17]:

Այսպիսով, Ծրագրի 3.4-րդ, 3.4.2-րդ, 3.4.3-րդ և 3.4.5-րդ կետերով նախատեսված այն հիմնադրույթները, ըստ որոնց արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

16. Այս հիմնահարցի կապակցությամբ սույն աշխատության շրջանակներում արդեն իսկ ներկայացվել են որոշակի առաջարկներ:
17. Այս հիմնահարցին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

- ✓ *բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ.*
- ✓ *ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը.*
- ✓ *ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ.*
- ✓ *ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի սկզբնական և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելու հարցում միջազգային փորձը և սահմանել անհրաժեշտ կարգավորումներ,*

լիարժեք կերպով կամ ընդհանրապես իրացված չեն գործող օրենսդրությունում, այդ թվում՝ ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող, ՀՀ Ազգային ժողովի կողմից 10.06.2014 թվականին ընդունված ՀՕ-47-Ն և 21.06.2014 թվականին ընդունված ՀՕ-86-Ն օրենքների ուժով:

§4. Արդարադատության խորհրդի վերջնական որոշումների հետ կապված հիմնահարցերը

1/ ՀՀ գործող դատական օրենսգրքի 161-րդ հոդվածը նախատեսում է, որ «1. Մեկ կարգապահական վարույթի քննության շրջանակներում, անգամ եթե նույն դատավորը կատարել է մի քանի կարգապահական խախտում, Արդարադատության խորհուրդը կայացնում է մեկ որոշում:

2. Որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում: Արդարադատության խորհրդում քննված հարցով որոշումը կայացնելու համար խորհրդակցական սենյակում գտնվելու իրավունք ունեն միայն Արդարադատության խորհրդի անդամները: Որոշումն ընդունվում է Արդարադատության խորհրդի անդամների բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ավելի բարենպաստ է դատավորի համար:

3. Արդարադատության խորհրդի խորհրդակցական սենյակում քննարկված հարցերը, խորհրդի անդամների կողմից արտահայտված դիրքորոշումը և քվեարկության արդյունքները հրապարակման ենթակա չեն ինչպես նիստի ընթացքում, այնպես էլ գործով քննությունն ավարտվելուց հետո, բացառությամբ խորհրդի անդամի կողմից արտահայտված դիրքորոշման շրջանակներում սույն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2.1-ին մասին համապատասխան՝ խորհրդի անդամի կողմից ներկայացված հատուկ կարծիքի դեպքի:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) դատավորին սույն օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին.

2) գործը կարճելու մասին:»:

Իսկ ըստ նույն օրենսգրքի 157-րդ հոդվածի՝ «1. Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.

3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.

4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:

2. Նախազգուշացումը դատավորին տրվող պաշտոնական նախատինք է, որը կիրառվում է Արդարադատության խորհրդի կողմից նվազ

ծանրության ճանաչված կարգապահական խախտման համար, եթե դատավորը չունի տույժ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի տեսակը ենթակա է կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար:

4. Դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Արդարադատության խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, դատավորի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, դատավորին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

5. Եթե նկատողություն կամ խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, իսկ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:

6. Եթե դատավորը հաջորդաբար ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնք առաջացնում են աշխատավարձի իջեցում, ապա աշխատավարձի ընդհանուր իջեցումը յուրաքանչյուր ամիս չի կարող գերազանցել աշխատավարձի 50 տոկոսը:»:

Ըստ նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի՝ «1. Դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելը նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է: Կարգապահական վարույթի և գործի քննության նկատմամբ կիրառելի են սույն գլխի դրույթներն այնքանով, որքանով չեն հակասում սույն հոդվածի դրույթներին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով կարգապահական վարույթը կարող է հարուցվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումից մեկ տարի հետո:

3. Եթե վարույթը հարուցելու համար հիմք են հանդիսացել միայն սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումները, ապա Արդարադատության խորհուրդը կարող է դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառել՝

1) նախազգուշացում.

2) նկատողություն, որը զուգորդվում է՝ դատարանի նախագահի հավելավճարից 6 ամիս ժամկետով զրկելով.

3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատարանի նախագահի հավելավճարից 12 ամիս ժամկետով զրկելով.

4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:

4. Եթե Արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում որոշում է, որ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահը խախտել է իր պարտականությունները թե՛ որպես դատավոր, թե՛ որպես նախագահ, ապա կիրառում է հետևյալ կարգապահական տույժերից մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն, որը զուգորդվում է՝ 6 ամիս ժամկետով դատավորի աշխատավարձի 25 տոկոսից և դատարանի նախագահի հավելավճարից զրկելով.

3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ 12 ամիս ժամկետով դատավորի աշխատավարձի 25 տոկոսից և դատարանի նախագահի հավելավճարից զրկելով.

4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:»:

Նախ, օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերով և 165-րդ հոդվածի 3-4-րդ մասերի 2-3-րդ կետերով որպես կարգապահական տույժ նախատեսված նկատողությունը կամ խիստ նկատողությունը զուգորդվում է համապատասխանաբար 6 կամ 12 ամիս դատավորի աշխատավարձի 25 տոկոսից և/կամ դատարանի նախագահի հավելավճարից զրկելով: Այս կապակցությամբ գտնում ենք, որ վեց ամիս կամ մեկ տարի ժամկետով դատավորին իր իսկ աշխատավարձի որոշակի էական չափաբաժնից զրկելն ուղղակիորեն անդրադառնում է վերջինիս սոցիալական վիճակի (կենսամակարդակի) վրա, որի արդյունքում կարող է աճել նույն դատավորի կողմից կոռուպցիոն դրսևորումների կամ այլ աղբյուրներից եկամուտներ ստանալու ռիսկը, ինչն անթույլատրելի է և ուղղակիորեն բացասաբար անդրադառնում մ դատավորի անաչառության, մ անկախության վրա (դատավորի աշխատավարձը, հավելավճարներն ու արտոնյալ կենսաթոշակը հանդիսանում են դատավորի անկախության ապահովման կարևորագույն բաղադրիչներից մեկը): Հետևապես, ***առաջարկվում է ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերից և 165-րդ հոդվածի 3-4-րդ մասերի 2-3-րդ կետերից հանել (ուժը կորցրած ճանաչել) համապատասխանաբար 6 կամ 12 ամիս դատավորի աշխատավարձի 25 տոկոսից և/կամ դատարանի նախագահի հավելավճարից զրկելու բաղադրիչը՝ որպես կարգապահական տույժ թողնելով միայն նկատողությունը և խիստ նկատողությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել նաև 157-րդ հոդվածի 6-րդ մասը: Ընդ որում, նկատողություն կամ խիստ նկատողություն կարգապահական տույժերը միաժամանակ կարող են զուգորդվել, օրինակ, նյութական և/կամ դատավարական իրավունքի, վարքագծի կանոնների կոնկրետ թեմաներով կարգազանց դատավորի արտահերթ պարտադիր վերապատրաստում անցնելու, Երևան քաղաքի***

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից որևէ մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան կամ վերադաս ատյանից ստորադաս ատյանի դատարան տեղափոխելու հետ:

*Այստեղ ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը նախազգուշացման ու դատավորի լիազորությունները դադարեցնելու համար Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ 157-րդ հոդվածի 2-3-րդ մասերով որոշակիորեն հստակեցրել է դրանց կիրառման հիմքն ու նպատակը, սակայն որևէ իրավադրույթ չի նախատեսել նկատողության ու խիստ նկատողության վերաբերյալ, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է. այստեղ իրավակարգավորումը մնացել է թերի: Փաստորեն, Արդարադատության խորհուրդը ներկայումս հայեցողաբար ու անհիմն կարող է ընտրել կարգապահական տույժի տեսակը՝ այդ մասով չներկայացնելով որևէ հիմնավորում, ինչը տեղի է ունենում առ այսօր: Հետևաբար, **խիստ անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել կարգապահական յուրաքանչյուր տույժի, հատկապես նկատողության ու խիստ նկատողության, կիրառման հիմքն ու նպատակը՝ տարանջատելով տույժերը երեք տեսակի՝ մեղմ, միջին ու ծանր***:

Վերը հիշատակված 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական առավել ծանր տույժի (դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը) առնչությամբ հատկապես հիշարժան է Սահմանադրության գործող 95-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ըստ որի Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝ <u>դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին</u>, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ <u>նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին</u>:

*Տվյալ պարագայում անհրաժեշտ է ընդգծել, որ Սահմանադրության վերոնշյալ իրավադրույթն **Արդարադատության խորհրդի կողմից Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին առաջարկ ներկայացնելն իրավացիորեն չի համարում կարգապահական պատասխանատվություն**, քանի որ այդ երկու եզրույթները մեկը մյուսից տարանջատված են ստորակետով: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, մեր կարծիքով, հակասելով Սահմանադրության 95-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավակարգավորումներին ու բովանդակությանը, որպես առավել ծանր կարգապահական պատասխանատվության (տույժի) տեսակ նախատեսում է հենց դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը, այսինքն՝ **զուտ առաջարկ ներկայացնելն արդեն իսկ համարում է կարգապահական տույժ այն դեպքում, երբ***

կարգապահական պատասխանատվության կամ տույժի տեսակ կարող է դիտարկվել բացառապես Հանրապետության Նախագահի կողմից դատավորի լիազորությունների դադարեցումը: *Այսպիսով, <u>ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետն անհրաժեշտ է վերջապես ուժը կորցրած ճանաչել</u>:*

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասին, ապա այստեղ խոսքը գնում է միայն դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման մասին, ինչը բավարար չէ վերջինիս լիազորությունների դադարեցնելու համար: Մասնավորապես՝ առանց այդ էլ կարգապահական խախտումը պետք է որակվի ակնհայտ ու կոպիտ, որպեսզի հանգեցնի կարգապահական պատասխանատվության, իսկ պարբերական խախտումների դեպքում գործ ունենք ոչ թե եզակի, այլև մեկից ավելի դեպքերի հետ: Հետևապես, գտնում ենք, որ 157-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «3. Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով առաջարկ (միջնորդություն) է ներկայացնում Հանրապետության Նախագահին՝ դատավորի լիազորությունների դադարեցնելու համար, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական սիստեմատիկ կամ պարբերական բնույթ կրող ակնհայտ ու կոպիտ մեկից ավելի խախտումների, ինչպես նաև առերևույթ ակնհայտ ու կոպիտ եզակի խախտման հետևանքով վերջինս այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար:»:

Այս կապակցությամբ նույն օրենսգրքի 166-րդ հոդվածը սահմանում է, որ եթե Հանրապետության Նախագահը Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, չի դադարեցնում դատավորի լիազորությունները, ապա միջնորդությունը համարվում է մերժված: <u>Այդ դեպքում օրենքի ուժով դատավորը համարվում է համապատասխանաբար սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 165-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի ենթարկված</u>:

Այս առնչությամբ կարծում ենք, որ անընդունելի է օրենքի ուժով դատավորին համարել կարգապահական պատասխանատվության, այն էլ՝ խիստ նկատողության, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից և/կամ դատարանի նախագահի հավելավճարից զրկելով, ենթարկված, եթե Հանրապետության Նախագահն Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, չի դադարեցնում դատավորի լիազորությունները[18]*: Տվյալ դեպքում միջնորդությունն օրենքի*

18. Ի դեպ, ՀՀ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց՝ 18.05.2007 թվականից սկսած առ այսօր մեզ հայտնի չէ որևէ դեպք, երբ Հանրապետության Նախագահն Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունը ստանալուց հետո չի դադարեցրել դատավորի լիազորությունները:

ուժով համարվում է մերժված, ինչը կարող է տեղի ունենալ բացառապես նույն միջնորդության (առաջարկի) անհիմն լինելու պարագայում. հակառակ դեպքում Հանրապետության Նախագահի կողմից կընդունվի Արդարադատության խորհրդի համապատասխան առաջարկը կամ կբավարարվի միջնորդությունը, որի արդյունքում կդադարեցվեն դատավորի լիազորությունները: Մինչդեռ, Նախագահի կողմից անհիմն միջնորդության մերժման դեպքում Արդարադատության խորհուրդը որևէ գործողություն փաստացի չի էլ կատարում և ոչ իրավացիորեն օրենքի ուժով վրա է հասնում մեկ այլ կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից և/կամ դատարանի նախագահի հավելավճարից զրկելով: Այս դեպքում նպատակահարմար է օրենսգրքի 166-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. **«Այդ դեպքում Արդարադատության խորհուրդը պարտավոր է վերսկսել համապատասխան վարույթը և անմիջապես կայացնել վարույթը կարճելու մասին որոշում:»**:

ՀՀ դատական օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ, ըստ որի դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելը նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է[19], գտնում ենք, որ այստեղ ընդհանրապես խոսք չի կարող գնալ կարգապահական որևէ տույժի ենթարկելու մասին, քանի որ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահը նույնպես հանդիսանում է դատավոր և կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել բացառապես իր որպես դատավորի վարքագծի կանոնների խախտման համար: Մինչդեռ, նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ եթե վարույթը հարուցելու համար հիմք են հանդիսացել միայն սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումները, ապա Արդարադատության խորհուրդը կարող է դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառել՝ 1) նախազգուշացում, 2) նկատողություն, որը զուգորդվում է՝ դատարանի նախագահի հավելավճարից 6 ամիս ժամկետով զրկելով, 3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատարանի նախագահի հավելավճարից 12 ամիս ժամկետով զրկելով, 4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը: Գտնում ենք, որ ***որևէ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից նույն օրենսգրքով սահմանված նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելը կամ անգործություն դրսևորելը կարող է հանգեցնել միմիայն Արդարադատության խորհրդի կողմից Հանրապետության Նախագահին դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի լիազորությու-***

19. Ի դեպ, ՀՀ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց՝ 18.05.2007 թվականից սկսած առ այսօր մեզ հայտնի չէ որևէ դեպք, երբ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու համար նա ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

ները դատարեցնելու առաջարկ (միջնորդություն) ներկայացնելուն[20], ինչն ենթադրում է, որ այդ անձը կշարունակի պաշտոնավարել նույն դատարանում որպես դատավոր, քանի որ դատարանի ոչ պատշաճ նախագահ լինելը մեխանիկորեն չի ենթադրում ոչ պատշաճ դատավոր:

Ավելին, նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, որպես կարգապահական առավել ծանր տույժ, նախատեսում է դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը: Ստացվում է, որ եթե դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից նույն օրենսգրքով սահմանված նախագահի իր պարտականություններն իրականացնում է ոչ պատշաճ կամ դրսևորում անգործություն, ապա հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ դադարեցվի վերջինիս որպես դատավորի լիազորությունները, ինչը նույնպես անընդունելի է: Հետևապես, ՀՀ դատական օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. «**3. Եթե վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել միայն դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից օրենքով սահմանված նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելը կամ անգործություն դրսևորելը, ապա Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով կարող է առաջարկ (միջնորդություն) ներկայացնել Հանրապետության Նախագահին՝ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի լիազորությունները դադարեցնելու և նույն դատարանում դատավոր նշանակելու համար:**»:

*Ինչ վերաբերում է նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասին, ապա կարծում ենք, որ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահը կարող է ենթարկվել **կարգապահական պատասխանատվության բացառապես իր որպես դատավոր վարքագծի կանոնների խախտման համար**, այն էլ՝ առավելագույնը նույն օրենսգրքի 157-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում և համահավասար մյուս դատավորների հետ. Արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում չի կարող կիրառել կարգապահական տույժ, եթե դատարանի (վճռաբեկ դատարանի*

20 Այստեղ ուշագրավ է նաև այն հիմնահարցը, որ սահմանադրաիրավական առաջիկա բարեփոխումների շրջանակներում Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետից նպատակահարմար է հանել Հանրապետության Նախագահի սահմանադրական այն իրավազորությունը, ըստ որի վերջինս արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում նրանց լիազորությունները՝ օրենքով այն վերապահելով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կամ Արդարադատության խորհրդի իրավասությանը՝ հաշվի առնելով այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ այդ դատարանների նախագահների պաշտոնավարումն անհրաժեշտ է սահմանափակել մեկ կամ երկու տարվա ժամկետով՝ ռոտացիոն սկզբունքի կիրառմամբ: Դրանով իսկ այդ դատարանների նախագահները ստիպված կլինեն զբաղվել միմիայն դատարանի վարչական հարցերով, որի արդյունքում էապես կրճատվի նույն դատարանի դատավորների իրական անկախության ապահովման մակարդակը:

*պալատի) նախագահը իախիրել է իր պարտականությունները թե՛ որպես դատավոր, թե՛ որպես նախագահ, քանի որ երկու դեպքերում իրավական հետևանքները տարբեր են: Ուստի, **165-րդ հոդվածի 4-րդ մասն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել**:*

2/ ՀՀ գործող դատական օրենսգրքի 162-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Արդարադատության խորհուրդը կարճում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը այն դեպքում, երբ՝

1) հիմնավորված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը.

2) վարույթը հարուցած անձը խախտել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները, եթե դատավորը համաձայն է վարույթի կարճմանը նշված հիմքով.

3) դադարեցվել են նրա լիազորությունները, կամ նա ազատվել է իր պաշտոնից:

2. Եթե Արդարադատության խորհուրդը նպատակահարմար չի գտնում դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց, ապա կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը և կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը: Սույն մասը նույն դատավորի նկատմամբ կարող է կիրառվել միայն մեկ անգամ:»:

*Այս կապակցությամբ գտնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, բացի ժամկետները խախտելու հիմքից, նպատակահարմար է նախատեսել նաև վարույթը հարուցած անձի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի օրենքով սահմանված **ընթացակարգի էական խախտման հիմքը**:*

Ավելին, փվյալ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ. **«Միևնույն հիմքերով նույն դատավորի նկատմամբ հետագայում չի կարող հարուցվել կարգապահական վարույթ, իսկ հարուցված վարույթն ենթակա է կարճման, եթե այդ հիմքերով նախկինում Արդարադատության խորհուրդն արդեն կարճել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը:»**:

3/ Նույն օրենսգրքի 163-րդ հոդվածը նախատեսում է, որ <<1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Արդարադատության խորհրդի որոշումը պետք է պարունակի՝

1) Արդարադատության խորհրդի անվանումը և կազմը.

2) Արդարադատության խորհրդում հարցի քննության վայրը և ժամանակը.

3) այն դատավորի անունը, ազգանունը և պաշտոնը, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ.

4) վարույթը հարուցած անձի անունը, ազգանունը և պաշտոնը.

5) գործի հանգամանքները.

6) վարույթը հարուցած անձի կամ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում նրա ներկայացուցչի դիրքորոշումը.

7) այն դատավորի բացատրությունները, որի նկատմամբ վարույթ է հարուցվել.

8) այն անձանց բացատրությունները, որոնք հրավիրվել են Արդարադատության խորհրդի նիստին.

9) դատավորի անձը բնութագրող հանգամանքները.

10) Արդարադատության խորհրդի պատճառաբանված եզրակացությունը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

11) սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշումը:

2. Գործի քննությունը ավարտված հայտարարելուց հետո Արդարադատության խորհուրդն անցնում է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու համար: Սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվում է գործի քննության ավարտման օրը: Սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման հրապարակման հետ մեկտեղ Արդարադատության խորհուրդը հայտարարում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին սույն օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման հրապարակման վայրը և ժամանակը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը հրապարակվում է սույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման հրապարակման օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում:

2.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելիս Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք, որը Արդարադատության խորհրդի որոշման հետ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

3. Որոշումը հրապարակվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ուղարկվում է վարույթ հարուցած անձին, դատավորին և Դատական դեպարտամենտ, իսկ Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ դիմելու մասին որոշումը՝ նաև Հանրապետության Նախագահին:

4. Արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Վերը հիշատակված 163-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ գտնում ենք, որ Արդարադատության խորհրդի որոշումներ կայացնելու համար նախատեսված խորհրդակցական սենյակը պետք է ապահովի ***խորհրդի անդամների քննարկումների լիարժեք գաղտնիությունը և արտաքին աշխարհի հետ որևէ կապի բացառումը (իհարկե, այն պետք է պատշաճ կահավորված լինի, որպեսզի ապահովի անդամների քննարկումների հարմարավետությունը)****: Խորհրդի անդամները չեն կարող լքել խորհրդակցական սենյակը մինչև համապատասխան որոշում կայացնելը:* *Ավելին,* ***խորհրդակցական սենյակում, մեր կարծիքով, չպետք է ներկա գտնվի ոչ մեկը քննարկումներին Վճռաբեկ դատարանի նախագահի՝ դատավոր անդամների վրա վերջինիս հնարավոր ազդեցությունը բացառելու նպատակով,*** *քանի որ Վճռաբեկ դատարանի նախագահը, համապատասխան Սահմանադրության 94.1-րդ հոդվածի պահանջներին, միայն պարտավոր է վարել խորհրդի նիստերը՝ առանց քվեարկության իրավունքի: Ուստի, հիշյալ իրավակարգավորումներն անհրաժեշտ է ամրագրել 163-րդ հոդվածի 2-րդ մասում, մասնավորապես՝ այն կարող է լրացվել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.* «**Արդարադատության խորհրդի որոշումներ կայացնելու համար առանձնացված խորհրդակցական սենյակը պետք է ապահովի խորհրդի անդամների քննարկումների լիարժեք գաղտնիությունը և բացառի արտաքին աշխարհի հետ որևէ կապը: Խորհրդի անդամները չեն կարող լքել խորհրդակցական սենյակը մինչև համապատասխան որոշում կայացնելը: Բացի նիստին մասնակցող Արդարադատության խորհրդի անդամներից, խորհրդակցական սենյակում չի կարող ներկա գտնվել որևէ այլ անձ, այդ թվում՝ նիստը վարող Վճռաբեկ դատարանի նախագահը:**»:

4/ Համաձայն նույն օրենսգրքի 164-րդ հոդվածի՝ «1. Արդարադատության խորհուրդն իրավունք ունի վերանայելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին իր որոշումը նոր երևան եկած հանգամանքներով:

2. Արդարադատության խորհրդի որոշումը վերանայելու միջնորդությունը կարող է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած անձի կամ այն դատավորի կողմից, որին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում է կայացվել:

3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը վերանայելու համար հիմք հանդիսացող հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է միջնորդությունը ներկայացրած անձը:

4. Եթե Արդարադատության խորհուրդը գտնում է, որ բացակայում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու հիմքերը, ապա որոշում է ընդունում կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ:

5. Արդարադատության խորհրդի որոշումը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Արդարադատության խորհուրդը ուժը կորցրած է ճանաչում իր որոշումը և կայացնում է նոր որոշում:

6. Եթե Արդարադատության խորհուրդը որպես կարգապահական տույժ կիրառել է դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը, և Հանրապետության Նախագահը այդ միջնորդության հիման վրա դադարեցրել է դատավորի լիազորությունները, ապա Արդարադատության խորհրդի որոշումը նոր երևան եկած հանգամանքներով ուժը կորցրած ճանաչելու դեպքում խորհուրդը որոշում է կայացնում կարգապահական տույժի ենթարկված դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնելու միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելու վերաբերյալ:

7. Հանրապետության Նախագահը միջնորդությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերականգնում է դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում: Կարգապահական տույժի ենթարկված դատավորի պաշտոնում մինչև դատավորի վերականգնումը կատարված նշանակումը արգելք չէ դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնելու համար: Այդ դեպքում վերականգնված դատավորը ձեռք է բերում սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ կրճատված դատավորի կարգավիճակ:»:

Տվյալ իրավանորմերի առնչությամբ, նախ, նպատակահարմար է օրենսդրորեն հստակեցնել նոր երևան եկած, դատավորի համար միայն բարենպաստ հանգամանքների հասկացությունը՝ մասնավորապես նույն հոդվածի 1-ին մասը լրացնելով հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «**Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին իր որոշումը վերանայելու անվերապահ հիմքեր են նոր երևան եկած, դատավորի համար բարենպաստ այն հանգամանքները, որոնք Արդարադատության խորհրդի, կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտի և կարգապահական տույժի ենթարկված դատավորի կանքից ու հնարավորությունից անկախ հայտնի չեն եղել ու չէին կարող հայտնի լինել կարգապահական վարույթի ողջ ընթացքում և էական նշանակություն ունեն նույն վարույթի ելքի համար**:»: *Հակառակ դեպքում ստացվում է, որ նոր երևան եկած հանգամանքները կարող են լինել նաև կարգապահական տույժի ենթարկված դատավորի համար ոչ բարենպաստ և հիմք հանդիսանան կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը վերանայելու համար՝ առավել ծանր տույժ կիրառելու իմաստով: Այս համատեքստում վերախմբագրման կարիք ունի նաև նույն հոդվածի 5-րդ մասը:*

Առավել ուշագրավ է 164-րդ հոդվածի 7-րդ մասը, քանի որ չի նախատեսում դատավորին իր նախկին պաշտոնում վերականգնելու դեպքում հար-

կադիր պարապուրդի համար չափացված ողջ աշխատավարձի, հավելավճարների հատուցում սրանալու իրավունքը[21] և իրավասու մարմնի դրանք վճարելու պարտականությունը, հակառակ դեպքում գործող իրավակարգավորմամբ դատավորին իր նախկին պաշտոնում վերականգնելը տեղի է ունենում առանց չափացված օրինական եկամտի հատուցման: Ըստ որում, այս համատեքստում խոսք կարող է գնալ նաև հարկադիր պարապուրդի ժամանակ չօգտագործված այն արտոնությունների գնահատման ու հատուցման մասին, որոնք դատավորը կարող էր ակնկալել տվյալ ժամանակահատվածում:

Բացի այդ, դատավորի պաշտոնում վերականգնված անձը, մեր կարծիքով, չի կարող ձեռք բերել կրճատված դատավորի կարգավիճակ՝ թեկուզև աշխատավարձ և հավելավճարներ սրանալու իրավունքի, ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքի պահպանմամբ, որովհետև պաշտոնում վերականգնումը չի ենթադրում մեխանիկորեն ռեզերվային դատավոր դառնալ. այս դեպքում պետությունը պարտավոր է նույն դատարանում կամ դատավորի համաձայնությամբ՝ մեկ այլ դատարանում նոր հաստիք սահմանել, ինչպես նաև թափուր հաստիքում վերանշանակել անձին՝ դրանով իսկ վերականգնելով վերջինիս գործող դատավորի կարգավիճակը: Տվյալ պարագայում կարգապահական տույժի ենթարկված դատավորի պաշտոնում մինչև դատավորի վերականգնումը կատարված նշանակումը արգելք է դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնելու համար:

Այսպիսով, օրենսգրքի 164-րդ հոդվածի 7-րդ մասն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. «**7. Հանրապետության Նախագահը միջնորդությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերանշանակման եղանակով վերականգնում է դատավորին իր նախկինում զբաղեցրած, ներկայումս թափուր պաշտոնում կամ դրա անհնարինության դեպքում՝ դատավորի համաձայնությամբ նշանակում մեկ այլ դատարանի թափուր կամ նոր ստեղծված դատավորի պաշտոնում: Դատավորի համաձայնության բացակայության դեպքում նշանակումը կատարվում է Արդարադատության խորհրդի համապատասխան եզրակացության հիման վրա: Այդ դեպքում վերականգնված դատավորն իրավունք ունի, իսկ իրավասու մարմինը պարտավոր է հատուցել դատավորի հարկադիր պարապուրդում գտնվելու ողջ ժամանակահատվածի համար չստացված աշխատավարձը, հավելավճարները, ինչպես նաև գնահատել ու հատուցել նույն ժամանակահատվածում գործած, չօգտագործված արտոնությունները՝ առկայության դեպքում:**»:

---

21 Իհարկե, այստեղ կարելի է հիշատակել ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի համապատասխան իրավանորմերը և դրանցով նախատեսված հարկադիր պարապուրդի դիմաց հատուցում ստանալու իրավունքը, սակայն նպատակահարմար ենք գտնում համալիր կերպով այն կարգավորել հենց ՀՀ դատական օրենսգրքի 164-րդ հոդվածի 7-րդ մասով:

5/ Նույն օրենսգրքի 166.1-րդ հոդվածը սահմանում է, որ «1. էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից սույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի հանդիպելով՝ իր իրավասության շրջանակում որևէ այլ հարց քննելիս կազմակերպում է քննարկում՝ մասնակից դարձնելով խախտում կատարած անձին:

2. Եթե քննարկումից հետո էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ: Հակառակ դեպքում հանձնաժողովը կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

3. Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո Արդարադատության խորհուրդը նրանց նկատմամբ կարող է կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

1) նախազգուշացում.

2) նկատողություն.

3) խիստ նկատողություն.

4) դատավորների թեկնածությունների ցուցակից անձին հանելու միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:

4. Եթե Հանրապետության Նախագահը Արդարադատության խորհրդի՝ անձին դատավորների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ միջնորդությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, անձին չի հանում ցուցակից, ապա միջնորդությունը համարվում է մերժված: Այդ դեպքում օրենքի ուժով դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը համարվում է սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված համապատասխան կարգապահական տույժի ենթարկված:

5. Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կարգապահական պատասխանատվության ընթացակարգի վրա տարածվում են սույն գլխի նորմերը այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց նկատմամբ:»:

Վերը հիշատակված 166.1-րդ հոդվածի 1-2-րդ մասերի առնչությամբ հիշարժան է այն հանգամանքը, որ այստեղ խոսք է գնում, այսպես կոչված, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից քննարկում կազմակերպելու և այնուհետև կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին դիմում ներկայացնելու մասին: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի այլ հոդվածներում, բացի Դատավորների ընդ-

հանուր ժողովի կողմից ձևավորված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից, իրավացիորեն խոսք չի գնում մեկ այլ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ձևավորման ու գործունեության մասին: Այդ իսկ պատճառով թվով երկու էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովների առկայությունն անթույլատրելի է: Տվյալ պարագայում 166.1-րդ հոդվածի 1-2-րդ մասերն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. «**1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից սույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի մասին իրազեկվելով, իր իրավասության շրջանակում կազմակերպում է քննարկում՝ պատշաճ կերպով ապահովելով խախտում կատարած անձի մասնակցությունը և գրավոր կամ բանավոր բացատրություն տալու հնարավորությունը:**

2. Եթե քննարկումից հետո Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները ակնհայտ ու կոպիտ չեն և չեն կրում պարբերական կամ սիստեմատիկ բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ՝ կայացնելով կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում: Հակառակ դեպքում նույն հանձնաժողովը որոշում է կայացնում՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին:»:

ԳԼՈՒԽ 3.

Արդարադատության խորհրդի որպես դատարան գործելու գործառույթին և նրա որոշումների վերջնական, բողոքարկման ենթակա չլինելուն վերաբերող հիմնահարցերը

§1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման վերլուծություն

Համաձայն ՀՀ գործող դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-7-րդ մասերի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չեն: Այդ որոշումները ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Արդարադատության խորհրդի՝ սույն հոդվածի 6-րդ մասում չներառված որոշումները և եզրակացություններն ուժի մեջ են մտնում դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում հրապարակման պահից: Շահագրգիռ անձինք կարող են այդ ակտերը դատական կարգով բողոքարկել վարչական դատարան՝ ակտն ընդունվելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում: Վարչական դատարանը գործը քննում և լուծում է այն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին:

Իրողություն է այն, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ 2007 թվականի մայիս ամսից ի վեր, երբ ուժի մեջ է մտել ՀՀ գործող դատական օրենսգիրքը, միայն մեկ անգամ է անդրադարձել նույն օրենսգրքի համապատասխան իրավանորմերի Սահմանադրությանը համապատասխանելու հիմնահարցին: Այսպես, նույն դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Սամվել Մնացականյանի և Գևորգ Գյոզալյանի դիմումների հիման

վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 158-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և կայացրեց թիվ ՍԴՈ-1063 որոշումը:

Մասնավորապես, տվյալ որոշման պատճառաբանական մասում ամրագրվել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «**5.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմող Գ. Գյոզալյանը նախ բարձրացնում է արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն օրենսդրորեն չնախատեսելու խնդիրը:

Անդրադառնալով այդ հիմնահարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առաջ քաշված խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթին, քանի որ վերջինս, և ընդհանրապես նշված հոդվածի ողջ 5-րդ մասը, սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները, այլ ոչ թե այդ վարույթի հարուցումը մերժելու կարգը կամ հնարավորությունը: Այսուամենայնիվ, իրավունք վերապահելով անձին իր դիմումով կարգապահական վարույթ հարուցելու առիթ տալ՝ օրենսդիրը նույնիսկ նույն հոդվածի 7-րդ մասի հիմքով (որում առանձին առիթների դեպքում նախատեսվում է պատասխանը չհիմնավորելու հնարավորություն) չի նախատեսել անձի դիմումի առիթով վարույթ չհարուցելու դեպքում նրան պատճառաբանված պատասխան չտալու իրավունք: Հակառակը, տվյալ հոդվածի իրավական տրամաբանությունից բխում է անձի դիմումով վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականությունը: Հակառակ դեպքում այդ առիթը նույնպես կներառվեր հոդվածի 7-րդ մասում: Դատական պրակտիկայում է փորձ արվել ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի դրույթներին տալ այնպիսի մեկնաբանություն, որից բխեցվել է դիմողի հարցադրումը՝ վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն չնախատեսելու առնչությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, **նախ՝** ինքնին խնդրահարույց է ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Այն չունի պատշաճ իրավական հիմնավորվածություն՝ այդ մասի համատեքստում վարույթի հարուցումը մերժելիս դրա պատճառների մասին հիմնավորումներ չտալու դրույթ նախատեսելու առումով: **Երկրորդ՝** երբ օրենսգիրքը նախատեսել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթը նաև անձի դիմումն է, և այս առիթն ընդհուպ չի ներառել հիշյալ հոդվածի 7-րդ մասում, ապա այդ դիմումը չի կարող մնալ անպատասխան կամ այն մերժելու դեպքում չտրվի մերժման համապատասխան հիմնավորում: Հակառակ դեպքում խախտվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով նախատեսված իրավունքը, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով

իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: **Իրավական պրակտիկան պետք է անվերապահորեն հիմք ընդունի անձի՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:** Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը չի ենթադրում միայն պատասխանի ձևը կամ առկայությունն ընդհանրապես: Այն բովանդակային առումով նշանակում է, որ պատասխանը պետք է լինի իրավաչափ ու անհրաժեշտ հիմնավորումներով: Իրավական պետությունում այս պահանջը չի կարող շրջանցել որևէ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը: **Սահմանադրական հիշյալ պահանջը չկատարելն արդարացնող ցանկացած պատճառաբանություն, այդ թվում՝ օրենքին կատարվող հղում, անհիմն է, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

6. Դիմողների կողմից բարձրացված մյուս հիմնահարցերի առնչությամբ սույն գործի փաստարկների շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել.

- արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը,
- ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «գործում է որպես դատարան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը.
- որպես դատարան գործելիս արդարադատության խորհրդի որոշումների վերջնական, բողոքարկման ոչ ենթակա լինելու իրավաչափությունը՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու համատեքստում:

ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ թե՛ դիմողների և թե՛ պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհստակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական

դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանում զգալի չափով ամրապնդվել են արդարադատության խորհրդի անկախության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները, չնայած այս հարցում որոշ հիմնախնդիրներ սահմանադրական մակարդակում հետագա լուծումների անհրաժեշտություն ունեն, որոնք սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն:

Սահմանադրական ներկա իրավակարգավորումները լրացվել են նաև արդարադատության խորհրդի գործունեության ընթացակարգային օրենսդրական լուծումներով, ինչի հիմքում դրվել են հարցերի քննարկման դատավարական մոտեցումները, մասնավորապես, վարչական դատավարության կանոնակարգերը՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Էական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն արդարադատության խորհրդի գործառույթները դասակարգում է երկու խմբի՝ միջանկյալ և վերջնական լուծում տվող գործառույթների: Համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ վերջնական լուծում բովանդակող գործառույթը միայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Մյուս բոլոր դեպքերում արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի լուծման ենթակա հարցերի վերաբերյալ տալիս է առաջարկություններ կամ ներկայացնում է եզրակացություն: Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման մասին ՀՀ Նախագահին առաջարկ ներկայացնելուն, ապա **իր բնույթով պաշտոնանկության այս ընթացակարգը ենթադրում է հարցի քննարկման երեք փուլ՝ վարույթ հարուցող սուբյեկտ, արդարադատության խորհուրդ, Հանրապետության Նախագահ:** Նրանցից յուրաքանչյուրը կոչված է բացահայտելու իրավական ճշմարտությունը և արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության շահերից ելնելով՝ օրենքով նախատեսված առիթի ու հիմքերի շրջանակներում, սահմանված կարգով **վերաբերմունք արտահայտել դատավորի կողմից իր պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ:** Մեթոդաբանական նշանակության կարևոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաև գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որ-**

քանով է հավատարիմ իր երդմանը և ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: **Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:** Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստազրկեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառույթները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով **արդարադատության խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով: Օրենսդիրը կարող է նաև քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկա-**

տի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի և արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:

7. Հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը, բացի վերոնշյալ սկզբունքային մոտեցումներից, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել նաև, թե արդյո՞ք օրենսդրորեն նախատեսված են բավարար երաշխիքներ, որոնց պայմաններում կարող է իրավաչափ համարվել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ վեճի առարկա դրույթը: Ընդ որում, հարկ է, որպեսզի վերը նշված երաշխիքներն առկա լինեն թե՛ արդարադատության խորհրդի ձևավորման, լիազորությունների և թե՛ նրա գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության և ՀՀ դատական օրենսգրքի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ օրենսդրական երաշխիքներն առկա են: Մասնավորապես, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) արդարադատության խորհուրդն ունի ձևավորման սահմանադրաիրավական հիմք: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդ,

բ) արդարադատության խորհրդի գործառույթների կոնկրետ շրջանակը հստակ սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդարադատության խորհրդի առջև սահմանադիրը դրել է նպատակ՝ իր գործունեությամբ և բացառիկ լիազորությունների պատշաճ իրականացմամբ արդյունավետորեն կազմակերպել ՀՀ դատարանների, բացի սահմանադրական դատարանից, բնականոն գործունեությունը, որի տարրերից է նաև արդարադատություն իրականացնողների գործառնական պարտականությունների պատշաճ կատարումը,

գ) արդարադատության խորհրդի գործունեության սկզբունքներից են անկախությունը և անկողմնակալությունը: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի՝ որպես անկախ մարմին լինելն ուղղակի սահմանված է նաև ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածով: Դրա հետ մեկտեղ, ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Արդարադատություն **և օրենքով նախատեսված այլ լիազորություններ**

իրականացնելիս դատավորն անկախ է»: Վերը նշված դրույթում «օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս» եզրույթը վերաբերում է նաև այն դատավորներին, որոնք արդարադատության խորհրդի կազմում իրականացնում են կոնկրետ լիազորություններ, ինչը ներառում է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությանը մասնակցելը:

Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում գործող դատավորի անկողմնակալությանը, ապա այդ հանգամանքն առավելապես առնչվում է գործի քննության ընթացակարգերին, որպիսիք, ինչպես արդեն վերը նշվել է, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: Բացի դրանից, որպես անկողմնակալության երաշխիք է հանդիսանում ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածը, որը սահմանում է արդարադատության խորհրդի անդամների՝ որոշումների կայացմանը մասնակցության դեպքերը: Մասնավորապես, արդարադատության խորհրդի անդամը չի մասնակցում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացմանը, եթե արդարադատության խորհրդի անդամը հանդիսանում է այն կարգապահական հանձնաժողովի անդամ, որի կողմից հարուցված կարգապահական վարույթի հիման վրա է արդարադատության խորհուրդը քննարկում հարցը: Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում Հանրապետության Նախագահի և ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվող իրավաբան-գիտնականներին, ապա նրանց թվաքանակն զգալիորեն զիջում է արդարադատության խորհրդի կազմում դատավորների թվաքանակին, ինչը ոչ միայն չի կարող ազդեցություն ունենալ արդարադատության խորհրդի անկախության և անկողմնակալության վրա, այլև հանդես է գալիս որպես վերջիններիս համար հակակշռող նշանակություն ունեցող լրացուցիչ երաշխիք,

դ) ընթացակարգերի իմաստով արդարադատության խորհուրդն իրականացնում է գործի արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետներում քննություն: Ինչպես արդեն վերը նշվեց՝ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: **Նման կանոնակարգմամբ, ըստ էության, օրենսդիրն արդարադատության խորհրդի գործունեության հիմքում դնում է արդար քննության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:** Արդար քննության շրջա-

նակներում, մրցակցային գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննելիս տվյալ դատավորը, ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավունք ունի՝ ծանոթանալու արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները, հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու, ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը, մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով: Օրենսդիրը նախատեսել է մեկ կարևոր երաշխիք ևս. ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից»: Արդար քննության շրջանակներում հիշյալ օրենսգրքով ամրագրված է նաև, որ արդարադատության խորհրդի որոշումները պետք է պատճառաբանված լինեն: ՀՀ դատական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արդարադատության խորհրդի որոշումը պետք է պարունակի նաև արդարադատության խորհրդի պատճառաբանված եզրակացությունը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ: Հրապարակային քննության շրջանակներում ևս օրենսդիրն ամրագրել է մի շարք պահանջներ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջով իր գործի քննությունն անցկացվում է հրապարակային: Նույն օրենսգրքի 111-րդ և 163-րդ հոդվածների համաձայն՝ արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ինչ վերաբերում է ողջամիտ քննությանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարգապահական վարույթի տևողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատավորի բացակայության դեպքերի, իսկ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննում է ողջամիտ ժամկետում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված երաշխիքների առկայության պայմաններում և արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման արգելքն իրավաչափ է:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև իր՝ 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմանը, երբ վկայակոչելով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրների վերաբերյալ իր մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ կապված Եվրոպայի խորհրդի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության հետ, միաժամանակ կարևորել է այդ պարտավորություններից բխող **ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:** Հարկ է նկատել, որ ներպետական հայեցողության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ **CASE OF OLUJIC v. CROATIA** գործով (Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009), ըստ որի՝ «Դատարանը ճանաչում է պետության շահը վերահսկելու դատարանի մատչելիությունը, երբ հարցը վերաբերում է որոշակի խմբի հարցերի: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունների, մասնավորապես՝ իրավասու ազգային օրենսդրի, այլ ոչ թե Դատարանի խնդիրն է հստակ սահմանել հանրային ծառայության այն ոլորտները՝ ներառելով պետական ինքնիշխանությանը բնորոշ հայեցողական լիազորությունների իրականացումը, որտեղ անհատի շահերը պետք է ստորադասվեն: … Եթե ազգային համակարգն արգելափակում է դատարանի մատչելիությունը, Դատարանը կհաստատի, որ վեճն իրականում այնպիսին է, որ արդարացվում է Հոդված 6-ով նախատեսված երաշխիքների նկատմամբ բացառության կիրառումը: Եթե վեճն այդպիսին չէ, որևէ խնդիր չկա և 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կկիրառվի»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարձրացված հիմնահարցին հարկ է անդրադառնալ նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ դատական համակարգի աստիճանակարգության տեսանկյունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներկա դատական համակարգի պայմաններում նման որոշումների դատական կարգով բողոքարկումն օրենսդրորեն ամրագրված առկա շրջանակներից դուրս կարող է աղերսներ ունենալ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության խորհրդի կազմի մեջ ներառված են հիմնականում գործող դատավորներ ՀՀ դատական համակարգի տարբեր օղակներից, ներառյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը: Նման պայմաններում ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների համակարգում նախատեսված չէ այնպիսի դատական ատյան, որի դատավորներն իրենց կարգավիճակով ավելի բարձր կլինեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներից: Այս կապակցությամբ սույն գործով սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև իր՝ 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա

գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է առկա սահմանադրական իրավակարգավորումների տրամաբանությունից: Այն չի խախտում իր կամքի ազատ արտահայտմամբ ու հատուկ երդմամբ պաշտոնական պարտականություններ իրականացնող դատավորի իրավունքները՝ այդ պարտականությունների կատարման համար նրան երաշխավորած մարմնի կողմից դրանց պատշաճ կատարումը գնահատելու առումով՝ հաշվի առնելով արդարադատության խորհրդի ձևավորման, նրա բացառիկ սահմանադրական լիազորությունների, գործունեության սկզբունքների և աստիճանակարգված ընթացակարգերի արդյունավետ իրացման համար նախատեսված օրենսդրական երաշխիքների առկայությունը:»:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, ***որոշեց.***

1. *ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:*
2. *ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:*
3. *«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքերով դիմող Գ. Գյոզալյանի գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:*
4. *ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:*

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

*ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշման առնչությամբ տեղին ենք համարում հիշատակել Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին Սրբասբուրգում ընդունված «Դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների մասին, մասնավորապես՝ էթիկայի նորմեր, պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ և անաչառություն» եզրակացության ամփոփիչ 77-րդ կետը, ըստ որի «*77. В отношении дисциплинарной ответственности КСЕС считает, что:

i) в каждой стране закон или основополагающая хартия, применяемые к судьям, должны определять как можно более конкретно те нарушения, которые могут повлечь за собой дисциплинарное производство, а также применяемые в этих случаях процедуры;

ii) в отношении дисциплинарного производства страны должны рассмотреть вопрос о введении специального органа или о назначении лица, ответственных за получение жалоб, представлений от судей и расматривающих в свете этого, имеются ли основания для возбуждения дисциплинарного производства;

iii) любое инициированное дисциплинарное производство должно быть определено независимым органом или трибуналом, ведущим производство, гарантирующим полное право на защиту;

iv) если такой орган или суд не является сам судебным органом, то его члены должны назначаться независимым органом (со значительным числом судей, избираемых демократическим путем другими судьями), как об этом сказано в пункте 46 Заключения КСЕС N° 1 (2001);

v) в каждой стране должна быть такая организация дисциплинарного производства, которая давала бы возможность обжаловать решение инициирующего дисциплинарного органа (органа, трибунала или суда) в суде;

vi) санкции, которые может применять этот орган в случае установления проступка, должны быть определены в как можно более конкретных формулировках в законе, в статусе или основополагающей хартии для судей; они должны применяться пропорционально тяжести совершенного правонарушения.»:

1/ *Ելնելով վերոգրյալից՝ Արդարադատության խորհրդի որպես դատարան գործելու հիմնահարցի առնչությամբ գտնում ենք, որ իրավացիորեն ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի* <<«գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ

նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:**»: *Այսինքն՝ մեզ համար ևս միանշանակորեն ընդունելի է այն մոտեցումը, որ ՀՀ գործող արդարադատության խորհուրդն իրավասու չէ կատարել արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դեր, հետևապես որպես այդպիսին այն չի էլ հանդիսանում դասական իմաստով դատարան: Սակայն սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է նաև, որ արդարադատության խորհրդի հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով գործելուն վերաբերող ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին՝ թեև* «**Օրենսդիրը կարող է նաև քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի և արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:**»:

Այս կապակցությամբ կարծում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերն իրենցից ներկայացնում են բացառապես դատավարական իրավանորմեր, որոնք կարգավորում են դատարանում վարչական գործի քննության ժամանակ ծագող դատավարական իրավահարաբերություններ, վերաբերում դատավարական իրավունքի ճյուղին ու կիրառելի միմիայն վարչական դատավարության ընթացքում Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված պետական դատարանի կողմից համապատասխան վարչական գործով ներկայացված հայցադիմում կամ բողոք քննության առնելիս: Մասնավորապես, ՀՀ գործող վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը նախատեսում է, որ սույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (այսուհետ՝ վարչական դատարան), Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ վճռաբեկ դատարան, իսկ բոլորը միասին այսուհետ՝ դատարան) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:

Մինչդեռ, արդարադատության խորհուրդը, որպես այդպիսին չհանդիսանալով արդարադատություն իրականացնող դատարան և բնականաբար

ընդգրկված չլինելով ՀՀ դատական իշխանության եռաստիճան համակարգում, այնուամենայնիվ, ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործում է որպես դատարան և կիրառում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դատավարական իրավանորմերն այն պարագայում, երբ այդ մարմինը, մեր տեսակետից, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերության և 2-րդ կետի ուժով իր կարգավիճակով հանդիսանում է ոչ այլ ինչ, քան կոլեգիալ վարչական մարմին և իր իրավազորությունների շրջանակում իրականացնում բացառապես վարչարարություն (դատավորին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ վարույթը ևս իր էությամբ ու բովանդակությամբ համարվում է վարչական վարույթի տարատեսակ): Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունը և 2-րդ կետը սահմանում են **վարչական մարմնի ու վարչարարության հասկացությունները**. մասնավորապես՝ եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ,

վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Իր հերթին, Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է իրավական պետության կարևորագույն բաղադրատարր հանդիսացող այն հիմնարար սկզբունքը, ըստ որի <u>Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից</u>:

Այսպիսով, գործող իրավակարգավորմամբ փաստացի մի կողմից ունենք որպես այդպիսին արդարադատություն չիրականացնող, վարչական մարմին հանդիսացող Արդարադատության խորհուրդ, որն իրականացնում է զուտ վարչարարություն, ընդունում վարչական ակտեր, այլ ոչ թե վարչական դատավարության շրջանակներում կայացնում դատական ակտ, մյուս կողմից՝ վարչարարություն իրականացնելիս գործում է որպես դատարան ու կիրառում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերը, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է այն պարագայում, երբ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով ու օրենքներով հստակ տարանջատված են արդարադատություն իրականացնող դատարանները և վարչարարություն իրականացնող վարչական մարմինները՝ իրենց գործունեության ընթացակարգերով հանդերձ:

Այսպիսով, ***անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև մյուս իրավադրույթ-***

ները, որոնք վերաբերում են Արդարադատության խորհրդի որպես դատարան գործելուն:

2/ *Ինչ վերաբերում է վերոշարադրյալ հիմնահարցի հետ համակարգային կապ ունեցող այն իրավական նորմին, որ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև նրա լիազորությունները դադարեցնելու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չեն, ապա գտնում ենք, որ դրանով իսկ սահմանափակվում են դատավորի Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության հիմնարար իրավունքը, ըստ որի* յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, *նույն Սահմանադրության 19-րդ հոդված 1-ին մասով հռչակված իրավունքը, ըստ որի* յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, *ինչպես նրա արդարադատության մատչելիությունը:*

Ընդ որում, մեր կարծիքով, այստեղ խոսք չի կարող գնալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այն բավարար երաշխիքների մասին, որոնց պայմաններում կարող է իրավաչափ համարվել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթը, քանի որ անհրաժեշտ է, որպեսզի վերը նշված երաշխիքներն առկա լինեն ոչ թե Արդարադատության խորհրդի ձևավորման, լիազորությունների, նրա գործունեության սկզբունքների և ընթացակարգերի, այլև դատական պաշտպանության սահմանադրահրավական հիմնարար իրավունքի ապահովման տեսանկյունից:

Դեռ ավելին, ՀՀ դատական օրենսգրքի շրջանակներում, համաձայն նույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, Արդարադատության խորհրդի իրավական ակտերի ՀՀ վարչական դատարանում վիճարկվելու պարագայում նույն դատարանի դատավորները պարտավոր են, նախ, հանդես գալ դատարանի անունից ու վեճն ըստ էության լուծող դատական ակտ կայացնել Հայաստանի Հանրապետության անունից, երկրորդ, այդ դատական ակտը կայացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դրանով իսկ կարող է հաղթահարվել այն մտավախությունը, ըստ որի «... սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև իր՝ 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող

դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ:»:

Այսպիսով, ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-7-րդ մասերը նպատակահարմար է շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Արդարադատության խորհրդի վերջնական որոշումները, եզրակացությունները կամ առաջարկներն ուժի մեջ են մտնում նույն խորհրդի նիստում հրապարակման պահից տաս աշխատանքային օր հետո և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում կարող են բողոքարկվել (վիճարկվել) Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

Դատական կարգով Արդարադատության խորհրդի վերջնական որոշումների, եզրակացությունների կամ առաջարկների բողոքարկումը (վիճարկումը) կասեցնում է դրանց կատարումը՝ մինչև վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

7. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումներն ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Արդարադատության խորհրդի մնացած որոշումները և եզրակացություններն ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում հրապարակման պահից:

Օրինական ուժի մեջ մտած, վեճն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվում է այն նույն եղանակով, ինչ դատական կարգով վիճարկվող որոշումը, եզրակացությունը կամ առաջարկը»:

§2. Օտարերկրյա պետությունների փորձի համեմատական ուսումնասիրությունը:

Ա. Արդարադատության խորհուրդները և դրանց տարբեր մոդելներն եվրոպական երկրներում՝ ըստ լիազորությունների շրջանակի:

Արդարադատության խորհուրդները համեմատաբար երիտասարդ ինստիտուտներ են եվրոպական երկրներում: Մինչև վերջերս (90-ական թվականները) դատական համակարգի կառավարումն իրականացվում էր հիմնականում արդարադատության նախարարությունների կողմից: Աստիճանաբար տարբեր պետություններում դատական իշխանության համակարգի ներսում սկսեցին ստեղծվել մարմիններ, որոնց նպատակն էր իրենց ձեռքը վերցնել դատական համակարգի «վարչարարության», կառավարչական մի շարք խնդիրներ:

Աստիճանաբար այդ մարմինները սկսեցին ավելի ու ավելի ակտիվ դերակատարում ունենալ բյուջեի, ֆինանսավորման, կառավարման, հանրային կապերի, դատական ծառայողների աշխատանքային հարաբերությունների, դատավորների վերապատրաստման կազմակերպչական և բովանդակային հարցերում՝ դրսևորելով ավելի ու ավելի մեծ ինքնուրույնություն արդարադատության նախարարություններից: Այս հիմքի վրա սկսվեցին ձևավորվել արդարադատության խորհուրդները դատական համակարգի և գործադիր իշխանության միջև, որոնց դերն էր քաղաքական մարմինների միջամտությունը դատական իշխանության ներքին գործերին զսպելը՝ իրենց վրա վերցնելով դատական քաղաքականությանը և կառավարմանն առնչվող մի շարք գործառույթներ:

Կախված նման գործառույթների, լիազորությունների շրջանակներից՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության անդամ պետություններում Արդարադատության խորհուրդները դասվում են **Հարավային եվրոպական մոդելի** (որտեղ խորհուրդները օժտված են նեղ, սահմանափակ լիազորություններով) կամ **Հյուսիսային եվրոպական մոդելի** (խորհուրդներն օժտված են լայն լիազորություններով), ինչպես նաև երրորդ՝ այսպես կոչված **«Զտրոհված մոդելի»** (ըստ որի բացակայում է ինքնուրույն կարգավորող մարմինը՝ արդարադատության խորհուրդը, և ողջ գործառույթներն ամբողջությամբ կրում է Արդարադատության նախարարությունը, այսինքն՝ դատական իշխանության կառավարումն ինկորպորացված է գործադիր իշխանության մարմնում):

Որպեսզի ավելի պարզ լինի, թե ինչպիսի լիազորությունների մասին է խոսքը, ներկայացնենք դրանց ամբողջական ցանկը (այսուհետ՝ Ցանկ), որն այսուհետ կծառայի որպես համեմատական եզր որոշելու համար, թե տվյալ պետությունը հարում է Հյուսիսային, Հարավային, թե վերը նշված միջանկյալ մոդելին: Ստորև ներկայացված Ցանկը մշակել է Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (CEPEJ) եվրոպական

տասը երկրների ներպետական համակարգերի իր համեմատական ուսումնասիրության արդյունքում[22]:

- **Քաղաքականության մշակում (policy maker)**
  - հանրային կապեր
  - հանրային ծառայություններ
  - համագործակցություն դատարանների հետ
  - կադրերի կառավարում
  - աշխատանքի ընդունման քաղաքականություն
  - հետազոտությունների կատարում
  - խորհրդատվության տրամադրում կառավարությանը
  - դատական որակի մոնիթորինգ
- **Կառավարման լիազորություններ**
  - աշխատանքային պայմաններ և անվտանգություն
  - Էլեկտրոնային և ավտոմատ համակարգեր
  - գործավարություն
  - տեղեկատվության տրամադրում
- **Բյուջետային լիազորություններ**
  - Բյուջետային քաղաքականության մշակում
  - Ֆոնդերի վերաբաշխում և ֆինանսավորում
  - Ծախսերի հաշվետվողականություն
- **Այլ լիազորություններ**
  - Կարգապահական վարույթ
  - Դատավորների նշանակում
  - Դատավորների առաջխաղացում
  - Դասընթացներ և վերապատրաստումներ

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի վերը նշված Ցանկը համահունչ է Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի դիրքորոշման հետ, որն առաջարկում է, որ եվրոպական երկրների արդարադատության խորհուրդներն ունենան կարգավորող լիազորություններ հետևյալ ոլորտներում.

- դատավորների ընտրություն և նշանակում,
- դատավորների պաշտոնեական առաջխաղացում,

22. Տե՛ս Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) «Արդարադատության խորհուրդները ԵՄ երկրներում» ուսումնասիրությունը (European Commission for Efficiency of Justice. Councils for Judiciary in EU countries. By Wim Voermans and Dr Pim Albers.
Ուսումնասիրության ամբողջական տեքստը հասանելի է այստեղ՝
http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/textes/CouncilOfJusticeEurope_en.pdf

- դատավորների գնահատում,
- կարգապահական վարույթներ և էթիկայի հարցեր,
- դատավորների վերապատրաստում,
- դատական իշխանության առանձին բյուջեի վերահսկում և կառավարում,
- դատարանների կառավարում և գործավարություն,
- դատավորի իմիջի պաշտպանությունը,
- պետական այլ մարմինների եզրակացությունների տրամադրում,
- այլ իրավասու մարմինների հետ համագործակցություն ազգային, եվրոպական և միջազգային մակարդակում,
- հանրային պատասխանատվություն. թափանցիկություն, հաշվետվողականություն, տեղեկատվություն[23]:

Ցանկի առաջին բաժինը սահմանում է խորհրդի լիազորությունները դատական քաղաքականության մշակման ոլորտում, օրինակ՝ դատական ծառայողների աշխատանքի ընդունման հետ կապված կանոնակարգերի մշակում կամ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու լիազորություն, դատական հետազոտությունների կատարում (օրինակ՝ վիճակագրության ուսումնասիրություն և համապատասխան եզրահանգումների ընդունում, որոնք ազդում են դատական մարմինների գործունեության վրա), կառավարությանը կամ այլ մարմինների դատական իշխանության գործունեության հետ կապված օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի վերաբերյալ մեկնաբանություններ, պարզաբանումներ տրամադրելու լիազորություններ, որոշ դատական վարույթների շրջանակում (օրինակ՝ Սահմանադրական դատարանի վարույթում, որտեղ պատասխանող կողմ է Ազգային ժողովը և խնդրո առարկա հարցն առնչվում է դատարանների գործունեությանը) պարզաբանումներ ներկայացնելու լիազորություններ, դատական իշխանության մարմինների գործունեության մշտադիտարկման հետ կապված լիազորություններ և այլն: Այս ոլորտում կարևոր է տվյալ լիազորության՝ որպես քաղաքականության մշակողի գործառույթը:

Երկրորդն առնչվում է դատական համակարգի մարմինների կառավարման լիազորություններին, օրինակ, դատական ծառայողների աշխատանքային հարաբերություններին, բազմաթիվ էլեկտրոնային համակարգերի, օրինակ, տվյալների բազաների, դատական նիստերի ձայնագրման հետ կապված էլեկտրոնային համակարգերի կառավարումը, դատական ողջ գործավարության կառավարումը, հանրությանը տեղեկատվության տրամադրման հետ կապված ողջ գործընթացի կառավարումը և այլն:

Երրորդը կապված է դատական համակարգի բյուջեի մշակման, ֆինանսական միջոցների կառավարման, դատական համակարգի մարմինների ֆինանսավորման հետ կապված որոշումներ կայացնելու լիազորությունների հետ:

23. Եվրոպական դատավորների կոնսուլտատիվ խորհրդի (CCJE) թիվ 10 Կարծիք, կետ 42:

Լիազորությունների չորրորդ խումբն ընդգրկում է դատավորների նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, լիազորությունների դադարեցման հետ կապված լիազորությունները, ինչպես նաև դատավորների և դատական ծառայողների վերապատրաստման, դասընթացների կազմակերպման հետ կապված լիազորություններ:

Վերը նշված համեմատական եզրերի ներքո Շվեդիան և Դանիան հանդիսանում են Հյուսիսային մոդելի տիպիկ ներկայացուցիչներ (տե՛ս Հավելված 3 և Հավելված 4): Այս պետություններում խորհուրդներն օժտված են լայն գործառույթներով. արտաքին կապերի, հանրային ծառայությունների, աշխատակազմի կառավարման, դատական որակի բարձրացման ուղղությամբ քաղաքականության մշակման լիազորություններով: Նրանք կայացնում են նաև դատավորների անվտանգության, աշխատատարածքի, բնակարանային պայմանների, բազմաթիվ էլեկտրոնային և ավտոման համակարգերի (օրինակ՝ դատական ակտերի տվյալների բազաների կառավարման) կառավարման, տարբեր մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց վարչական բնույթի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումներ: Ամենակարևոր հատկանիշներից է դատական համակարգի բյուջեի վերաբերյալ լայն լիազորությունները, որ այս մոդելի ներքո պետություններում արդարադատության խորհուրդներն ունեն: Նրանք իրավունք ունեն անկախ կերպով մշակել ողջ դատական համակարգի բյուջեն, վարել արտաքին ազդեցությունից ու արտաքին միջամտությունից զերծ բյուջետային քաղաքականություն, կատարել ֆոնդերի վերաբաշխում դատական համակարգի ներսում և իրականացնել ծախսերի հաշվետվողականության հետ կապված գործողություններ: Սակայն ինչ վերաբերում է դատավորների նշանակման ու առաջխաղացման, դատավորների կարգապահական պատասխանատվության և նրանց լիազորությունների դադարեցման, դատավորների թեկնածուների ու դատավորների սկզբնական ու շարունակական իրավաբանական կրթության կազմակերպչական հարցերին, Հյուսիսային մոդելի պետություններում խորհուրդները նման գործառույթներով լիազորություններ չունեն և նշված ոլորտներում նրանք կարող են ամենաշատը ներգրավված լինել խորհրդատվական բնույթի լիազորություններով:

Ի տարբերություն Հյուսիսային մոդելի՝ Հարավային մոդելի պետություններում խորհուրդներն ունեն բավականին նեղ լիազորություններ և դրանք առնչվում են հիմնականում նշված ցանկի չորրորդ բաժնում շարադրված լիազորություններին և որոշ խիստ բացառություններով նաև մնացած լիազորություններին: Օրինակ, Ֆրանսիայի արդարադատության խորհուրդը (*Conseil supérieur de la magistrature*) ունի միայն դատավորների նշանակման, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության, դասընթացների կազմակերպման հետ կապված որոշումներ կայացնելու լիազորություններ (լիազորությունների IV խումբը՝ ըստ Ցանկի): Որպես բացառություն, խորհուրդն այս երկրում ունի նաև դատական համակարգի աշխատողների աշխատանքի ընդունման հետ կապված քաղաքականության մշակման լիազորություններ (կանոնագրքեր, ուղեցույցներ) և պետական

այլ մարմիններին պարզաբանումներ ներկայացնելու լիազորություններ: Ցանկի մնացած կետերով սահմանված լիազորություններ Ֆրանսիայի արդարադատության խորհուրդը չունի: Սա միանգամայն հակառակ պատկերն է Հարավային մոդելի պետությունների հետ համեմատած: Նույնանման իրավիճակ է նաև Իտալիայի արդարադատության խորհրդի հետ կապված, որն ունի լիազորություններ դատավորների նշանակման, առաջխաղացման, կարգապահական պատասխանատվության, ուսումնական հարցերի հետ կապված և, ինչպես Ֆրանսիայի դեպքում, նաև լիազորություններ աշխատանքի ընդունման հետ կապված կանոնակարգեր մշակելու, հետազոտությունների կատարման և պետական մարմիններին պարզաբանումներ տալու հետ կապված հարցերում: Ցանկի մնացած բոլոր կետերով Իտալիայի արդարադատության խորհուրդը լիազորություններ չունի (Հավելված 5):

Ինչ վերաբերում է վերը հիշատակած երրորդ՝ «Չտրոհված» մոդելին, ապա դրա վառ ներկայացուցիչը Գերմանիան է, որտեղ մինչև այժմ դատավորների նշանակման, առաջխաղացման, լիազորությունների դադարեցման ողջ գործընթացը կարգավորվում է արդարադատության նախարարության կողմից (ինչպես Հայաստանում էր 90-ական թվականներին և ընդհուպ մինչև 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները) և դատական իշխանության կառավարման համար առանձին, ինքնուրույն մարմին գոյություն չունի: Դատավորների նշանակման (դատավորները նշանակվում են ընտրովի եղանակով) և լիազորությունների դադարեցման գործընթացում քաղաքական մարմինները ներգրավվածությունը մեծ է: Այդուհանդերձ, քաղաքական միակողմանի և կողմնակալ որոշումների կայացումը բացառելու նպատակով ստեղծված են զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգեր[24]:

Հայաստանի Արդարադատության խորհուրդը, Իտալիայի և Ֆրանսիայի նման, ունի լիազորություններ միայն դատավորների թեկնածուների նշանակման, դատավորների պաշտոնեական առաջխաղացման, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ոլորտներում: Ի հավելում Արդարադատության խորհուրդը կարող է նաև Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք հայտնել ներման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկ ներկայացնել դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին: Այս վերջին լիազորությունները տեղավորվում են Ցանկի առաջին բաժնի «խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին» լիազորությունների շրջանակներում (տե՛ս Հավելված 2): Աշխատակազմի կառավարման, դատական ծառայողներին աշխատանքի ընդունելու և ազատելու, դատական վարչարարության, բյուջեի ստեղծման, արտաքին կապերի և Ցանկում

24. Տե՛ս, Judicial Appointments in Germany and in the United States. Northern Ireland Assembly. March 2012. Էջ 9: Հետազոտությունն ամբողջությամբ մատչելի է http://www.niassembly.gov.uk/Documents/RaISe/Publications/2012/justice/6012.pdfինտերնետ էջում:

*նշված այլ լիազորություններ, որոնցով օժտված են Հյուսիսային մոդելի երկրները, ՀՀ արդարադատության խորհուրդը չունի: Այսպիսով, ՀՀ **արդարադատության խորհուրդը հարում է Հարավային եվրոպական մոդելին**:*

Վերը նշվածից հետո հարց է բարձրանում, թե Ցանկի մնացած լիազորությունները ՀՀ դատական համակարգի որ մարմիններն են իրականացնում (դատական, գործադիր կամ, գուցե, օրենսդիր իշխանությունների մարմինները, քանի որ կան երկրներ, որտեղ դատավորների նշանակման հարցում շարունակում է կարևոր դերակատարում ունենալ, օրինակ՝ օրենսդիր մարմինը[25]): Այս հարցին պատասխանելու համար Հավելված 6-ում շարադրել ենք Ցանկում սահմանված բոլոր լիազորությունները՝ դրանք իրականացնող կարգավորող մարմինների մասին համապատասխան նշումով:

Սույն հետազոտության 1-ին գլխում, հետևելով Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին, առաջարկվում է կիրառել մի շարք միջոցառումներ ԱԽ-ի դերն ու նշանակությունը բարձրացնելու ուղղությամբ այնպես, որ վերջինս *«ի զորու լինի գործուն դեր կատարել դատական իշխանության անկախության ու ինքնուրույնության ապահովման հարցերում»*: Այդ նպատակով առաջարկվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնց թվում, առաջին՝ ընդլայնել ԱԽ լիազորությունները, որպեսզի վերջինս *«մշակի ու ձևավորի դատական իշխանության համապարփակ ու ամբողջական զարգացման <u>քաղաքականություն</u>»*: Այս իմաստով նշվում է, որ ներկայումս դատական իշխանության զարգացման քաղաքականությունը մշակվում ու ձևավորվում է գործադիր իշխանության կողմից՝ ի դեմս Արդարադատության նախարարության, որն անհարիր է անկախ դատական համակարգ հասկացության հետ: Վերը շարադրված համեմատական տեղեկության հիման վրա կարծում ենք, որ այդ նպատակին կարելի է հասնել՝ ԱԽ-ին վերապահելով Դատարանների նախագահների խորհրդի (ԴՆԽ) այն լիազորությունները, որոնց միջոցով վերջինս իրականացնում է տարբեր ոլորտներում քաղաքականության մշակողի գործառույթներ (տե՛ս Հավելված 6): ԴՆԽ-ի այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են արտաքին կապերի՝ ԶԼՄ-ներ հետ դատարանների համագործակցության վերաբերյալ կանոնների մշակման ու հաստատման, աշխատակազմի կառավարման և աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ ներքին կանոնակարգերի, ուղեցույցների մշակման ու հաստատման, դատական որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման ու հաստատման լիազորությունները (այդ թվում՝ պետական մարմիններին պարզաբանումներ ու խորհրդատվություն տրամադրելու լիազորությունը, որ ներկայումս ԱԽ-ն ունի), վերաբերում են տվյալ ոլորտներում քաղաքականություն ձևավորելու գործառույթներին:

25. Օրինակ, տե՛ս Եվրոպական դատարանի որոշումը *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի* գործով (որում քննության առարկա էր, *inter alia*, դատավորների և դատարանների նշանակման կարգը, որը Ուկրաինայի սահմանադրական դատարանի կողմից համարվել էր Սահմանադրությանը հակասող (գանգատ թիվ 21722/11, § 41)):

Խնդրին առավել լայնորեն մոտենալու պարագայում անհրաժեշտություն կծագի ԱԽ-ին վերապահել ԴՆԽ-ի բոլոր լիազորությունները (ոչ միայն քաղաքականության մշակման գործառույթները) և վերջինիս հեռացնել թատերաբեմից՝ որպես իր առաքելությունը կատարած մարմին: Օրինակ, ԱԽ-ին կարելի է վերապահել Ցանկի II բաժնում նշված ԴՆԽ-ի լիազորությունները կամ դրանց մի մասը դատական համակարգի բյուջեի ձևավորման ու հաստատման, ֆոնդերի վերաբաշխման առումով: Սա համահունչ կլինի սույն աշխատության 1-ին գլխում շարադրված նշված հինգերորդ առաջարկությանը, ըստ որի ԱԽ-ի ֆինանսավորումն անհրաժեշտ է նախատեսել ՀՀ պետական բյուջեով: Ինչ վերաբերում է Ցանկի III բաժնի գործառույթներին, դրանք իրականացնում է Դատական դեպարտամենտը և, դատելով ներկա պրակտիկայից, այստեղ որևէ խնդիրներ չեն ծագում:

ԱԽ-ի լիազորությունները ԴՆԽ-ի վերը նշված գործառույթների հաշվին լայնացնելու պարագայում հարկ կլինի ունենալ մշտական հիմունքներով գործող ԱԽ: Այս պարագայում հարկ կլինի ունենալ ԱԽ-ի գործունեությունը կարգավորող առանձին օրենք, որի մասին նշվում է սույն աշխատության 1-ին գլխում նշված երկրորդ առաջարկությունում: Կարծում ենք նաև, որ Ցանկի 1-ին բաժնի «Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում» գործառույթից է բխում 1-ին գլխում նշված երրորդ առաջարկությունը, ըստ որի ԱԽ-ին նպատակահարմար է օժտել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու սահմանադրաիրավական իրավազորությամբ՝ մի բան, որի մասին շարունակաբար ասվել է որպես դատական իշխանության անկախության պայման: Ինչ վերաբերում է նույն մասում ներկայացված չորրորդ առաջարկությանը՝ ԱԽ-ի որպես առանձին պետական կառավարչական հիմնարկի՝ իր սեփական ծառայության աշխատակազմն ունենալու մասին, սա նույնպես բխում է մշտական հիմունքներով գործող ԱԽ ունենալու վերը նշված առաջարկությունից:

ԱԽ լիազորությունները ԴՆԽ-ի լիազորությունների հաշվին ընդլայնելու առաջարկությունը համահունչ է Եվրոպական դատավորների կոնսուլտատիվ խորհրդի (CCJE) դիրքորոշման հետ[26]: Վկայակոչելով արդարադատության խորհուրդների Հարավային մոդելը որպես *ավանդական* կառուցակարգ և Հյուսիսային մոդելը որպես *նորարարական*՝ կոնսուլտատիվ խորհուրդը գտնում է, որ արդարադատության խորհուրդները պետք է ունենան լայն լիազորություններ[27] և *«քաջալերում է խորհուրդներին օժտել և՛ ավանդական, և՛ նորարարական հատկանիշներով»*[28]: ***Այսպիսով, սույն աշխատությամբ ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկվող մոդելը համահունչ է միջազգային իրավունքի պահանջների հետ:***

26. Թիվ 10 Կարծիք, կետ 42՝ վկայակոչված վերևում:
27. Կետ 41:
28. Կետ 46:

Բ. Դատավորներին կարգապահական պատասխանատվության հիմքերի վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերը

«Դատավորների Մագնա Կարտայում» (հիմնարար սկզբունքներ)[29] արձանագրված է, որ դատական անկախությունը պետք է լինի օրենսդրական, գործառույթային և ֆինանսական: Այս երաշխիքները, միջազգային իրավունքի նորմերի՝ Հայաստանի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս լինելու ուժով, հանդիսանում են սահմանադրական երաշխիքներ:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 02.12.2008թ «Քաղաքացի Արայիկ Ձալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-782 որոշման մեջ[30] արձանագրել է, որ պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար, սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ: Այնուհետև Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-647 որոշման մեջ, մեկնաբանելով Սահմանադրության 94-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով», նշել է, որ «դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է **գործառնական**, **կառուցակարգային**[31], նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար»[32]:

Դատավորի կարգավիճակի, ինչպես նաև նրա անկախությունն ապահովող սահմանադրական դրույթների հիմքում ընկած են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր: Մասնավորապես, առանցքային նշանակություն ունեն ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված՝ Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները և դրանց հավելվածը, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիան, Դատավորների կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հոկտեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարագիրը, սույն հանձնա-

29. Եվրոպական դատավորների խորհրդատվական հանձնաժողովի (CCJE) փաստաթուղթ, որը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ներկայացնելու նպատակով. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի փաստաթուղթ թիվ CM(2010)169 add2, ընդունվել է Նախարարների կոմիտեի 19.01.2011թ. № 1103 նիստում, պարբ. 2-3:
30. Որոշում՝ § 7:
31. Ընդգծումը մերն է:
32. Կետ 11:

րարագիրը փոխարինող՝ թիվ CM/Rec(2010)12 հանձնարարագիրը «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվությունների մասին» (Կիևյան սկզբունքները), Եվրոպական դատավորների խորհրդատվական հանձնաժողովի պատրաստած «Դատավորների մագնա կարտա (հիմնարար սկզբունքներ) կարծիքը, ինչպես նաև նույն մարմնի պատրաստած թիվ 1, թիվ 3 և 10 Կարծիքները և Վենետիկի հանձնաժողովի «Ձեկույցը դատական համակարգի անկախության մասին»[33]:

Թիվ (2010)12 Հանձնարարականում, հաշվի առնելով ԵԽՆԿ թիվ 94/12 Հանձնարարականից հետո ԵՀ անդամ պետությունների իրավական համակարգերում 1994 թվականից ի վեր տեղի ունեցած նկատելի փոփոխությունները, նորացվել են դատավորի անկախության բոլոր սկզբունքները և, ավելին, ներմուծվել են նոր սկզբունքներ և մոտեցումներ[34]: Մասնավորապես, հանձնարարականում դատավորի անկախության վրա բացասաբար ազդող գործոնների շարքում ընդգրկված են ոչ միայն արտաքին գործոնները (օրինակ՝ գործադիր իշխանության մարմինները), այլ նաև ներքին գործոնները, որոնք բխում են դատական իշխանության համակարգի ներքին կառույցներից: Այս երևույթին Հանձնարարականն անդրադառնում է նույնիսկ առանձին՝ «Ներքին անկախություն» անվանումով ենթաբաժնով: Այդ բաժնի 22-րդ կետում արտահայտված է հետևյալ սկզբունքը.

> *«Դատական անկախության սկզբունքը նշանակում է յուրաքանչյուր անհատ դատավորի անկախությունը որոշում կայացնելու իր գործառույթներն իրականացնելիս: Որոշում կայացնելիս դատավորները պետք է լինեն անկախ ու անկողմնակալ, հնարավորություն ունենան գործել առանց որևէ սահմանափակումների, անհարկի ազդեցությունների, ճնշումների, սպառնալիքների և միջամտության՝ ուղղակի կամ անուղղակի կերպով, ցանկացած մարմնի, այդ թվում դատական համակարգի ներսում գտնվող մարմինների կողմից: Դատական համակարգի հիերարխիկ կառուցվածքը չպետք է վնասի (դատավորների) անհատական անկախությունը»:*
>
> Նշված միտքն արտահայտված է նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական հանձնաժողովի «Դատավորների մագնա կարտա» փաստաթղթում, ըստ որի *«դատավորների անկախությունը պետք է արտահայտված լինի ոչ միայն օրենսդրությամբ և ֆինանսավորմամբ, այլ նաև «գործառույթային» հատկանիշներով»:*

Իսկ նույն փաստաթղթի 10-րդ կետի համաձայն՝ *«Արդարադատություն իրականացնելիս իրենց լիազորությունները կատարելիս դատավորները*

33. Օրենքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը: «Ընդհանուր իրավասության դատավորների կարգապահական պատասխանատվության և կարգապահական հետապնդման մասին» CDL-AD(2010)(004): Փաստաթղթի անգլերեն տարբերակը մատչելի է այստեղ՝
http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2010)004.aspx

34. Տես այս առումով թիվ (2010)12 Հանձնարարականի Բացատրական հուշագիրը. Նախարարների կոմիտեի փաստաթուղթ թիվ CM(2010)147 add1, որն ընդունվել է Կոմիտեի 17.11.2010թ. թիվ 1098 նիստում: Տես, մասնավորապես, հուշագրի 1-3-րդ պարբերությունները:

չպետք է ենթարկվեն որևէ հրամանի կամ հրահանգի, կամ որևէ հիերարխիկ ճնշումների, այլ պետք է ենթարկվեն միայն օրենքին»:

Ներկայումս դատավորների անկախության և դատական համակարգի արդյունավետության միջազգային չափանիշները դարձել են դատավորի անկախության երաշխիքների մասին կայուն հաստատված տեսություն՝ շնորհիվ վերը թվարկված փաստաթղթերի, այդ թվում՝ Եվրոպայի Խորհրդի տարբեր կառույցների կողմից վերջին շուրջ քսան տարիների ընթացքում ընդունված բազմաթիվ փաստաթղթերի, որոնցում արծարծվող ընդհանրական գաղափարն այն է, **որ անթույլատրելի է դատավորներին պատասխանատվության ենթարկել իրենց կայացրած որոշումների համար,** որ պատասխանատվության ենթարկելու նման նախաձեռնությունները լրջորեն ազդում են դատական համակարգի արդյունավետության, դատավորների անկախության վրա և որ **դատավորներին կարելի է պատասխանատվության ենթարկել միայն վարքագծի դրսևորումների համար,** որոնք որևէ կապ չունեն նրանց որոշումների բովանդակային մասի հետ: Ավելին, հստակորեն սահմանվում է, որ դատավորի կայացրած որոշումը կարելի է կասկածի տակ դնել միմիայն բողոքարկման վարույթի միջոցով և որ ցանկացած այլ զուգահեռ համակարգեր, որոնց շրջանակներում գնահատվում են դատավորի կողմից արդեն գնահատված և մեկնաբանվում են դատավորի կողմից արդեն մեկնաբանված փաստերը ու իրավական նորմերը՝ անհրաժեշտ է վերացնել: ***Այսպիսով, ըստ միջազգային փաստաթղթերի, դատավորին չի կարելի ենթարկել գործով որոշում կայացնելու այնպիսի գործողությունների համար, ինչպիսին են օրենքների մեկնաբանումը, փաստերի գնահատումը և գործի լուծումը:*** Ներկայացնենք այդ փաստաթղթերից որոշ հատվածներ:

- ԵԱՀԿ հովանու ներքո ընդունված «Արևելյան Եվրոպայի, հարավային կովկասի և կենտրոնական ասիայի երկրներում դատական անկախության» Կիևյան հանձնարարականը, որում ամրագրվել են հետևյալ դրույթները.

  *«25. դատավորների նկատմամբ կարգապահական վարույթը պետք է վերաբերվի կոպիտ և անսովոր ոչ պրոֆեսիոնալ **պահվածքին**[35], որը մեսա է հասցնում ամբողջ դատական իշխանության հեղինակությանը: Կարգապահական պատասխանատվությունը **չպետք է տարածվի որոշումների և վճիռների բովանդակության վրա**[36], այդ թվում՝ իրավաբանական մեկնաբանություններում դատավորների տարաձայնությունների դեպքերի, ինչպես նաև դատական սխալների կամ դատական համակարգի քննադատության դեպքերի վրա:*

  ... 27. Դատավորի մասնագիտական պատրաստվածության գնահատումը չպետք է մեսա գործով անկախ լուծում կայացնելուն:

  28. Ոչ մի դեպքում չի կարելի գնահատել դատավորներին նրանց որո-

35 Ընդգծումը մերն է:
36 Ընդգծումը մերն է:

շումների և վճիռների բովանդակությամբ (ինչպես ուղղակիորեն, այնպես էլ վերադաս ատյանների կողմից նրանց որոշումների բեկանման վիճակագրությամբ): Այն հանգամանքը, թե ինչպես է դատավորը լուծում գործի ելքը, երբեք չպետք է լինի պատժելու առիթ»:

- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին՝ դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին: Այս փաստաթղթում ամրագրվել են հետևյալ դրույթները.

«5. Դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն գործով անկողմնակալ որոշում կայացնելու համար՝ օրենքի հիման վրա և փաստերի իրենց սեփական մեկնաբանությամբ:

... 66. Գործով որոշում կայացնելիս դատավորների կողմից օրենքի մեկնաբանելը, փաստերի կամ ապացույցների գնահատելը չպետք է հիմք հանդիսանա նրանց քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար՝ բացառությամբ չարամտության և կոպիտ անփութության դրսևորման դեպքերում:

... 69. Կարգապահական վարույթները կարող են հարուցվել այն դեպքում, երբ դատավորներն իրենց պարտականությունները չեն կատարում արդյունավետորեն և պատշաճ եղանակով: Նման վարույթները պետք է իրականացվեն անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ արդար դատաքննության բոլոր երաշխիքներով, ինչպես նաև իրավունք տալով դատավորին վիճարկել որոշումը կամ տույժը: Կարգապահական տույժերը պետք է լինեն համաչափ:

70. Դատավորները չպետք է ենթարկվեն անձնական պատասխանատվության նրանց կայացրած որոշումների փոփոխության կամ բեկանման հիմքով»:

- Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2007)009 փաստաթուղթը և դրանում ամրագրված թիվ 408/2006 Կարծիքը՝ «Ընդհանուր դատարանների դատավորներին կարգապահական պատասխանատվության և կարգապահական հետապնդման ենթարկելու մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի վերաբերյալ, որով նախատեսվում էր դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկել, ընդհուպ մինչև լիազորությունների դադարեցում, «գործի քննության ընթացքում օրենքի կոպիտ և պարբերաբար խախտումներ» թույլ տալու համար: Այս փաստաթղթում ամրագրվել են հետևյալ դրույթները.

«18. Այս դրույթում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը կենտրոնանում են բացառապես դատավորի այն գործողությունների վրա, որոնք վերջինս կատարում է գործը քննելիս և դատավճիռ կամ որոշում կայացնելիս: Հետևաբար՝

դրանք ուղղակիորեն վերաբերում են դատական գործընթացին, գործի քննության ընթացքում դատավորի կողմից օրենքի մեկնաբանությանը և դատավորի գործառույթի էությունը հանդիսացող՝ գործով անկախ որոշում կայացնելու (գործունեությանը)[37]: Հետևաբար, այս դրույթը հանդիսանում է ուղնձգություն չափազանց նուրբ մի այնպիսի ոլորտի նկատմամբ, ինչպիսին է սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով դատավորի կողմից անկախ որոշում կայացնելու (գործընթացը):

19. Օրենքի մեկնաբանությունը կոնկրետ գործով որոշում կայացնելու (գործընթացի) էական մասն է և անհնարին է որևէ գործով որոշում կայացնել առանց օրենքը մեկնաբանելու: Գործով որոշում կայացնելիս դատավորը չպետք է սահմանափակված լինի միայն գոյություն ունեցող նախադեպային իրավունքով: Իրավական նորմերի անկախ մեկնաբանումը և դրանք փվյալ գործի փաստերի նկատմամբ կիրառելը հանդիսանում են դատավորի գործառույթի էությունը: Գոյություն չունեն բացարձակ հստակ իրավական դրույթներ, որոնք կարիք չունենան մեկնաբանության: Մեկնաբանությունը կարող է տարածվել իրավական դրույթի տառից այն կողմ, օրինակ, երբ դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել Սահմանադրության կամ միջազգային իրավունքի ներքո:

20. Դատական անկախության սկզբունքը ծառայում է օրենքը մեկնաբանելու գործառույթի ապահովմանը և դա կոնկրետ գործով կիրառելուն: Համաձայն Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին թիվ R(94)12 հանձնարարականի 2ղ սկզբունքի, «դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն անկողմնակալ կերպով որոշում կայացնելու համար՝ ղեկավարվելով իրենց խղճով, փաստերի սեփական մեկնաբանությամբ և գործող օրենքի նորմերով»: Հետևաբար, ինչպես շարադրված է V3 «ա» և «բ» կետերով, «դատավորը պետք է ազատ լինի արտաքին որևէ ազդեցությունից» և «գործերը վարի անկողմնակալ կերպով՝ փաստերի իր սեփական գնահատմամբ և օրենքի իր սեփական իմացությամբ»:

21. Այսպիսով, գործով որոշում կայացնելու ընթացքում դատավորի կողմից իրավախախտում թույլ տալու հետևանքները վերացնելու միակ ճանապարհը բողոքարկման ճանապարհն է: Օրենքի սխալ մեկնաբանության ուղղումը պետք է կատարվի բացառապես բողոքարկման գործընթացի միջոցով»:

Վերը նշված մեկնաբանություններից փոքր-ինչ տարբերվում է Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽԽ) մոտեցումն այն առումով, որ իր թիվ 3 Կարծիքում այս մարմինն առաջարկում էր հստակորեն տարանջատել վարքագծի խախտումները մասնագիտական

37 Փաստաթղթում օգտագործվում է adjudication եզրույթը, որի հավաքական իմաստը նշանակում է գործով որոշում կայացնելու գործընթաց:

չափանիշների խախտումներից՝ գտնելով, որ մասնագիտական չափանիշների խախտումները չպետք է հանգեցնեն կարգապահական պատասխանատվության, քանի որ դրա համար հիմք կարող են հանդիսանալ միայն վարքագծի կոպիտ և առերևույթ խախտումները: Այսպես է հիմնավորել ԵԴԽԽ-ն իր մոտեցումը 2002 թվականի նոյեմբերի 19-ին Ստրասբուրգում ընդունված «Դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների մասին, մասնավորապես՝ էթիկայի նորմեր, պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ և անաչառություն» (թիվ 3 Կարծիք) եզրակացության մեջ.

> «60. ... ԵԴԽԽ-ն անհրաժեշտ է համարել նշել (ըստ էության կրկնելով այն, ինչ արդեն ասվել է սույն եզրակացության մեջ), որ սխալ կլիներ մասնագիտական չափանիշների խախտումները հավասարեցնել այնպիսի արարքների հետ, որոնք կարող են հանգեցնել կարգապահական տույժերի կիրառմանը: Մասնագիտական չափանիշները, որոնք սույն Եզրահանգման առաջին մասի ուսումնասիրման առարկան են հանդիսացել, իրենցից ներկայացնում են վարքագծի մոդելներ (լավագույն պրակտիկա), որին դատավորները պարտավոր են ձգտել և որը դատավորները պարտավոր են ընդունել որպես նպատակ: Նման չափանիշների հավասարեցումը վարքագծի խախտումների հետ, որի հիմքով սահմանվում է կարգապահական պատասխանատվություն, կհանգեցնի նման չափանիշների հետագա զարգացումների կասեցմանը և դրանց հասկացության աղավաղմանը: Որպեսզի կարգապահական վարույթն արդարացված լինի, վարքագծի խախտումը պետք է լինի լուրջ բնույթի և առերևույթ՝ այնպիսին, որ հնարավոր չլինի պնդել, թե պարզապես չի պահպանվել կանոնակարգերում սահմանված մասնագիտական չափանիշները...»:

Այս մոտեցումը, սակայն, հետագայում զարգացում չունեցավ և ներկայումս տիրում է այն ընդհանուր մոտեցումը, որ մասնագիտական չափանիշների խախտումները կարող են նույնացվել կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող վարքագծի խախտումների հետ՝ սահմանված կանոնակարգերում: Այլ կերպ՝ մասնագիտական չափանիշների խախտումները նույնպես պետք է համարվեն վարքագծի խախտումներ:

Վերը շարադրված սկզբունքներն արգելում են վերադաս դատարանից բացի որևէ այլ մարմնին միջամտել դատավորի կայացրած որոշման բովանդակային մասին: Մասնավորապես, այդ սկզբունքներն արգելում են, բացի վերադաս ատյանից և բացի բողոքարկման վարույթի շրջանակներից, որևէ այլ մարմնին և որևէ այլ վարույթի շրջանակներում միջամտել դատավորի այնպիսի գործառույթներին, ինչպիսիք են, առաջին, տվյալ գործով փաստերի գնահատումը, երկրորդ՝ օրենքի մեկնաբանումը և երրորդ՝ գործի լուծումը: Իսկ փաստերի գնահատումը, օրենքի մեկնաբանումը կամ այդ գնահատականների ու մեկնաբանությունների իրավաչափության ստուգումը՝ արդարադատական գործառույթ (ֆունկցիա) է:

Վերը մեջբերված միջազգային իրավունքի հիմնադրույթները, թեև ուղղակիորեն շարադրված չեն ՀՀ Սահմանադրության մեջ, սակայն «անկախ դատարան» անհնար է պատկերացնել առանց վերոգրյալ սկզբունքների պահպանման: Դատավորի անկախության սահմանադրական երաշխիքներն ամրագրող դրույթների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է իր 06.05.2005 թվականի «Ազգային Ժողովի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-563 որոշման մեջ. «Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան նմանատիպ հարցերի առնչությամբ, մասնավորապես վկայում է, որ անկախ դատական համակարգը սահմանադրորեն պաշտպանված է ընդդեմ ցանկացած արտաքին միջամտության, ...»: Իր հաջորդ, 20.09.2006 թվականի թիվ ՍԴՈ-647[38] որոշման մեջ Սահմանադրական դատարանը, վերը նշված միտքը զարգացնելով, սահմանել է հետևյալը. *«Դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է **գործառնական, կառուցակարգային**[39], նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար»:*

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է դուրս բերել հետևյալ կանոնները, որոնք միջազգային իրավունքը սահմանում է դատավորներին կարգապահական պատասխանատվության հիմքերի առումով.

- ***դատավորին կարելի է կարգապահական պատասխանատվության ենթարկել միայն վարքագծի համար,***
- ***անթույլատրելի է դատավորին ենթարկել կարգապահական պատասխանատվության իր կայացրած որոշման համար, մասնավորապես՝ օրենքը մեկնաբանելու, փաստերը գնահատելու և գործը լուծելու համար,***
- ***դատավորի կողմից արդեն գնահատված փաստերը կարող են վերագնահատվել միայն վերադաս դատական մարմնի կողմից՝ դատական ակտի բողոքարկման վարույթի շրջանակներում:***

ՀՀ դատական օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները (14.06.2014թ. ՀՕ-86-Ն օրենք) նպատակ ունեն նյութական կամ դատավա-

38 Տես ՀՀ սահմանադրական դատարանի 20.09.2006 թվականի ««Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18-րդ հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-647 որոշումը:
39 Ընդգծումը մերն է:

րական նորմի խախտումներին տալ հնարավորինս վարքագծային դրդապատճառներ՝ այդպիսով շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ թեև նյութական կամ դատավարական նորմի խախտումը շարունակվում է դիտվել որպես հիմք կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, սակայն դա պետք է հիմնավորել խախտում կատարելու չարամիտ դիտավորության, այլ ոչ թե մասնագիտական չափանիշներին անհամապատասխանության հիմքով: Ըստ էության, նման մոտեցմամբ կյանքի է կոչվում ԵԴԽԽ-ի թիվ 3 Կարծիքով արտահայտված մոտեցումը (վկայակոչված վերևում) այն մասին, որ անհրաժեշտ տարբերակում անցկացնել **մասնագիտական չափանիշներ** և **վարքագիծ** հասկացությունների միջև և որ առաջինը խախտելը չպետք է հանգեցնի կարգապահական պատասխանատվության: Այս իմաստով Դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում սահմանված «ակնհայտ» հիմքը մեկնաբանվում է «չարամտորեն» և «կոպիտ անփութությամբ» եզրույթներով, որոնք երկուսն էլ նկարագրում են գործողություններ, որոնք ակնհայտորեն և անառարկելիորեն ունեն **վարքագծային** դրսևորումներ: Նույնն են հուշում նաև 153.2-րդ հոդվածով սահմանված եզրույթները և հասկացությունները: Այնպիսի խախտումները, որոնց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ «**ողջամիտ**[40] իրավական ենթադրությամբ կամ փաստարկով», որոնք իրենց բնույթով «կոպիտ» են, որովհետև «հեղինակազրկում են արդարադատությունը կամ անհամատեղելի են դատավորի բարձր կոչման հետ» անկասկած բխում են վարքագծից և ունեն բացառապես վարքագծային դրդապատճառ: Եթե իրավակիրառ պրակտիկան էլ առաջնորդվի այս ուղղությամբ, վերը նշված միջազգային նորմերի հետ հակասությունները կբացառվեն:

Գ. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացակարգերի վերաբերյալ միջազգային նորմերը

- Վարույթ հարուցող և որոշում կայացնող մարմինները

Այնքանով, որքանով խնդիրը վերաբերում է կարգապահական վարույթներին, միջազգային նորմերը պահանջում են, նախ, որ վարույթ հարուցող և որոշում կայացնող մարմինները լինեն տարբեր մարմիններ, երկրորդ, ներառված չլինեն արդարադատության խորհուրդների կազմում, երրորդ, նրանց գործառույթները տարբերվեն՝ վարույթ հարուցելու (քննչական) և որոշում կայացնելու լիազորությունները հստակորեն տարանջատված լինեն: Կիևյան հանձնարարականներում սա բացատրվում է *«կորպորատիզմի վերաբերյալ հնչեցվող մեղադրանքները բացառելու և կարգապահական արդար ընթացակարգ երաշխավորելու նպատակով»*[41] և *«բողոքի անկախ և օբյեկտիվ քննություն ապահովելու համար»*[42]: Այս երևույթին կոնկրետ

40 Ընդգծումը մերն է:
41 Կետ 5:
42 Կետ 14-ը: Տե՛ս, այս առումով, նաև CM/Rec(2010)12 Հանձնարարականի 69-րդ կետը, ինչպես նաև Եվրոպական դատավորների կոնսուլտատիվ խորհրդի թիվ 3

գործի շրջանակներում անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի* գործով (վկայակոչված ներքևում), որտեղ դատարանը հաշվի առավ այն հանգամանքը, որը վարույթ հարուցող մարմնի երկու անդամներ նաև ներգրավված էին եղել կարգապահական տույժի մասին որոշում կայացնող մարմնի կազմում և, ըստ էության, քվեարկել էին այդ որոշման օգտին[43]: Դատարանն այդ առումով որոշեց, որ նման կարգավորումը բարձրացնում էր օբյեկտիվ անաչառության բացակայության մասին հարց, քանի որ նույնիսկ արտաքին տպավորությունը բավարար է որոշելու համար, որ տվյալ անձնավորությունն ունի կամ կարող է ունենալ անաչառության բացակայություն:

ՀՀ-ում նշված իրավահարաբերության կարգավորումը համապատասխանում է վերը նշված չափանիշներին, քանի որ ՀՀ դատական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն, կարգապահական վարույթը հարուցվում է Էթիկային և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, որն ընտրվում է Դատավորների ընդհանուր ժողովի կազմից, իսկ հարուցված վարույթով որոշումը կայացնում է Արդարադատության խորհուրդը: Փաստորեն, և՛գործառնական, և՛ ինստիտուցիոնալ առումով Էթիկային և կարգապահական հարցերի հանձնաժողովն ունի բավարար անկախություն Արդարադատության խորհրդից և այս երկու մարմինների գործառույթներն ընդհանուր առմամբ հստակորեն տարանջատված են միմյանցից՝ առաջինը հարուցում է վարույթ և այդ առաքելությունը կատարելիս ունի քննություն կատարելու լիազորություններ, իսկ երկրորդը՝ զուտ որոշում կայացնելու լիազորություններ: Սակայն այս համատեքստում խնդրահարույց կարող է լինել ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված կարգավորումը, ըստ որի «1. *Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի հանդիպելով իր իրավասության շրջանակում որևէ այլ հարց քննելիս կազմակերպում է քննարկում՝ մասնակից դարձնելով դատավորին: Եթե քննարկման արդյունքում հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները կոպիտ չեն և չեն կրում պարբերական բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ:* Հակառակ դեպքում հանձնաժողովը հարուցում է կարգապահական վարույթ սույն օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված կարգով»: Ըստ այս դրույթի, ինչպես նաև դրա հետ համակարգային փոխկապակցության մեջ գտնվող նշված հոդվածի երկրորդ մասի՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, որպես վարույթ հարուցող և քննության կատարման լիազորություններով օժտված մարմին, միևնույն ժամանակ ունի կարգապահական պատասխանատվության մասին որոշումներ կայացնելու լիազորություններ: Այս իրավիճակը հակասում է վերը նշված Կիևյան հանձնարարականներում նշված սկզբունքներին, համաձայն որի վարույթ հարուցող և քննություն կատարող

Կարծիքի 68, 69 և 77-րդ կետերը:
43 Ալեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 21722/11, 9/14/2013, § 115:

մարմինը չպետք է միևնույն ժամանակ ունենա գործով որոշում կայացնելու, կարգապահական գործով լուծում կայացնելու լիազորություն: Համեմատության կարգով նշենք, որ Վենետիկի հանձնաժողովը Վրաստանի Արդարադատության Բարձր Խորհրդի առումով որոշել էր, որ այն հանգամանքը, որ այս խորհուրդն ուներ և՛ դիմումներ ընդունելու, քննելու, վարույթ հարուցելու լիազորություններ, և՛ կարգապահական պատասխանատվության մասին որոշում կայացնելու «միավորված» լիազորություններ (խորհուրդը կարող էր ընդունել դիմում, կատարել քննություն, հարուցել վարույթ, կարճել վարույթը, ինչպես նաև վարույթի հիման վրա որոշել մեղադրվող դատավորին ուղարկել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, եթե գտնում էր, որ անհրաժեշտություն չկար գործը փոխանցել կարգապահական հանձնաժողովին) հակասում էր վերևում վկայակոչված միջազգային նորմերին[44]:

Միջազգային նորմերը սահմանում են նաև, որ կարգապահական վարույթները հարուցվեն մեկ, այլ ոչ թե մի քանի մարմինների կողմից: Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ նման համակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է տրամադրում խախտումների ու կամայականությունների դեմ, քան այն համակարգը, որտեղ վարույթները կարող են հարուցվել մի քանի համակարգերի կողմից[45]: Այս իմաստով ողջունելի է ՀՀ գործող դատական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10.06.14 թվականին կատարված փոփոխությունը, որով նախկինում գործող երկու՝ Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հարցերով և Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովների փոխարեն սահմանվեց մեկ հանձնաժողով՝ Դատավորների ընդհանուր ժողովի կազմից ընտրված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, որը ձևավորվում է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից և կազմված է յոթ դատավոր անդամներից:

- Արդարադատության խորհրդի կազմը

Վերևում նաև առաջարկվեց, որպեսզի Արդարադատության խորհրդի դատավոր անդամների, այդ թվում՝ պաշտոնավարման տարիքը լրացած նախկին դատավորների, ընդհանուր թվաքանակը չգերազանցի խորհրդի հիսուն տոկոսը: Արդարադատության խորհուրդների կազմի մասով միջազգային նորմերը սահմանում են, նախ, որ խորհուրդների կազմը չպետք է բաղկացած լինի **բացառապես** դատավորներից[46]: «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվությունների մասին» թիվ (2010)12 Հանձնարարագրում սահմանվում է, որ անդամների **առնվազն**

44 Վենետիկի հանձնաժողովի 14/10/2014թ. թիվ CDL-AD(2014)032 փաստաթուղթ, կետ 16: Ամբողջական տեքստը մատչելի է. http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)032-e: Նույն փաստաթղթում Վենետիկի հանձնաժողովը կարծիք է հայտնել Վրաստանի «Ընդհանուր իրավասության դատարանների դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների և կարգապահական պատասխանատվության մասին օրենքի» նախագծի վերաբերյալ:

45 Նույն փաստաթուղթը, կետ 15:

46 Կիևյան հանձնարարականներ, կետ 9:

կեսը լինեն դատավորներ, որոնք պետք է ընտրվեն «իրենց հավասարների»[47] կողմից[48]: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, *«եթե տրիբունալի առնվազն կեսը բաղկացած է դատավորներից, այդ թվում՝ քվեարկելու իրավունք ունեցող նախագահը, այս հանգամանքը կարող է անաչառության հիմնավոր ցուցիչ լինել»*[49]:

ՀՀ-ում Արդարադատության խորհրդի 13 անդամներից 9 դատավորներ են, որը նշանակում է, որ ազգային իրավակարգավորումն առավել բարձր երաշխիքներ է սահմանում, քան առաջարկվում է միջազգային իրավունքում[50]:

- Վարույթի հրապարակայնություն և թափանցիկություն

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհրդի նիստերի **դռնբաց** լինելու վերաբերյալ միջազգային նորմերը սահմանում են, որ վարույթի առաջնային, նախնական փուլերը պետք է գաղտնի լինեն, իսկ հետագա փուլերը՝ դռնբաց: Մասնավորապես, Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների» 17-րդ կետի համաձայն, *«գանգատների քննարկումը, եթե դատավորն այլ խնդրանքով հանդես չի եկել, (վարույթի) սկզբնական փուլում պետք է անցկացվի գաղտնի»*: Այդուհանդերձ, վարույթի հետագա փուլերը պետք է ուղեկցվեն հրապարակայնությամբ: Ինչպես նշվում է Կիևյան հանձնարարականների 26-րդ կետում[51], *«դատավորների գործերով կարգապահական լսումները պետք է անցկացվեն թափանցիկության պայմաններում: Դրանք պետք է լինեն դռնբաց, բացառությամբ, երբ մեղադրվող դատավորը միջնորդություն է ներկայացնում լսումը դռնփակ անցկացնելու մասին»:* Այդպիսով, հրապարակայնության պայմանից միակ բացառությունը դատավորի պահանջն է նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ: Ընդ որում, այս պահանջը պետք է բխի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պայմաններից: Նիստերը դռնփակ անցկացնելու վերաբերյալ այլ բացառություն, քան դատավորի միջնորդությունն է, օրենքը կամ կանոնակարգերը, փաստորեն, չպետք է սահմանեն:

Ինչ վերաբերում է թափանցիկությանը, այս առումով Եվրոպական դատավորների կոնսուլտատիվ խորհրդի թիվ 10 Կարծիքում անդրադարձ կա այն

47 Փաստաթուղթը նկատի ունի դատավորների կողմից՝ առանց այլ մարմինների միջամտության:
48 Կետ 27:
49 Ալեքսանդր Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 21722/11, 9/14/2013, § 108:
50 Ուկրաինայի Արդարադատության խորհրդի վերաբերյալ իր 15/10/2010թ. թիվ CDL-AD(2010)029 կարծիքում Վենետիկի հանձնաժողովը որոշեց, որ խորհրդի կազմը չի բավարարում Եվրոպայի խորհրդի պահանջներին, քանի որ 20 անդամներից միայն երեքն էին դատավորներ:
51 Տե՛ս CM/Rec(2010)12 հանձնարարագիրը «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվությունների մասին»՝ վկայակոչված վերևում:

մասին, որ թափանցիկությունը քաղաքացիների կողմից դատական համակարգի գործունեության նկատմամբ վստահություն դրսևորելու էական գործոն, երաշխիք է ընդդեմ քաղաքական միջամտության և դատական համակարգում հովանավորչության և շահադիտականության դրսևորումների: Այս պահանջը կիրառվում է ՀՀ-ում. Արդարադատության խորհրդի բոլոր որոշումները հրապարակվում են դատական իշխանության www.court.am կայքում: Դրանց բովանդակային մասը բավականին պատճառաբանված է և էապես չի տարբերվում դատական ակտերի բովանդակային մասից. որոշումներում առանձին բաժիններով նկարագրվում են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը, կարգապահական հանձնաժողովի (վարույթ հարուցող մարմնի) եզրակացությունը, դատավորի ներկայացրած բացատրությունը հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ, կարգապահական պատասխանատվության հարցի համար էական նշանակություն ունեցող փաստերը, Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը և եզրափակիչ մասը: Համեմատության համար նշենք, որ մինչ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներն Արդարադատության խորհրդի որոշումները չէին անցնում կես էջի սահմանները և դրանք ըստ էության չունեին բովանդակային մաս:

- Գրավոր բացատրություն ներկայացնելը որպես պահանջ, թե՞ իրավունք

ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարգավորումը, համաձայն որի դատավորը պարտավոր է գրավոր բացատրություն ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին, կարող է հակասության մեջ մտնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ: Ի սկզբանե սահմանված է, որ դատավորների նկատմամբ առանձնացված վարույթ սահմանելը, որի արդյունքում դատավորները զրկված են դատարանի մատչելիությունից, անիրավաչափ չի լինի, եթե առանձնացված վարույթն ունենա Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության երաշխիքներ, և ընթացակարգերն իրենց բնույթով ունենան դատավարական հատկանիշներ: Այս պայմանը բխում է ի սկզբանե Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների մասին ՄԱԿ-ի փաստաթղթի 17-րդ կետից, համաձայն, որի *«Իր պարտականությունները կատարելու ընթացքում դատավորի հասցեով ստացված մեղադրանքը կամ գանգատը, համաձայն համապատասխան ընթացակարգի, պետք է անհապաղ և անաչառ քննարկվի: Դատավորը ունի պատասխանի և արդարացի քննարկման իրավունք»:* Միայն նման երաշխիքների առկայության դեպքում կարելի է հիմնավորել ընդհանուր իրավասության դատարանների մատչելիության սահմանափակման իրավաչափությունը (ի վերջո, դատավորը կարգապահական վարույթում վիճարկում է նաև աշխատանքային իրավունքի մասին հարց): Այսինքն, խնդիրը գտնվում է ոչ միայն հանրային դաշտում, այլ նաև քաղաքացիաիրավական բնույթի, մասնավոր իրավունքի դաշտում: Նման պայմաններում

գրավոր բացատրություններ ներկայացնելու պահանջը չի տեղավորվում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում: Նման պահանջը որոշ բացառիկ հիմքերի առկայության պարագայում իրավաչափ է համարվում միայն քրեական դատավարության շրջանակներում (երբ արդարադատության շահը գերակայում է մեղադրյալի իրավունքներին), սակայն չի կարող համաչափ համարվել կարգապահական կամ այլ տիպի (քաղաքացիական կամ վարչական) վարույթների դեպքում: Որոշ դեպքերում դատավորը կարող է նախընտրել չներկայացնել գրավոր բացատրություններ և դրա փոխարեն իր պնդումները ներկայացնել բանավոր կերպով խորհրդի նիստում:

- Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի մանրամասն կարգավորումը

Վերևում նաև առաջարկվեց ավելի մանրամասն կարգավորման ենթարկվել դատավորի կարգապահական վարույթը՝ ըստ ՀՀ դատական օրենսգրքի 159-րդ հոդվածի: Մասնավորապես, ի հավելումն արդեն սահմանված կարգավորումների, առաջարկվում է սահմանել իրավունք, համաձայն որի դատավորը կարող է վիճարկել վարույթ հարուցող անձի եզրակացության իրավաչափության մասին հարցը (դրա՝ օրենքի կամ այլ իրավական ակտերին հակասելու կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները առերևույթ խախտելու հիմքով): Առաջարկվում են նաև օրենսգրքով սահմանել այլ հավելյալ երաշխիքներ, ինչպես, օրինակ, խորհրդակցական սենյակում քննվելիք ապացույցների տեսակները, վարույթին մասնակցող անձանց շրջանակներն օրենսգրքով սահմանելու հարցը, երրորդ անձի պաշտպանության խնդիրը (ում իրավունքները կարող են շոշափել խորհրդի կողմից ընդունվելիք որոշումը), գրավոր բացարկ հայտնելու վարույթի մասնակիցների իրավունքները սահմանելու և ինքնաբացարկի հիմքերը, վարույթի կասեցման ինստիտուտն առանձին հոդվածով սահմանելու անհրաժեշտությունը, այլ հիմնարար սկզբունքներ, օրինակ, լեզվի, ապացուցման բեռի, նիստը հետաձգելու, վարույթի մասնակիցների նկատմամբ սանկցիաներ կիրառելու, վարույթի գործը կազմելու ու հաշվառելու և այլ վարույթային երաշխիքներ:

Վերը նշվածի իմաստով միջազգային իրավունքի նորմերը հայեցողության լայն դաշտ են թողնում ազգային իրավակարգավորողին: Սա բխում է առավելապես սուբսիդիարության սկզբունքից: Այս առումով միջազգային իրավունքը սահմանում է միայն նվազագույն չափանիշներ: Այսպես, Եվրոպական դատավորների կոնսուլտատիվ խորհրդի թիվ 3 Կարծիքի 68-րդ կետով սահմանված է, որ կարգապահական պատասխանատվության հանգեցնող վարույթների հարուցումը պետք է շատ **ֆորմալիզացված** լինի: Նույն փաստաթղթի 69-րդ կետում նշվում է, որ նման վարույթներում դատավորները պետք է ունենան առնվազն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքները (օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ տրիբունալի կողմից արդար դատաքննության իրավունք): Իսկ

արդեն վկայակոչված Կիևյան սկզբունքներում (տե՛ս կետ 26) սահմանվում է, որ կարգապահական մարմինները (հարուցող և որոշում կայացնող) դատավորին պետք է տրամադրեն «դատավարական երաշխիքներ, ներառյալ՝ պաշտպանությունը ներկայացնելու իրավունքը և իրավասու դատարանում որոշումը բողոքարկելու իրավունքը» (վերջինիս՝ որոշումը բողոքարկելու իրավունքին անդրադառնում ենք հաջորդ բաժնում):

Այսպիսով, նշված փաստաթղթերը սահմանում են նվազագույն երաշխիքներ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով (ՀՀ դատական օրենսգիրքն ուղղակիորեն վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ որպես երաշխիքների հիմք, որ անհրաժեշտ է ընձեռել դատավորին կարգապահական վարույթում): Կարող ենք պնդել, որ միջազգային փաստաթղթերում վկայակոչված երաշխիքների չափը և՛ներկա օրենսգրքով (փոփոխված), և՛ նախկին օրենսգրքով ապահովված է: Ինչ վերաբերում է հավելյալ երաշխիքներ սահմանելուն, մասնավորապես, այն երաշխիքները, որոնք շարադրված են վերևում, հարցը գտնվում է ազգային համակարգի հայեցողության դաշտում և միջազգային իրավունքի վերահսկողական շրջանակներից, փաստորեն, դուրս է: Այնքանով, որքանով կարելի է պնդել, որ ներկա ընթացակարգերն ապահովում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքները, ավելի լայն երաշխիքների անհրաժեշտությունը հնարավոր չէ պնդել միջազգային իրավունքով: Այս համատեքստում բաց է մնում Արդարադատության խորհրդի որոշումները դատարանում բողոքարկելու անհնարինության մասին հարցը, որին անդրադառնում ենք հաջորդ բաժնում:

Դ. Արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման իրավունքի մասին միջազգային նորմերը

Դատավորի կարգավիճակի, անկախության, դատական համակարգի անկախության, արդյունավետության և դերի մասին մեր կողմից վկայակոչված փաստաթղթերի մի մասում հստակորեն սահմանված է, որ արդարադատության խորհրդի որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման: Այսպես, Վենետիկի հանձնաժողովը «Դատական համակարգի անկախության մասին» զեկույցի 43-րդ կետում նշում է այն մասին, որ հանձնաժողովը միշտ կողմ է եղել, որ կարգապահական մարմինների որոշումներն ենթակա լինեն բողոքարկման:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 Հանձնարարականի 69-րդ կետում սահմանված է, որ կարգապահական վարույթները «պետք է դատավորին իրավունք տան վիճարկելու կարգապահական պատասխանատվության մասին որոշումները և տույժերը»:

Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայի 5.1 կետը սահմանում է, որ «*գործադիր մարմնի, դրդիռունալի կամ կարգապահական տույժի մասին որոշում ընդունող մարմնի որոշումը պետք է բաց լինի վերա-*

դաս դատական մարմին բողոքարկման համար»: Նույն փաստաթղթի Բացատրական զեկույցում նշվում է, որ Խարտիան հնարավորություն է տալիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ցանկացած որոշումը բողոքարկել դատական մարմին:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) թիվ 3 Կարծիքում նշվում է. «ԵԴԽԽ-ն գտնում է, որ կարգապահական պատասխանատվության գործընթացը յուրաքանչյուր երկրում պետք է այնպիսին լինի, որ հնարավորություն տա բողոքարկել առաջնային կարգապահական մարմնի (որոշումը)»: (Տե՛ս կետ 72): Այնուհետև նույն փաստաթղթում մեկ այլ անդրադարձով սահմանվում է, որ բողոքարկման հնարավորությունը պետք է սահմանված լինի անկախ այն հանգամանքից, թե առաջնային որոշում կայացրած մարմինը գործադիր մարմին է, տրիբունալ է, թե դատարան (տե՛ս կետ 77(v):

Նույն մարմնի հաջորդ՝ թիվ 10-րդ Կարծիքում սահմանված է, որ կարգապահական վարույթները պետք է «բողոքարկման հնարավորություն տան վերադաս դատական ատյան» (կետ 64):

Կիևյան սկզբունքների 26-րդ կետում սահմանված է, որ կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցող և որոշում կայացնող մարմինները պետք է դատավորին տան ընթացակարգային երաշխիքներ և որ նրանց որոշումները պետք է հնարավոր լինի բողոքարկել «իրավասու դատարան»:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների» համաձայն, *«կարգապահական, լիազորությունների կասեցման և լիազորությունների դադարեցման որոշումները պետք է ենթակա լինեն անկախ վերանայման: Այս սկզբունքը կարող է չկիրառվել այն որոշումների նկատմամբ, որոնք կայացվել են բարձրագույն դատարանի կողմից, ինչպես նաև այն որոշումների նկատմամբ, որոնք կայացվել են օրենսդիր մարմնի կողմից, որոնք վերաբերում են իմպիչմենտին կամ նման վարույթներին»*:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 94/12 Հանձնարարականի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության վարույթներ սահմանելիս ԵՀ անդամ պետությունները պետք է իրենց իրավազորության ներքո ստեղծեն մարմիններ, որոնց գործունեությունը պետք է կարգավորվի օրենքով, որոնք պետք է օժտված լինեն դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության մասին որոշումներ կայացնելու և այդ որոշումների հիման վրա նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու լիազորություններով և այդ որոշումները պետք է ենթակա լինեն դատական ստուգման վերադաս դատական ատյանի կողմից:

Այսպիսով, ***դատավորների ու դատարանների անկախության մասին***

միջազգային բոլոր հեղինակավոր փաստաթղթերում հստակորեն նշվում է այն մասին, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունում Արդարադատության խորհրդի որոշումներն ենթակա չեն բողոքարկման: Այդուհանդերձ, իրավական այս բացը լրացվում է առանձնացված կարգապահական վարույթին դատավարական հատկանիշներ հաղորդելով, որոնք պարունակում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի նվազագույն երաշխիքներ (լսվելու իրավունք, պատասխանի իրավունք, նյութերին ծանոթանալու և պատճեններ ստանալու իրավունք, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու իրավունք, անձամբ կամ փաստաբանի միջոցով հանդես գալու իրավունք և այլն): Արդյո՞ք նման պարագայում նպատակահարմար է թույլ տալ, որպեսզի Արդարադատության խորհրդի որոշումները բողոքարկվեն դատական ատյանին: Այս հարցին արդեն պատասխանել է Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1063 որոշմամբ, որով ՍԴ-ն նման ընթացակարգը համարել է իրավաչափ և որին լայնորեն անդրադարձ է արվել վերևում:

Կարգապահական մարմնի որոշումների բողոքարկման անհնարինությունը կարելի է դիտարկել նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի լույսի ներքո՝ ի համեմատություն Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածի ներքո արտահայտած դիրքորոշման: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում բողոքարկման իրավունք: Այդ հոդվածը սահմանում է միայն դատարանի իրավունք՝ իրավունքի և փաստի ուժով առնվազն մեկ դատական ատյանում գործի ամբողջ ծավալով քննության իրավունք որոշակի երաշխիքների առկայությամբ (օրենքի հիման վրա ստեղծված դատարան, անկախ դատարան, մրցակցային, հրապարակային դատավարություն և այլն): Դատավորների կարգապահական վարույթների առումով այդ դատարանը (տրիբունալը) Արդարադատության խորհուրդն է, որն ապահովում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նվազագույն երաշխիքներ (փաստաբանի իրավունք, պարզաբանումներ ներկայացնելու իրավունք, փաստաթղթերը ստանալու իրավունք և այլն): Ըստ եվրոպական դատարանի՝ «վարչական կամ պառլամենտական մարմինը կարող է համարվել դատարան» այս եզրույթի բովանդակային իմաստով՝ այդպիսով 6-րդ հոդվածը կիրառելի դարձնելով քաղաքացիական ծառայողների վեճերի նկատմամբ»[52]:

Այս ամենը հաշվի առնելով՝ հնարավոր չէ պնդել, որ զուտ այն փաստի ուժով, որ ՀՀ ներպետական համակարգում Արդարադատության խորհրդի որոշումները հնարավոր չէ բողոքարկել ընդհանուր իրավասության կամ վարչական դատարաններ, խախտվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատարանի

52 Վոլկովի գործով վճիռ, վկայակոչված վերևում, կետ 88:

իրավունքը: Սակայն այս պնդումը հիմնավոր կլիներ կատարել այն դեպքում, եթե Արդարադատության խորհրդի վարույթը չտրամադրեին դատավարական նվազագույն երաշխիքներ: Այդպիսին էր իրերի վիճակը մինչև 2005 թվականի Սահմանադրական բարեփոխումները:

Դատավորների համար առանձնացված, դեպի դատարաններ մուտքը բացառող կարգապահական վարույթների ստեղծումը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: Եվրոպական մարմիններն ընդունում են, որ որոշ մասնագիտական խմբերի և առաջին հերթին դատավորների առումով արդարացված է առանձնացված վարույթների ստեղծումը մասնագիտական որևէ մարմնի առջև, որը կփոխարինի ընդհանուր իրավասության դատարաններին՝ այդպիսով բացառելով այդ խմբի անդամների մուտքը դատարան: Նման վարույթների նպատակահարմարության հարցը եվրոպական վերահսկողության առարկան չէ, քանի որ այդ հարցը գտնվում է ազգային իրավական համակարգի հայեցողության դաշտում: Ինչպես նշել է եվրոպական դատարանը, *«Դատարանը ճանաչում է որոշակի դասի աշխատողների դատարանի մատչելիությունը վերահսկելու պետության շահը: Այդուհանդերձ, նախ և առաջ Մասնակից Պետությունների, այլ ոչ թե Դատարանի կարգավորման առարկան է հանրային ծառայության այն ոլորտները որոշելը, որոնց առումով պետության սուվերեն համակարգն ունի հայեցողություն կիրառելու իրավունք, որտեղ անհատական իրավունքները նահանջում են ... եթե ներպետական համակարգն արգելում է դատարանի մատչելիությունը, Դատարանը կտրուգի, թե արդյոք վեճի առարկան այնպիսին է, որ արդարացնում է 6-րդ հոդվածի երաշխիքներից բացառության կիրառումը: Եթե չի արդարացնում, խնդրո առարկա հարցը բացակայում է և 6-րդ հոդվածը կիրառելի կլինի»*[53]:

Վերը նշվածը հաշվի առնելով, գտնում ենք, որ ***դատավորի կարգապահական վարույթի շրջանակներում Արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման անհնարինությունը դատական մարմիններ չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային:***

53 Տես Վիլհո Էսկելինենն ու այլոք, ընդդեմ Ֆինդլանդիայի, թիվ 63235/00, 19/04/2007, § 61:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Այսպիսով, հիմք ընդունելով սույն աշխատության մեջ կատարված եզրահանգումները, որպես ամփոփում, կարելի է փաստել, որ ՀՀ գործող արդարադատության խորհրդի թե՛ սահմանադրաիրավական կարգավիճակին, թե՛ կազմավորմանը, թե՛ գործունեության ընթացակարգերին վերաբերող իրավահարաբերությունները, դրանք կանոնակարգող իրավանորմերը ՀՀ օրենսդրության շրջանակներում դեռևս կարգավորված են ոչ լիարժեք ու թերի, ուստի արդի փուլում էական կատարելագործման կարիք ունեն:

Հետևապես, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում իրականացվող միջոցառումների ու բարեփոխումների ներկա փուլում շահագրգիռ անձանց ու իրավական հանրության դատին սույն աշխատությամբ ներկայացնում ենք հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկները.

1. *Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակն անհրաժեշտ է հստակեցնել ու այն հռչակել որպես անկախ պետական մարմին, նրան վերաբերող սահմանադրաիրավական նորմերը պետք է հանվեն «Դատական իշխանություն» վերտառությամբ 6-րդ գլխից. որպես անկախ պետական մարմիններ՝ ՀՀ արդարադատության խորհրդին, ՀՀ դատախազությանը, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, ՀՀ կենտրոնական բանկին, ՀՀ վերահսկիչ պալատին, Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև նորաստեղծ ՀՀ քննչական կոմիտեին վերաբերող սահմանադրաիրավական նորմերը պետք է առանձնացվեն, հանվեն Սահմանադրության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանություններին վերաբերող համապատասխան գլուխներից և ընդգրկվեն առանձին գլխում,*
2. *օբյեկտիվ անհրաժեշտություն է մշակել և ընդունել «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ նոր օրենք, որի ուժով համապարփակ իրավակարգավորման կենթարկվեն այս պետական մարմնի հետ կապված բոլոր իրավահարաբերությունները,*
3. *որպես դատական իշխանության զարգացման համալիր քաղաքականություն ձևավորող մարմին՝ Արդարադատության խորհրդին անհրաժեշտ է օժտել օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու սահմանադրաիրավական իրավազորությամբ, քանի որ առ*

այսօր դատական իշխանությունը չունի նման նախաձեռնության իրավունք,

4. *նպատակահարմար ենք գտնում ՀՀ կառավարության կամ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացվող օրենքների նախագծերը, որոնք առնչվում են ՀՀ դատական իշխանության կողմից իրականացվող գործառույթներին ու դատավորներին, մինչև ՀՀ Ազգային ժողովի քննարկման ներկայացնելը, պարտադիր կերպով նախապես տրամադրել ՀՀ Արդարադատության խորհրդին՝ դրանց վերաբերյալ վերջինիս եզրակացությունը ստանալու ակնկալիքով: Ընդ որում, գտնում ենք, որ այդ օրինագծերը ՀՀ կառավարության կամ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության սահմանադրական իրավունքի իրացման շրջանակներում կարող են հետագա շրջանառության մեջ դրվել բացառապես ՀՀ Արդարադատության խորհրդի դրական կամ պայմանական եզրակացության առկայության դեպքում /պայմանական եզրակացության պարագայում ՀՀ Արդարադատության խորհրդի պայմանները կամ առաջարկներն ընդունվելու դեպքում/: Ինչ վերաբերում է մնացած նորմատիվ իրավական ակտերի նախագծերին, ապա վերոշարադրյալ իրավակարգավորումը կարելի է տարածել նաև դրանց նկատմամբ:*

5. *որպես անկախ պետական մարմին՝ Արդարադատության խորհուրդը պետք է ունենա իր ծառայության աշխատակազմը՝ որպես առանձին պետական կառավարչական հիմնարկ,*

6. *Արդարադատության խորհրդի ֆինանսավորումն նպատակահարմար է նախատեսել ՀՀ պետական բյուջեով, այլ ոչ թե ներկայումս գործող ՀՀ դատական դեպարտամենտի համապատասխան առանձնացված ստորաբաժանմանը հատկացված բյուջեով,*

7. *վճռաբեկ դատարանի նախագահը՝ թեկուզև առանց քվեարկության իրավունքի, չպետք է հրավիրի ու վարի Արդարադատության խորհրդի նիստերը և ապագայում չպետք է հանդիսանա նաև Արդարադատության խորհրդի ի պաշտոնե անդամ կամ նախագահող,*

8. *անհրաժեշտ է նոր խմբագրությամբ շարադրել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասը.* «5. Արդարադատության խորհրդի վերջնական բոլոր եզրակացությունները, որոշումներն ու առաջարկները կայացվում են խորհրդակցական սենյակում և ստորագրվում դրանց կայացմանը մասնակցած ու կողմ քվեարկած բոլոր անդամների կողմից: Արդարադատության խորհրդի միջանկյալ կամ աշխատակարգային որոշումները կայացվում են նիստին մաս-

նակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ու ստորագրվում նիստը վարողի կողմից: Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Արդարադատության խորհրդում ընդունված վերջնական որոշման, առաջարկի կամ եզրակացության վերաբերյալ: Եթե Արդարադատության խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման, եզրակացության կամ առաջարկի մեջ, և հատուկ կարծիքը կցվում է դրան:»,

9. *Արդարադատության խորհրդի անդամներն իրենց կազմից փակ գաղտնի քվեարկությամբ մեկ տարի ժամկետով ընտրում են նախագահ, յուրաքանչյուր անդամի անուն, ազգանունն ընդգրկվում է քվեաթերթիկում, բացառությամբ ինքնաբացարկ հայտնողների: Նախագահ ընտրված է համարվում քվեարկողների ձայների պարզ մեծամասնությունը հավաքած անձը, իսկ ձայների հավասարության դեպքում անցկացվում է ռեյտինգային քվեարկություն, որի հավասարության դեպքում նոր նախապատվությունը տրվում է դատավոր անդամին կամ դատավորի պաշտոնում առավել երկար աշխատած անձին: Միևնույն անձը չի կարող պաշտոնավարել որպես նախագահ երկու անընդմեջ ժամկետ: Գործող նախագահը մշտապես քվեարկում է վերջինը,*

10. *Արդարադատության խորհրդի յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման ժամկետը նպատակահարմար է կրճատել հինգ տարուց մինչև երեք տարին, ինչպես նաև սահմանափակել երկու անընդմեջ ժամկետով: Առաջին խորհրդի անդամները պետք է պաշտոնավարեն համապատասխանաբար հինգ, չորս և երեք տարի ժամկետով, որպեսզի հետագայում խորհրդի կազմը միանգամից չփոփոխվի,*

11. *օրենքով անհրաժեշտ է նախատեսել խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման սպառիչ դեպքեր,*

12. *Արդարադատության խորհրդի անդամը պետք է ընդգրկվի բարձրաստիճան պաշտոնատար անձանց կազմում, զբաղվի տվյալ աշխատանքով որպես հիմնական մասնագիտություն, դրա դիմաց ստանա պարշաճ վարձատրություն և չպետք է կատարի այլ վճարովի աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանքի: Գործող դատավոր անդամների պարագայում վերջիններիս լիազորությունները համարվում են կասեցված մինչև պաշտոնավարման ժամկետի լրանալը՝ գործող դատավորի աշխատավարձի, հավելավճարների ու օրենքով նախատեսված այլ արտոնությունների պահպանմամբ: Պաշտոնավարման ժամկետը լրացած նախկին դատավորի ստացած արտոն-*

յալ կենսաթոշակը ևս անհրաժեշտ է պահպանել: Արդարադատության խորհրդի անդամը պետք է պահպանի նաև քաղաքական չեզոքություն և յուրաքանչյուր տարի հայտարարագրի իր ունեցվածքը,

13. *Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից պարբերաբար պետք է հրապարակվեն ու կազմակերպվեն մրցույթներ՝ Արդարադատության խորհրդի անդամի թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով: Մրցութային հանձնաժողովների ձևավորման, գործունեության, մրցույթների անցկացման, հաղթող ճանաչելու իրավակարգավորումները պետք է հստակ ամրագրվեն «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ նոր օրենքով (մեր համար ընդունելի է, օրինակ, Եվրոպական դատարանի դատավորի համար 2014 թվականին մրցույթի անցկացման կարգը՝ իհարկե, հաշվի առնելով բոլոր առանձնահատկությունները),*

14. *օրենքով սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձին կամ անձանց խորհրդի անդամ նշանակելու իրավազորությունն անհրաժեշտ է վերապահել բացառապես Հանրապետության Նախագահին՝ որպես պետության գլուխ, Սահմանադրության պահպանմանը հետևող, օրենադիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը ապահովող,*

15. *Արդարադատության խորհրդի անդամի գործող դատավոր թեկնածուն պետք է ունենա դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ և գործունեության գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական, որպեսզի հնարավորություն ունենա մասնակցել մրցույթին,*

16. *Արդարադատության խորհրդի դատավոր անդամների առնվազն կեսը պետք է կազմեն պաշտոնավարման առավելագույն տարիքը լրացած ու կենսաթոշակի անցած նախկին դատավորները, որոնց դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժն առնվազն տաս տարի է և վերջին տասը տարվա ընթացքում չեն ենթարկվել որևէ կարգապահական պատասխանատվության,*

17. *Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկված գործող դատավորները հավասարաչափ պետք է ներկայացնեն ՀՀ բոլոր դատական ատյանները, այսինքն՝ յուրաքանչյուր դատական ատյան պետք է ներկայացված լինի խորհրդում,*

18. *Արդարադատության խորհրդի դատավոր անդամների, այդ թվում պաշտոնավարման տարիքը լրացած նախկին դատավորների, ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցի խորհրդի հիսուն տոկո-*

սը՝ խուսափելով նույն խորհրդում դատավորների մեծամասնությունից և զուտ դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ ցանկացած որոշում ընդունելուց: Իհարկե, այն դեպքում, երբ Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը նախընտրելի է թողնել որպես դատական իշխանության առանձնահատուկ լիազորություններով օժտված անկախ մարմին կամ ենթահամակարգ, ապա լիովին արդարացված է այն մոտեցումը, որ Արդարադատության խորհրդի անդամների մեծամասնությունը պետք է կազմեն հենց դատավորները. այս դեպքում ևս գտնում ենք, որ մեծամասնություն կազմող դատավոր անդամների առնվազն կեսը կարող են լինել պաշտոնավարման տարիքը լրացած, կենսաթոշակի անցած նախկին դատավորները: Սակայն իրավիճակն էականորեն փոփոխվում է, երբ Արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը վերածվում է անկախ պետական մարմնի, որն այլևս չի կարող հանդիսանալ դատական իշխանության առանձնահատուկ լիազորություններով օժտված մարմին կամ ենթահամակարգ,

19. *Այս համատեքստում Արդարադատության խորհրդի անդամների մյուս հիսուն տոկոսը պետք է համալրեն այն իրավաբան-գիտնականները, որոնք զբաղվում են բացառապես գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքով, որևէ այլ վարչական աշխատանքով չեն զբաղվում ու չեն զբաղեցնում որևէ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում: Առնվազն հինգ տարվա գիտական-մանկավարժական աշխատանքային ստաժ ունեցող իրավաբան-գիտնական անդամների թեկնածությունները պետք է երաշխավորեն ՀՀ-ում հավատարմագրված համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից հրապարակված մրցույթին մասնակցելու նպատակով,*

20. *Արդարադատության խորհրդի որոշումներն ընդունված են համարվում, եթե նիստին մասնակցում է անդամների կեսից ավելին և ներկա գտնվող անդամների պարզ մեծամասնությունը քվեարկել է կողմ: Խորհրդի անդամները պետք է հնարավորություն ունենան քվեարկեն նաև դեմ (ձեռնպահ մնալու իրավունքը նպատակահարմար է բացառել, քանի որ խորհրդի անդամը մշտապես պետք է ունենա հստակ ձևավորված տեսակետ), ինչպես նաև առանձին հարցերով, օրինակ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերով, խորհրդին ներկայացնեն հրապարակման ենթակա հատուկ կարծիք: Գործող նախագահը մշտապես քվեարկում է վերջինը: Քվեարկողների ձայների հավասար բաշխման դեպքում*

որոշում չի կայացվում և անհրաժեշտության դեպքում անցկացվում է կրկնակի քննարկում (դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական պատասխանատվության վարույթն այս դեպքում համարվում է կարճված),

21. *Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում պարտադիր կերպով պետք է ներկայացված լինի նաև ՀՀ վարչական դատարանը, քանի որ վերջինս հանդիսանում է միակ մասնագիտացված առաջին ատյանի դատարան: Դեռ ավելին, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորների մասով անհրաժեշտ է պահպանել նույն դատարանների դատավորների ներքին մասնագիտացման սկզբունքը՝ դատավոր անդամների քաղաքացիական ու քրեական մասնագիտացումները, ինչը կապահովի առաջին ատյանի դատարանների քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացումներ ունեցող դատավորների հավասար ներգրավվածությունը տվյալ հանձնաժողովի աշխատանքներին,*

22. *Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամների թեկնածուներին օրենքով անհրաժեշտ է ներկայացնել որոշակի պահանջներ կամ սահմանափակումներ,*

23. *Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից դատավորին քննարկմանը մասնակից դարձնելը պետք է նախատեսել ոչ թե որպես պարտադիր, այլև հայեցողական: Այս առումով օրենքով նպատակահարմար է սահմանազատել հանձնաժողովի նախնական ու հիմնական քննարկումները (այստեղ տեղին կլինի օգտագործել «նիստ» եզրույթը), ինչպես նաև նախատեսել դատավորի քննարկմանը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր եղանակով մասնակցելու հնարավորությունը. մասնավորապես, գրավոր մասնակցությունն ենթադրում է գրավոր առարկությունների ներկայացում,*

24. *Անհրաժեշտ է նաև նախատեսել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հայեցողական իրավունքն իր իսկ քննարկմանը (նիստին) հաղորդում ներկայացնող սուբյեկտին կամ նրա ներկայացուցչին հրավիրելու ու լսելու վերաբերյալ, երբ նպատակահարմար է լսել վերջինիս մեկնաբանությունները,*

25. *ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չէ նաև Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հարցի քննարկմամբ սահմանա-*

փակվելու հնարավորությունը բոլոր այն դեպքերում, երբ հաղորդման մեջ մատնանշված ենթադրյալ խախտումն ընդհանրապես բացակայում է,

26. *ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված չէ նաև Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հաղորդման քննարկման արդյունքում, օրինակ, մեկամսյա ժամկետում պատճառաբանված համապատասխան որոշում կայացնելու պարտականությունը՝ հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու կամ հարուցումը մերժելու մասին, ինչպես նաև կայացված որոշումը շահագրգիռ անձանց եռօրյա ժամկետում պատշաճ կերպով ուղարկելու պարտականությունը,*

27. *գործող իրավակարգավորման իմաստով առաջարկվում է ՀՀ արդարադատության նախարարին հանել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտների կազմից,*

28. *դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտը՝ դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունն առանց քննության թողնելու և այն ներկայացնողին վերադարձնելու մասին պետք է կայացնի պատճառաբանված որոշում, որը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում շահագրգիռ անձանց կողմից նույնպես կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատարանում՝ ապահովելով դիմող սուբյեկտի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը,*

29. *ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերն ու դրանց հետ համակարգային կապ ունեցող նույն օրենսգրքի 153.2-րդ հոդվածն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել, քանի որ դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր կայացրած որոշման բովանդակության, անգամ դատական սխալների համար, քանի որ վերջինս հակասում է դատավորի անկախության սկզբունքին: Դատական ակտերը կարող են վերանայվել ու բեկանվել բացառապես վերադասության կարգով և ոչ մի այլ մարմին կամ անձ իրավասու չէ իրավական գնահատական տալ դատական ակտերին՝ հատկապես այն դեպքում, երբ դրանք օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր են: Դատական ակտը, մտնելով օրինական ուժի մեջ, դառնում է պետական իշխանության մարմնի իրավակիրառ ակտ, որը գործում է օրենքի նորմերի հիման վրա: Վճռի օրինական ուժի իրավական հետևանքներն են դրա անհերքելիությունը (անփոփոխելիությունը), բացառիկությունը, պարտադիրությունը, նախադատելիությունն ու կատարելիությունը,*

30. որպես կառուցակարգ՝ կարելի է ամրագրել, օրինակ, այն մոտեցումը, ըստ որի՝ եթե դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա, ըստ յուրաքանչյուր չափանիշի և ըստ գնահատումների հանրագումարի, կոնկրետ դատավորի գործունեությունը գնահատում է ցածր, ապա այս պարագայում Արդարադատության խորհրդում պարտադիր կերպով քննարկման առարկա է դառնում վերջինիս պաշտոնավարման նպատակահարմարությունն ընդհանուր իրավասության առաջին ատյանի տվյալ դատարանում նույն ատյանի մարզի դատարան տեղափոխելու համատեքստում (մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում դատավորի աշխատելու դեպքում նույն ատյանի մարզի մեկ այլ դատարան, իսկ ՀՀ վարչական դատարանի դեպքում մարզային նստավայր տեղափոխելու համատեքստում): Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատավորի դեպքում պարտադիր քննարկման առարկա է դառնում վերջինիս ստորադաս կամ առաջին ատյանի դատարան տեղափոխելու հարցը: Հավելյալ կարելի է նաև ամրագրել դատավորին օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված որոշակի հավելավճարներից, արտոնություններից զրկելու կամ սահմանափակելու հնարավորությունը: Խոսքը, իհարկե, չի վերաբերում է օրենքով սահմանված ու դատավորի կողմից արդեն ստացվող աշխատավարձը, հավելավճարները կամ կենսաթոշակը սահմանափակելուն կամ կրճատելուն, ինչը կարող է հանգեցնել կոռուպցիոն բնույթի բացասական հետևանքների, սակայն այդ սահմանափակումները կարող են վերաբերվել, օրինակ, նախատեսվող պարգևատրումներին և ամենամյա հավելավճարներին, գործուղումներին, ծառայողական մեքենայից կամ բնակարանից օգտվելուն, ապահովագրությանը, սոցիալական փաթեթներին և այլ արտոնություններին,

31. առաջարկում ենք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ուժը կորցրած ճանաչել «156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով», «ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը» բառերը,

32. ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ մասի իրավադրույթը, ըստ որի «5. Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտով հաստատվել է, որ տվյալ գործը

քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետները հաշվարկվում են տվյալ դատական ակտը կայացնելու պահից:», *«Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը» վերտառությամբ նույն հոդվածում նախատեսելը նպատակահարմար չէ և այն ևս անհրաժեշտ է ճանաչել ուժը կորցրած,*

33. *ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ նպատակահարմար ենք գտնում սահմանել Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննելու կոնկրետ՝ 30-օրյա ժամկետ, որն առանձին դեպքերում կարող է երկարաձգվել ևս 15 օրով:*

34. *Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթն ենթակա է մանրամասն իրավակարգավորման՝ ներառելով նույն վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերը,*

35. *առաջարկվում է ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերից և 165-րդ հոդվածի 3-4-րդ մասերի 2-3-րդ կետերից հանել (ուժը կորցրած ճանաչել) համապատասխանաբար 6 կամ 12 ամիս դատավորի աշխատավարձի 25 տոկոսից և/կամ դատարանի նախագահի հավելավճարից զրկելու բաղադրիչը՝ որպես կարգապահական տույժ թողնելով միայն նկատողությունը և խիստ նկատողությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել նաև 157-րդ հոդվածի 6-րդ մասը: Ըստ որում, նկատողություն կամ խիստ նկատողություն կարգապահական տույժերը միաժամանակ կարող են զուգորդվել, օրինակ, նյութական կամ դատավարական իրավունքի, վարքագծի կանոնների կոնկրետ թեմանեերով կարգազանց դատավորի արտահերթ պարտադիր վերապատրաստում անցնելու, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից որևէ մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան կամ վերադաս ատյանից ստորադաս ատյանի դատարան տեղափոխելու հետ,*

36. *խիստ անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել կարգապահական յուրաքանչյուր տույժի, հատկապես նկատողության ու խիստ նկատողության, կիրառման հիմքն ու նպատակը՝ տարանջատելով տույժերը երեք տեսակի՝ մեղմ, միջին ու ծանր,*

37. *ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որը որպես կարգապահական առավել ծանր տույժի տեսակ նախատեսում է դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել,*

38. *նպատակահարմար է ՀՀ դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Այդ դեպքում Արդարադատության խորհուրդը պարտավոր է վերսկսել համապատասխան վարույթը և անմիջապես կայացնել վարույթը կարճելու մասին որոշում:»,*

39. *որևէ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի կողմից ՀՀ դատական օրենսգրքով սահմանված նախագահի իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելը կամ անգործություն դրսևորելը կարող է հանգեցնել միմիայն Արդարադատության խորհրդի կողմից Հանրապետության Նախագահին դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահի լիազորությունները դադարեցնելու առաջարկ (միջնորդություն) ներկայացնելուն, ինչն ենթադրում է, որ այդ անձը կշարունակի պաշտոնավարել նույն դատարանում որպես դատավոր, քանի որ դատարանի ոչ պատշաճ նախագահ լինելը մեխանիկորեն չի ենթադրում ոչ պատշաճ դատավոր,*

40. *Ինչ վերաբերում է նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասին, ապա կարծում ենք, որ դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության բացառապես իր որպես դատավոր վարքագծի կանոնների խախտման համար, այն է՝ առավելագույնը նույն օրենսգրքի 157-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում և համահավասար մյուս դատավորների հետ. Արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում չի կարող կիրառել կարգապահական տույժ, եթե դատարանի (վճռաբեկ դատարանի պալատի) նախագահը խախտել է իր պարտականությունները թե՛ որպես դատավոր, թե՛ որպես նախագահ, քանի որ երկու դեպքերում իրավական հետևանքները տարբեր են: Ուստի, 165-րդ հոդվածի 4-րդ մասն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել,*

41. *ՀՀ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ. «Միևնույն հիմքերով նույն դատավորի նկատմամբ հետագայում չի կարող հարուցվել կարգապահական վարույթ, իսկ հարուցված վարույթն ենթակա է կարճման, եթե այդ հիմքերով նախկինում Արդարադա-*

տության խորհուրդն արդեն կարճել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը։»,

42. *ՀՀ դատական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասը կարող է լրացվել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Արդարադատության խորհրդի որոշումներ կայացնելու համար առանձնացված խորհրդակցական սենյակը պետք է ապահովի խորհրդի անդամների քննարկումների լիարժեք գաղտնիությունը և բացառի արտաքին աշխարհի հետ որևէ կապը։ Խորհրդի անդամները չեն կարող լքել խորհրդակցական սենյակը մինչև համապատասխան որոշում կայացնելը։ Բացի նիստին մասնակցող Արդարադատության խորհրդի անդամներից, խորհրդակցական սենյակում չի կարող ներկա գտնվել որևէ այլ անձ, այդ թվում՝ նիստը վարող Վճռաբեկ դատարանի նախագահը։»։*

43. *ՀՀ դատական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասը նպատակահարմար է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին իր որոշումը վերանայելու անվերապահ հիմքեր են նոր երևան եկած, դատավորի համար բարենպաստ այն հանգամանքները, որոնք Արդարադատության խորհրդի, կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտի և կարգապահական տույժի ենթարկված դատավորի կանխից ու հնարավորություններից անկախ հայտնի չեն եղել ու չէին կարող հայտնի լինել կարգապահական վարույթի ողջ ընթացքում և էական նշանակություն ունեն նույն վարույթի ելքի համար։»,*

44. *նույն օրենսգրքի 164-րդ հոդվածի 7-րդ մասն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. «7. Հանրապետության Նախագահը միջնորդությունը սպանալու պահից տասնօրյա ժամկետում վերանշանակման եղանակով վերականգնում է դատավորին իր նախկինում զբաղեցրած, ներկայումս թափուր պաշտոնում կամ դրա անհնարինության դեպքում՝ դատավորի համաձայնությամբ նշանակում մեկ այլ դատարանի թափուր կամ նոր ստեղծված դատավորի պաշտոնում։ Դատավորի համաձայնության բացակայության դեպքում նշանակումը կատարվում է Արդարադատության խորհրդի համապատասխան եզրակացության հիման վրա։ Այդ դեպքում վերականգնված դատավորն իրավունք ունի, իսկ իրավասու մարմինը պարտավոր է հատուցել դատավորի հարկադիր պարապուրդում գտնվելու ողջ ժամանակահատվածի համար չստացված աշխատավարձը, հավելավճարները, ինչպես նաև գնահատել ու հատուցել նույն ժամանակահատվածում գործած, չօգտագործված արտոնությունները՝ առկայության դեպքում։»,*

45. *նույն օրենսգրքի 166.1-րդ հոդվածի 1-2-րդ մասերն անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ. «1. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից սույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարքագծի կանոնների խախտում կատարելու մասին հաղորդում ստանալով կամ նման փաստի մասին իրազեկվելով, իր իրավասության շրջանակում կազմակերպում է քննարկում՝ պատշաճ կերպով ապահովելով խախտում կատարած անձի մասնակցությունը և գրավոր կամ բանավոր բացատրություն տալու հնարավորությունը: 2. Եթե քննարկումից հետո Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը գտնում է, որ այդ խախտումները ակնհայտ ու կոպիտ չեն և չեն կրում պարբերական կամ սիստեմատիկ բնույթ, ապա նա կարող է սահմանափակվել հարցի քննարկմամբ՝ կայացնելով կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում: Հակառակ դեպքում նույն հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորների թեկնածություններին ցուցակում ընդգրկված անձի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին:»,*

46. *անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև մյուս իրավադրույթները, որոնք վերաբերում են Արդարադատության խորհրդի որպես դատարան գործելուն,*

47. *ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-7-րդ մասերը նպատակահարմար է շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<6. Արդարադատության խորհրդի վերջնական որոշումները, եզրակացությունները կամ առաջարկներն ուժի մեջ են մտնում նույն խորհրդի նիստում հրապարակման պահից տասը աշխատանքային օր հետո և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում կարող են բողոքարկվել (վիճարկվել) Հայաստանի Հանրապետության վարչական դատարան: Դատական կարգով Արդարադատության խորհրդի վերջնական որոշումների, եզրակացությունների կամ առաջարկների բողոքարկումը (վիճարկումը) կասեցնում է դրանց կատարումը՝ մինչև վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: 7. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության են-*

թարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումներն ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Արդարադատության խորհրդի մեսացած որոշումները և եզրակացություններն ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում հրապարակման պահից: Օրինական ուժի մեջ մտած, վեճն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվում է այն նույն եղանակով, ինչ դատական կարգով վիճարկվող որոշումը, եզրակացությունը կամ առաջարկը»:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱԽ Ֆրանսիայի մոդելը

	Քաղաքականություն մշակողի լիազորություններ	
	Արտաքին կապեր	
	Հանրային ծառայություններ	
	Համագործակցություն դատարանների հետ	
	Աշխատակազմի կառավարում	
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	√
	Հետազոտություններ	
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	√
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	
	Կառավարման լիազորություններ (վարչարարություն)	
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	
	Գործավարություն	
	Տեղեկատվություն	
	Բյուջետային լիազորություններ	
	Բյուջետային քաղաքականություն	
	Ֆոնդերի վերաբաշխում/ֆինանսավորում	
	Ծախսերի հաշվետվողականություն	
	Այլ լիազորություններ	
	Կարգապահական վարույթ	√
	Դատավորների նշանակում	√
	Դատավորների առաջխաղացում	√
	Դասընթացներ և վերապատրաստումներ	√

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱԽ Հայաստանի մոդելը

I.	**Քաղաքականություն մշակողի լիազորություններ**	
	Արտաքին կապեր	
	Հանրային ծառայություններ	
	Համագործակցություն դատարանների հետ	
	Աշխատակազմի կառավարում	
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	
	Հետազոտություններ	
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	√
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	
II.	**Կառավարման լիազորություններ (վարչարարություն)**	
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	
	Գործավարություն	
	Տեղեկատվություն	
III.	**Բյուջետային լիազորություններ**	
	Բյուջետային քաղաքականություն	
	Ֆոնդերի վերաբաշխում/ֆինանսավորում	
	Ծախսերի հաշվետվողականություն	
IV.	**Այլ լիազորություններ**	
	Կարգապահական վարույթ	√
	Դատավորների նշանակում	√
	Դատավորների առաջխաղացում	√
	Դասընթացներ և վերապատրաստումներ	

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱԽ Շվեդիայի մոդելը

I.	**Քաղաքականություն մշակողի լիազորություններ**	
	Արտաքին կապեր	√
	Հանրային ծառայություններ	√
	Համագործակցություն դատարանների հետ	
	Աշխատակազմի կառավարում	√
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	
	Հետազոտություններ	√
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	√
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	
	Կառավարման լիազորություններ (վարչարարություն)	
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	√
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	√
	Գործավարություն	√
	Տեղեկատվություն	√
	Բյուջետային լիազորություններ	
	Բյուջետային քաղաքականություն	√
	Ֆոնդերի վերաբաշխում/ֆինանսավորում	√
	Ծախսերի հաշվետվողականություն	√
	Այլ լիազորություններ	
	Կարգապահական վարույթ	
	Դատավորների նշանակում	
	Դատավորների առաջխաղացում	
	Դասընթացներ և վերապատրաստումներ	

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԱԽ Դանիայի մոդելը

I.	**Քաղաքականություն մշակողի լիազորություններ**	
	Արտաքին կապեր	√
	Հանրային ծառայություններ	√
	Համագործակցություն դատարանների հետ	
	Աշխատակազմի կառավարում	√
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	
	Հետազոտություններ	√
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	√
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	
II.	**Կառավարման լիազորություններ (վարչարարություն)**	
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	√
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	√
	Հաշվապահական գործառույթներ	√
	Տեղեկատվության տրամադրում	√
III.	**Բյուջետային լիազորություններ**	
	Բյուջետային քաղաքականություն	√
	Ֆոնդերի վերաբաշխում/ֆինանսավորում	√
	Ծախսերի հաշվետվողականություն	√
IV.	**Այլ լիազորություններ**	
	Կարգապահական վարույթներ	
	Դատավորների նշանակում	
	Դատավորների առաջխաղացում	
	Դասընթացներ և վերապատրաստումներ	

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ԱԽ Իտալիայի մոդելը

I.	**Քաղաքականություն մշակողի լիազորություններ**	
	Արտաքին կապեր	
	Հանրային ծառայություններ	
	Համագործակցություն դատարանների հետ	
	Աշխատակազմի կառավարում	
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	√
	Հետազոտություններ	√
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	√
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	
II.	**Կառավարման լիազորություններ (վարչարարություն)**	
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	
	Հաշվապահական գործառույթներ	
	Տեղեկատվության տրամադրում	
III.	**Բյուջետային լիազորություններ**	
	Բյուջետային քաղաքականություն	
	Ֆոնդերի վերաբաշխում/ֆինանսավորում	
	Ծախսերի հաշվետվողականություն	
IV.	**Այլ լիազորություններ**	
	Կարգապահական վարույթներ	√
	Դատավորների նշանակում	√
	Դատավորների առաջխաղացում	√
	Դասընթացներ և վերապատրաստումներ	√

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Դատական իշխանության կառավարումը

I.	**Քաղաքականություն մշակող գործառույթներ (լիազորություններ)**		
	Արտաքին կապեր	• Զանգվածային լրատվության միջոցների հետ դատարանների համագործակցության կանոնների մշակում և հաստատում,	ԴԵԽ Ընդհ. ժողով
	Հանրային ծառայություններ	----------	
	Համագործակցություն դատարանների հետ	----------	ԴԵԽ Դատակ. դեպարտ
	Աշխատակազմի կառավարում	• Կադրային քաղաքականության իրականացում	Դատակ. դեպարտ.
	Աշխատանքի ընդունման քաղաքականություն	•Դատական դեպարտամենտի ղեկավարի նշանակում և հետ կանչում, • դատական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում, • դատական ծառայության պաշտոնների անվանացանկի և հաստիքների քանակի հաստատում, • դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ մրցույթի անցկացման կարգի հաստատում, ինչպես նաև բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման կարգի, մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգի և դրանց աշխատակարգի հաստատում, • դատական ծառայողի գործունեության գնահատման կարգի, չափանիշների և բնութագրի ձևի հաստատում,	ԴԵԽ

	Հետազոտություններ	•Դատական պրակտիկայի և դատական վիճակագրության վերլուծում և ամփոփում	Դատակ. դեպարտ.
	Խորհրդատվություն Արդարադատության նախարարությանը կամ պետական այլ մարմիններին	• եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ • Իրավասու պետական մարմիններին առաջարկու–թյուններ է ներկայացնում օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ(դատ. օր. 72(3)(3))	ԱԽ ԴԵԽ Դատակ. դեպարտ.
	Դատական որակի բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում	• դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկում • Դատարանների գործավարության կանոնների հաստատում (դատ. օր. 72(3)(4)), • դատարանների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումների և առաջարկությունների մշակում և ներկայացում իրավասու պետական մարմիններին (Դատակ. օր. 72(3)(1)) • դատարանների և դատավորի անկախության հետ կապված կամ այն վտանգող յուրաքանչյուր հարցի քննարկում և առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններին դրանց լուծման վերաբերյալ (դատ. օր. 72(3)(2)) • դատավորի պատմուճանի նկարագրության, դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման ցանկի հաստատում:	

II	Կառավարման (վարչարարության) գործառույթներ		
	Աշխատանքային պայմաններ և անվտանգություն	• Տեխնիկական սպասարկում • Դատական կարգադրիչների ծառայության գործունեության համակարգում	Դատակ. դեպարտ.
	Ավտոմատ և էլեկտրոնային համակարգեր	• դատարանների պաշտոնական ինտերնետ կայքի աշխատանքի կազմակերպում • դատական նիստերի ձայնագրում, համակարգչային գործավարություն, www.datalex.am տեղեկատվական համակարգ	Դատակ. դեպարտ.
	Գործավարություն	• ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների իրականացում՝ ուղղված դատական իշխանության արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծմանը. • դատարանների, դատարանների նախագահների խորհրդի, դրա հանձնաժողովների, արդարադատության խորհրդի աշխատակազմի դերի իրականացում, • դատավորների ընդհանուր ժողովի, դատարանների նախագահների խորհրդի և դրա հանձնաժողովների նիստերի կազմակերպում, • դատավորների անձնական գործի վարում	Դատակ. դեպարտ.
	Տեղեկատվության տրամադրում	Դատական. իշխ. պաշտոնական կայք Վիճակագրության տրամադրում Դատարանների. բյուջեի հրապարակում Վճարված պետ. տուրքի չափը Կարգապ. վարույթների վիճակագրությ.	

III	**Բյուջետային գործառույթներ**		
	Բյուջետային քաղաքականություն	Բյուջետային հայտի հաստատում Միջնաժամկետ ծախսերի ծրագիր Պահուստային ֆոնդ Բյուջեի հաստատում	ԴԵԽ Կառավար.
	Ֆոնդերի վերաբաշխում/ ֆինանսավորում	• Բաշխում է դատարանների պահուստային ֆոնդի միջոցները • Բյուջետային հայտի պատրաստում • Միջնաժ. ծախսերի ծրագրի պատր. • Դատարանների ֆինանսավորում	ԴԵԽ Դատակ. դեպարտ.
	Ծախսերի հաշ– վետվողականություն	Դատարանների ծախսերի ծրագիր	Դատակ. դեպարտ.
IV	**Այլ գործառույթներ**		
	Կարգապահական վարույթ	• Դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատ– վության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին:	ԱԽ
	Դատավորների նշանակում	• Դատավորների թեկնածություն– ների ցուցակի կազմում և ներկա– յացում Հանրապետության Նախա– գահի հաստատմանը, • առաջին ատյանի դատարանի դատավորի և դատարանի նախա– գահի թափուր տեղերի համար թեկ– նածուների ներկայացում ԱԽ-ին • առաջին ատյանի դատարանի դատավորի և դատարանի նախա– գահի թափուր տեղերի համար թեկնածուների ցուցակների ներկայացնում Հանրապետության Նախագահին, • Վերաքննիչ և վճռաբեկ դատարան– ներում դատավորի թափուր տեղերի համար թեկնածուների առաջարկում ԱԽ-ին • առաջարկում է վճռաբեկ դա– տարանի, նրա պալատների նա– խագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները ՀՀ նախագահին:	

	Դատավորների առաջխաղացում	• Դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմում և ներկայացում Հանրապետության Նախագահի հաստատմանը	ԱԽ
	Դասընթացներ և վերապատրաս–տումներ	• Դատավորների, թեկնա–ծուների դասընթացներ և վերա–պատրաստում • Արդարադատության ակադեմիային է ներկայացնում առարկայական կուրսերի և թեմաների վերաբերյալ առաջարկություններ, փորձաշրջանի կազմակերպման համար համապատասխան դատարանների ցուցակը • Արդարադատության ակադեմիային է ներկայացնում առարկայական կուրսերի և թեմաների վերաբերյալ առաջարկություններ:	Արդարադ. Ակադ. (Արդար. Նախարա–րություն.) ԴԵԽ Դատ. Դեպ.

վաճառքի ենթակա չէ

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am